

Դ.Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԵՐԶՆԿԱՅԻ  
ԲԱՐԲԱՌԸ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР.  
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

Д. М. КОСТАНДЯН

# ЕРЗИНКАЙСКИЙ ДИАЛЕКТ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1979

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱԿՆԵՂԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Դ. Մ. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# Ե Ր Զ Ն Կ Ա Յ Ի Բ Ա Ր Բ Ա Ռ Ը

Աշխատությունը նվիրված է արևմտահայ խմբակցության շուտամնասիրված բարբառներից Երզնկայի բարբառի հետազոտությանը: Համաժամանակյա և տարածամանակյա մեթոդների համադրմամբ հանգամանորեն ներկայացված են Երզնկայի բարբառի հնչյունական և ձևաբանական համակարգերը, հետազոտված են բառապաշարի շերտերը և իմաստաբանական որոշ հարցեր: Տրչում է նաև բարբառի շարահյուսության վերաբերյալ համառոտ ակնարկ: Ուսումնասիրությունն ունի հավելված՝ պարբար-բարբառ, բարբառային բառերի բառարաններ, ինչպես նաև բարբառային տեքստեր:

Պատասխանատու խմբագիր  
բանասիրական գիտությունների դոկտոր  
Հ. Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կ  $\frac{70103}{703(02)}$  63—78  
—79

© 4602010000 Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979

## Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Փ

Երզնկան Բարձր Հայքի եկեղյաց գավառի կենտրոնն էր: Գավառը հյուսիսից սահմանակից էր Բաբերդին, հարավից՝ Դերսիմին (Մանաշաղի), արևելից՝ Դերջանին, արևմուտքից՝ Կամախին (Դարանաղի): Այն կոչվել է նաև Անահտական՝ Երզնկայում գտնվող Անահիտ աստվածուհու հուշակավոր տաճարի անունով:

Գավառը զբաղեցրել է հիմնականում Հյուսիսային և Ներքին Տավրոսի լեռներով շրջապատված ընդարձակ դաշտը՝ Արևմտյան Եփրատ գետով, որի ափին տարածված է Երզնկան:

Հայաստանի մյուս գավառների նման Երզնկան ևս օտարերկրյա ասպատակների կողմից շատ անգամ է ենթարկվել ավերի և կոդալուտի: Տարբեր դարերում նրան տիրել են բյուզանդացիները, արաբները, սելջուկ-թուրքերը, մոնղոլները, օսմանները: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, ֆաղափին հասկապես մեծ ավերածություններ են հասցվել 1243 թ. Բաշու խանի գլխավորած մոնղոլական զորքերի կողմից: Դրանց զուլմարվել են հանախակի կրկնվող երկրաշարժերը, որոնց պատճառած արհավիրքների մասին շատ կան հիշատակություններ (Մաաթեոս Ուոհայեցի, Առաֆել Դավրիժեցի): Առավել ահավորը տեղի է ունեցել 1784 թ., . որի հետևանքով կործանվել են ֆաղափի թաղամասերի մեծ մասը և շրջակա գյուղերը՝ իրենց բնակչությամբ:

Սակայն ամեն ավերից հետո Երզնկացու կառուցող և ստեղծագործող ոգին վերստին կանգուն է դարձել հայրենի բնօրրանը: Դրան նպաստել են նաև Երզնկայի բնական հարմարավետ դիրքը՝ առևտրական բանով ճանապարհի վրա գտնվելը (Երզնկայով էր անցնում Թավրիզ-Էրզրում-Սեբաստիա-Հալեպ տարանցիկ ճանապարհը):

Երզնկայի դաշտում, բացի նույնանուն ֆաղափից, կային բազմաթիվ հայաբնակ գյուղեր, որոնցից նշանավորներն են՝ Ագարակը, Երկանը, Թիլը, Կարմրին, Մթնին, Պզվանը, Վարի և Վերի Զիվթիկները,

Փրատիչը և այլն: Այդտեղ ծաղկում էին վանքեր, մենաստաններ, ագարակներ: Հայտնի էին նրա հանգստի տափ ջրերի բաղնիքները, որոնց գեղեցիկ շինություններով հիացած հուշեր է բողբլ վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոն, որը XIII դ. վերջին Չինաստան ուղևորվելիս եղել է նաև Երզնկայում:

Երզնկայում բարձր զարգացման էր հասել արհեստագործությունը: Այն նշակված էր պղնձագործությամբ, կտավագործությամբ: Այնտեղ գործում էին, Մարկո Պոլոյի արտահայտությամբ, «աշխարհի լավագույն բեհեզները», որոնց տեղի բնակիչները «մանուսա» էին անվանում: Երզնկայում մշակում էին բրինձ, բամբակ, խաղող և այլն:

Աղբյուրներում Երզնկան հորշորջվում է նաև Երեզ, Երիզավան, Երիզա, Արզնկա, Երզնկավ, Արզինջեան, Արզինկեան անվանումներով: Քաղաքը հիշատակվում է ուրարտական արձանագրություններում, Պրադունոսի, Խորենացու, Ագաթանգեղոսի մոտ:

Հայաստանի առաջին բաժանումից (387 թ.) հետո Երզնկան անցավ Բյուզանդիային: Եղել է Արշակ Գ թագավորի մայրաքաղաքը: V—VII դդ. այն եպիսկոպոսանիստ էր: XIII—XIV դդ. աչքի ընկնող հոգեվոր և մշակութային կենտրոն էր՝ շնորհիվ մերձակա Սեպուհի և Լուսավորչի լեռներում գտնվող մեծահռչակ վանքերի և անապատների, որտեղ գրվել և ընդօրինակվել են մեծ թվով ձեռագրեր: Այս շրջանում Երզնկայում են ապրել ու գործել Հովհաննես Պոլոզ Երզնկացին, Կոստանդին Երզնկացին, Մովսես Խրատագիրը և ուրիշներ:

XIII դ. արաբ պատմիչ Իբն Բատուտայի վկայությամբ Երզնկայի բնակչության մեծագույն մասը հայեր էին: 1915 թ. նախօրեին Երզնկայի բնակչության թիվը հասնում էր 40 հազարի, որից 15 հազարը՝ հայ: Հիմնական բնակիչները, բացի հայերից, կազմում էին քուրդներ, ֆրեքեր, հույներ, ասորիներ:

1886 թ. Երզնկայում կային 5 ազգային և 3 մասնավոր վարժարաններ: Դարասկզբին այնտեղ լույս էին տեսնում շաքաթաթերք և ամսաթերք: Հուշագիրները վկայում են, որ իրականության մեջ Երզնկան «չէր փալեր», այլ «կրվազէր», անհամեմատ առաջ անցնելով իր հարևաններից:

Երզնկացիների խոսակցական լեզուն դեռևս հնուց աչքի է ընկել պարզությամբ: Այդ մասին միջնադարյան հուշագիրը վկայում է, որ «Երզնկայի ժողովուրդը անցյալի նկատմամբ փաղափակբոված է, լեզուն և առօգանությունը մաքուր է, շատ քիչ աղավաղված բառեր կարտասա-

նի»<sup>2</sup>: Այդ հաստատում են բարբառի հետ այս կամ այն չափով առնչություն ունեցած հեղինակները<sup>3</sup>, ինչպես նաև իրենք՝ բարբառախոսները:

1915 թ. Մեծ եղեռնը ավերեց և բնաջնջեց նաև Երզնկայի գավառը, որտեղ մշակութային և տնտեսական կյանքը խաթարվել էր դեռևս 1895 թ.: Կոտորածից մազապուրծ երզնկացիները սփռվեցին աշխարհով մեկ՝ ԱՄՆ, Անգլիոյվկաս, Ռուսաստան, Ֆրանսիա, Եգիպտոս, Լիբանան և այլուր:

Կորցնելով հարազատ միջավայրը՝ Երզնկայի բարբառը այժմ անհետացման եզրին է, որն էլ ավելի հրատապ է դարձնում նրա ուսումնասիրությունը:

Երզնկայի բարբառի վերաբերյալ ընդհանուր բնույթի տեղեկություններ կան «Բյուրակն» հանդեսում<sup>4</sup>, որտեղ բերված է նաև ոչ գիտական տառադարձությամբ բարբառային տեքստ: Հետագայում Հ. Անադյանը իր «Հայ բարբառագիտության» մեջ բավարարվել է լուկ «Բյուրակն» տեքստից առնված մի հատվածով՝ առանց որոշելու Երզնկայի բարբառի հնչյունական և ձևաբանական առանձնահատկությունները: Այդ աշխատության մեջ *հարբերդ-երզնկայի բարբառ* անվան տակ ներկայացված համառոտ բնութայունը վերաբերում է բացառապես հարբերդի բարբառին<sup>5</sup>:

Երզնկայի բարբառի որոշ հատկանիշներ նշել և բառերի ոչ ծավալուն մի ցանկ է ներկայացրել Գ. Սյուրմենյանը: Բարբառը համեմատաբար ընդարձակ հետազոտել է Գ. Տեր-Վարդանյանը, որի աշխատությունն աչքի է ընկնում բարբառային բառերի հարստությամբ և դրանց զուգահեռ կիրառություններով: Սակայն բնությունը կատարված է ոչ բավարար խորությամբ. աննշտություններ կան հատկապես հնչյունաբանության բաժնում:

Ուսումնասիրության ընթացքում, օգտվելով նաև գրավոր աղբյուրներից, գերազանցապես հիմնվել ենք Սովետական Միության մի շարք վայրերում բնակվող, նաև ԱՄՆ-ից որպես զբոսաշրջիկներ հայրենիք

2 Ս. Էփրիկեան, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան*, Հ. Ա, Վենետիկ, 1902, էջ 632:

3 Գ. Սյուրմենյան, *Երզնկա, Գահիրե*, 1947, էջ 234, Ս. Մոցիկեան, *Արեւմտահայ աշխարհ, Նիւ-Եորք*, 1947, էջ 162, Գ. Տեր-Վարդանեան, *Երզնկա-Կամախ գաւառաբարբառը և ազգագրական յուշեր*, Երուսաղէմ, 1968, էջ 18:

4 «Բիւրակն», 1898, էջ 563—565, 1899, էջ 386—388:

5 Հ. Անտեան, *Հայ բարբառագիտութիւն, Մոսկվա—Նոր Նախիջևան*, 1911, էջ 167—172:

այցելած մի խումբ երգեցիկների կենդանի խոսքի անմիջական դի-  
տարկումների վրա: Նրանց սիրահոծար օգնությամբ հնարավոր դար-  
ձավ ամբողջական պատկերացում կազմել բարբառի մասին, որի համար  
մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Կարապետ և Աշխեն  
Մատինցյաններին, Մկրտիչ Գասպարյանին, Արամ Մարտիկյանին, Ար-  
մենունի և Նոյեմ Սրապյաններին, Մարիամ Թորոսյանին, Հայկազ Սար-  
գսյանին, Վարդան Մելիտոնյանին (Նրևան), Վահան Քենեյանին, Անդ-  
րանիկ Փալախյանին (Կրասնոդարի երկրամաս, Անապայի շրջան, գ.  
Պոբեդա), Մարիամ Ուրցյանին, Գառնիկ Գեմենջյանին (Վրաց. ՍՍՀ, Բ.  
Բաթում), Արամ Ազնավուրյանին, Արշակ Ալշյանին (ԱՄՆ):

## Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայ բարբառագիտության մեջ ընդունված է հարբերդի և Երզնկայի բարբառները դիտել որպես միևնույն՝ հարբերդ-Երզնկայի բարբառի խոսվածքներ: Այդ կարծիքը, որ առաջին անգամ հայտնել է մեծանուն լեզվաբան Հ. Աճառյանը<sup>6</sup>, հետագայում ուրիշների կողմից որդեգրվել է նույնությամբ<sup>7</sup>: Գ. Զահուկյանի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգմամբ ևս հարբերդի և Երզնկայի բարբառների փոխհարաբերության հարցը մնում է անփոփոխ<sup>8</sup>:

Միայն Գ. Տեր-Վարդանյանն է, որ իր «Երզնկա-Կամախ գավառաբարբառը և ազգագրական հուշեր» գրքում նշում է Երզնկայի և հարբերդի բարբառների մի քանի տարբերակիչ հատկանիշներ և դրանք համարում առանձին բարբառներ<sup>9</sup>: Սակայն դա արվում է առանց բարբառ և խոսվածք հասկացությունների գիտական որոշակի տարբերակման, այլև՝ առանց դրանց սահմանները որոշող որևէ ընդունված չափանիշի հաշվառման:

Հարբերդի և Երզնկայի բարբառների համեմատական ուսումնասիրությունը մենք կատարել ենք Գ. Զահուկյանի մշակած 100 տարբերակիչ հատկանիշների հիման վրա: Միաժամանակ հաշվի են առնված այնպիսի բարբառային հատկանիշներ, որոնք էական են այդ երկու բարբառները իրարից հստակորեն զատորոշելու համար (նման հատկանիշները ցույց ենք տվել \* նշանով):

Ինչպես Երզ., այնպես էլ հրբ. բարբառի հնչույթային համակարգում բացի հայերենի ա, ի, ու, օ, է, ը ձայնավորներից (բոլորն էլ հան-

6 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, նույնի՝ Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951:

7 Հմմտ. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957, Ռ. Բաղդասյան, Դերսիմի բարբառային բարոնզը, Երևան, 1960 և այլն:

8 Գ. Բ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

9 Ի. Տեր-Վարդանյան, նշվ. աշխ.

դեպ են գալիս հնչույթային արժեքով), իմաստակիր միավոր է նաև առաջին շարքի ստորին դիրքի և՛ ձայնավորը: Սակայն, եթե *Երզ.* բարբառում և՛-ի հակադրությունը իր մերձավորագույն հնչյունին՝ ա-ին, արտահայտվում է հիմնականում փոխառյալ բառերում՝ *բառ* (բար), *քաղ* (շահ), *համ* (համ ու հոտ)-*համ* (և... և), ապա *Երզ.* ա-ն հակադրություն, փոխառյալ բառերից է՛լ ավելի շատ, ստեղծվում է հայերեն բառերում՝ լան (լալ բայի ըղձ. հոգ. *Յ-րդ դ.*)-լան (լայն), կալ (գալ)-կան (գալ), վառ (վար ու ցանք)-վառ (վայր) և այլն: Սա բացատրվում է նրանով, որ *Երզ.* և՛-ն հանդես է գալիս հիմնականում փոխառյալ և ընդամենը մի քանի հայերեն բառերում: Մինչդեռ *Երզ.* բարբառում և՛-ն ունի անհամեմատ մեծ հաճախականություն: Բացի փոխառյալ բառերից, այստեղ և՛ կա հայերենի այ-ի դիմաց՝ *հառ* < *հայր*, *մառ* < *մայր*, *լան* < *լայն*, *ծան* < *ձայն*, *ախպար* < *եղբայր*, *աս* < *այս*, *ինչպես* նաև բազմաթիվ բառերում, որոնցում և՛-ի դրսևորումը հնարավոր չէ բացատրել որևէ միասնական օրինաչափությամբ՝ *ալի* < *ալիւր*, *հառ* < *հառիւր*, *աբի* < *աբիւն*, *վառ* < *վառժ*, *հալի* < *հալել*, *կաթիլ* < *կաթիլ* և այլն:

Ա՛-ի դրսևորման ուղորտները, ինչպես նաև նրա տարբեր հաճախականությունները *Երզ.* և *Երզ.* բարբառների միջև գծում են հետևյալ տարբերությունը.

\*1. Ա՛-ի գոյությունը *Երզ.* բարբառի հնչույթային համակարգում ներքին զարգացման արդյունք է, իսկ *Երզ.* բարբառում հետևանք է օտար լեզուների (թուրքերենի, պարսկերենի, արաբերենի) և հարևան բարբառների, այլ կերպ ասած՝ արտաքին ազդեցության<sup>10</sup>. Միաժամանակ և՛-ի բարձր հաճախականության հետևանքով ա-ի քմայնացումը *Երզ.* բարբառի հնչյունական համակարգում էական, որակական հատկանիշ է, իսկ *Երզ.* բարբառում ա-ի քմայնացումը սահմանափակվում է ածանցյալ, երկրորդական հատկանիշի շրջանակներում:

Ա՛-ի ցածր հաճախականությամբ *Երզ.* բարբառը մոտենում է ա-ի քմայնացումից ազատ բարբառներին և հեռանում *Երզ.*, Արաբկիրի,

10 Ի դեպ, Գ. Զահուկյանը «Հայ բարբառագիտության ներածություն» մեջ նշում է, որ բարբառներում քմայնացումը կարող է լինել ինչպես ներքին (ձայնեղների խլացումն աղնկցող) պրոցես, այնպես էլ ենթաշերտային (սուբստրատային) կամ առշերտային (ադստրատային) ազդեցության արդյունք: Սակայն սա իբրև բարբառային հատկանիշ չի արտացոլվել նրա առաջադրած 100 բարբառային հատկանիշների մեջ:

Ձեյթոնի, Քեսարի, Նիկոմեդիայի, Համշենի, Տիգրանակերտի և այլ բարբառներից:

Քննվող երկու բարբառները կարևոր տարբերություններ են երևան հանում ձայնավորների և երկբարբառների պատմական հնչյունափոխության մեջ:

2. Երգ բարբառում միավանկ բառերի սկզբում *ն-ից* առաջ ավելանում է շրթնային վ, իսկ *հրբ.* բարբառում պահպանվում է գրաբարյան հնչումը՝ *օ. ռսպն, ողբ, որդն, որբ, ործ>երգ. վօսպ, վօխպ, վօրք, վօրփ, վօրց, հրբ. օսպ, օխպ, օրք, օրփ, օրց:*

Երկու բարբառները, որպես ընդհանրություն, միավանկ բառերի բառասկզբի *ն-ի* դիմաց *օ* ունեն ոտն>օմկ, որ>օր (շաղկապ) և *ն-ի* դիմաց *վօ* ունեն ով>վօվ բառերում:

Միավանկ բառերում *ն-ից* առաջ շրթնային տարրի հավելումով *Երգ. բրբռ.* ընդհանրություն է հանդես բերում Կարնո, Վանի, Մուշե, Տիգրանակերտի, Հադրութի, Շամախի, Առախալի և մի շարք այլ բարբառների հետ, իսկ *հրբ.* բրբռ. *ն~օ* համապատասխանությամբ զուգաբանություններ է գծում Մալաթիայի, Կեսարիայի, Սասունի բարբառների հետ:

3. Այ երկբարբառի դիմաց շեշտի տակ փակ վանկում և բառասկզբում *Երգ. բրբռ.* ունի ետին շարքի ձայնավոր՝ *ա, իսկ հրբ. բրբռ.* առաջին շարքի ձայնավոր՝ *ն.* այսօր, գայլ, փայտ, ծայր>Երգ. աւօր, կալ, փատ, ծաւ, հրբ. նւօր, կնլ, փնղ, ճաւ:

Այստեղ երկու բարբառները ընդհանրություն են հանդես բերում այգի>էֆի բառում, ուր այ-ի դիմաց երկուսն էլ ունեն է (որպես շեղում օրինաչափությունից): Սա բնորոշ է ոչ միայն հիշյալ, այլև արևմտյան խմբակցության գրեթե բոլոր բարբառներին:

Այ>ա հնչյունափոխությամբ *Երգ. բրբռ.* շփման կետեր է հանդես բերում Պուլի, մասամբ Կարնո, Շապին-Գարահիսարի, Տրապիզոնի, Արաբկիրի, Ակնա բարբառների հետ, իսկ *հրբ. բրբռ.* իր այ>ն հնչյունափոխությամբ մոտենում է բմայնացած ձայնավորներ ունեցող բարբառներին:

4. Իւ-ը շեշտի տակ *Երգ. բարբառում* տալիս է ետնալեզվային շրթնային ու, իսկ *հրբ. բարբառում* առաջնալեզվային ոչ շրթնային ի. ա-րին, ալիւր, աղբիւր, հարիւր>Երգ. աւուն, ալոււր, ախպոււր, հաւոււր, հրբ. նարին, նլիւր, ախպիւր, հնարիւր:

Միավանկ բառերում *և* *Երգ. բրբռ.* պահպանում է իւ>ու օրինա-

չափությունը, իսկ *հրբ.* բարբառում այս դեպքում իւ-ի դիմաց թուկա է օ. ձին, սին, ձիւթ>երգ. ծուն, սուն, ծութ, *հրբ.* ծօն, սօն, ծօթ:

Ի>ու հնչյունափոխությամբ Երզնկան զուգաբանություններ է դրսևորում Պոլսի, Եվդոկիայի, Սեբաստիայի, Տրապիզոնի, Համշենի, Կարնո, Թիֆլիսի, Ակնա և այլ բարբառների հետ, իսկ *հրբ.* բրբռ. ի>ի հնչյունափոխությամբ՝ Մալաթիայի, Տիգրանակերտի, Արարատյան բարբառների հետ:

5. Գրաբարյան ոյ-ին շեշտի տակ Երզ. բարբառում համապատասխանում է ու, իսկ *հրբ.*՝ օ. քոյր, բոյն, լոյս, կապոյտ>երգ. քուր, պուն, լուս, կարուտ, *հրբ.* for, պօն, լօս, գաբօդ:

Ոյ>ու անցմամբ զուգաբանությունների խիտ ցանց է գծվում Երզ., Պոլսի, Տրապիզոնի, Համշենի, Տիգրանակերտի, Ռոդոսթոյի, Եվդոկիայի, Սեբաստիայի, Ակնա, Թիֆլիսի, Կարնո բարբառների միջև, իսկ ոյ>օ փոփոխությամբ՝ *հրբ.*, Մալաթիայի, Եդեսիայի, մասամբ՝ Վանի, Շատախի բարբառների միջև:

\*6. Երգ. և *հրբ.* բարբառները կարևոր տարբերություններ են դրսևավորում շեշտի հետ կապված հնչյունափոխության ժամանակ: Խարբերդում ընդհանրապես ձայնավորներն ավելի կայուն են, և շեշտազրկությունը հիմնականում չի ազդում նրանց որակի վրա:

Հայերենի համար այնպիսի թույլ ձայնավորներ, ինչպիսիք ու-ն և ի-ն են, զրկվելով շեշտից, Երզ. բարբառում ավելի հաճախ ընկնում են կամ հնչյունափոխվում Ե-ի, մինչդեռ *հրբ.* բարբառում դրանք հիմնականում մնում են անհնչյունափոխ: Այսպես՝ ջուր, կադու, միս, գինի—սեռ.—տրակ.>Երգ. ճրբին, կադվին, մրսին, կինուն, *հրբ.* ճուրին, գադուին, միսին, կինիին: Այլ կերպ ասած, *հրբ.* բարբառին հատուկ չէ ձայնավորների սղման օրենքը, որով նա մոտենում է Պոլսի բարբառին: Իսկ Երզ. բրբռ. այս տեսակետից զրավում է միջին դիրք, որովհետև վերջին վանկում ու, ի ունեցող բառերի թեքումը կատարվում է զուգահեռ ձևերով՝ և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ հիմքերով՝ ճուրին||ճրբին, կադվին||կադուին, մրսին||միսին, կինուն||կինիին:

\*7. Երգ. բարբառի պայթական և կիսաշփական բաղաձայնների համակարգը հիմնված է շնչեղություն-ոչ շնչեղություն հակադրության, իսկ *հրբ.* բարբառինը՝ ձայնեղություն-խուրություն-շնչեղ խուրություն հակադրության վրա: Երգ. բարբառում բացառված է խուրություն-ձայնեղություն հակադրությունը, որովհետև խուրերն ու ձայնեղներն այստեղ նույն դիրքում հանդես չեն գալիս (մանրամասն տե՛ս «Շնչույթային համակարգը» բաժնում): Մինչդեռ *հրբ.* բարբառում ձայնեղ, խուր և շնչեղ

խուլ պայթականների ու կիսաշփականների՝ բ, պ, փ, գ, կ, ֆ, դ, տ, ք, ձ, ծ, ց, ջ, ճ, չ շարքերի միավորները հանդես են գալիս նույն դիրքում, հակադրվում են իրար և կատարում իմաստազատիչ դեր:

Այսպես՝ կալ (գալ)-գալ (կալ՝ ցորենի)-ֆալ (խակ, չհասունացած), պանի՛ր (բանի՛ր, աշխատի՛ր)-բանի՛ր (պանի՛ր), տուֆ (դուբ)-թուֆ (թուբ) և այլն:

Օրինակները հաստատում են պայթական ու կիսաշփական խուլների, ձայնեղների և շնչեղ խուլների՝ հորք. բարբառում ինքնուրույն հնչույթներ լինելը: Դրան հակառակ, Երզ. անկախ հնչույթներ են միայն շնչեղ խուլները, իսկ խուլներն ու ձայնեղները հանդիսանում են միևնույն հնչույթի ենթահնչույթներ:

8. հորք. բարբառին բառակզբում հատուկ է խուլ պայթականների ու կիսաշփականների ձայնեղություն. պ, տ, կ, ծ, ց >բ, դ, գ, ձ, ջ. պատ>բաղ, տարի>դարի, կատու>գաղու, ժառ>ձառ, ճակատ>ջազաղ: նույն դիրքում Երզ. խուլները պահպանվում են. պատ, տառի, կաղու, ծառ, ցագատ:

Երկու բարբառներն էլ բառակզբի ձայնեղ պայթականների ու կիսաշփականների դիմաց ունեն խուլ պայթականներ ու կիսաշփականներ, որով ստացվում է երկաստիճան ձայնեղագուրկ բաղաձայնական համակարգ Երզ. բարբառում (բ>պ, չ>պ, փ>փ) և եռաստիճան՝ միջին հայերենի կիլիկյան տարբերակի բաղաձայնական համակարգ հորք. բարբառում (բ>պ, պ>բ, փ>փ):

Մասնագիտական գրականության մեջ հարբերդ-Երզնկայի բրբռ. ներկայացված է որպես եռաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ ունեցող բրբռ. (բ՛, բ, փ)<sup>11</sup>:

Ուսումնասիրության ընթացքում ո՛չ հարբերդի, և ո՛չ էլ Երզնկայի բարբառներում չենք նկատել շնչեղ ձայնեղների առկայություն: Ավելին. Երզ. բրբռ. բառակզբի անկախ դիրքում չունի նույնիսկ ձայնեղություն: Իսկ հորք. բարբառում գրաբարյան ձայնեղները խլացել են, խուլների դի-

11 Տե՛ս Աճառյանի, Ղարիբյանի, Գրիգորյանի, Բաղդամյանի աշխատություններում: Ղարիբյանի «Համառոտություն հայ բարբառագիտության» ուսումնասիրության (1941) մեջ հորք. բրբռ. դրված է միջին հայերենի բաղաձայնական համակարգ ունեցող բարբառների շարքում: Սակայն հետագա իր աշխատություններում, ցավոք, հեղինակն այն տարել է եռաստիճան խլազուրկ համակարգ ունեցող բարբառների շարքը: Գրիգորյանի դասընթացի մի բաժնում նույնպես հորք. բարբառին վերագրված է միջին հայերենի (այսինքն՝ կիլիկյան) բաղաձայնական համակարգ, մինչդեռ զրբի այլ հատվածներում այն հիշատակվում է իբրև եռաստիճան խլազուրկ համակարգով բարբառ:

մաց է, որ բարբառն ունի ձայնեղներ, իսկ խուլից շնչեղ ձայնեղի առաջացում հայոց լեզվի պատմության մեջ չի հավաստված, հետևաբար բացառվում է շնչեղ ձայնեղի գոյությունը նաև իրբ. բարբառում:

9. Երզնկայի բարբառում ու-ն և ր-ն հնչյունաբանական մակարդակում միմյանցից հատակորեն տարբերակվում են, հնչույթային համակարգում անկախ հնչույթներ են, որը երևում է նվազագույն զույգերի հակադրությունից. ուռ (ուռեցք)-ուր (ուռ, ընտանի կենդանիների ստինք), առուն (առուկ)-արուն (արյուն):

Իրբ. բարբառի ձայնորդ հնչույթների համակարգում պակասում է ո հնչույթը: Այն վերածվել է ր-ի: Այս պատճառով առաջացած համանունների (օրինակ, արո՛ւ՝ և՛ «առու», և՛ «արու»), իմաստային տարբերակումը իրականացվում է կոնտեքստում: Իրբ. բարբառում ո է հնչվում հիմնականում բնածայն բառերում: Այս դեպքում էլ չկա ո-ր հակադրություն, ուստի և ո-ն բարբառի ձայնորդների համակարգում հնչույթ չէ:

Ռ > ր փոփոխությամբ իրբ. բրբռ. զուգաբանություն է հանդես բերում Մալաթիայի, Սուշավայի, Թիֆլիսի բարբառների հետ և հետևանքով Երզնկա, Պոլիս, Տրապիզոն, Կարին, Մուշ բարբառախմբից:

10. Իրբ. բարբառում հ կա միայն բառասկզբի դիրքում, մնացած դիրքերում հ-ն կամ ընկնում է, կամ նրա դիմաց առկա է յ: Երգ բրբռ. հ ունի բոլոր դիրքերում (բացի ր-ից հետո եկող դիրքը). պահել, սահել, սահման, շահ, մահ, բահ > Երգ. պահել, սահիլ, սահման, շան, ման, պան, իրբ. բիլել, սայիլ, սայման, շայ, մայ, պայ:

Հ > յ փոփոխությամբ իրբ. բարբառը շփման մեջ է մտնում Մշո, Մալաթիայի, Ակնա բարբառների հետ, իսկ ընդհանրապես հ հընչյունի սակավությամբ Վանի, Մշո բարբառների հետ միասին յուրահատուկ տեղ է գրավում հայ բարբառների մեջ:

11. Նր հնչյունակապակցության դիմաց Երգ. բրբռ. ունի ո, իսկ իրբ. բրբռ.՝ յր. սանր, մանր, մանրուք, ծանր > Երգ. սառ, մառ, մառուֆ, ծառ, իրբ. սայր, մայր, մայրուֆ, ձայր:

12. Տր հնչյունախմբին (ինչպես նաև բարբառի դ-ին) Երգ. համապատասխանում է ո, իսկ իրբ.՝ յր. կոտրել, կտրել, ընտրել, Պետրոս, կտրիճ > Երգ. կոռել, կրոել, հրոել, Պէոս, կրոին, իրբ. գոյրել, գըյրել, հըյրել, Բէյրոս, գըյրիչ:

Հիշյալ երկու կետերում Երգ. բրբռ. ընդհանրություն է երևան հանում Եվդոկիայի, Շապին-Գարահիսարի, մասամբ Կարնո, իսկ իրբ.՝ Ակնա և Արլանբեկի բարբառների հետ:

13. Տ-ն (ինչպես նաև բարբառի դ-ն) ն-ից առաջ իրբ. բարբառում

ենթարկվել է առնմանական փոփոխության (տն > նն), իսկ Երզ. նման փոփոխություն տեղի չի ունեցել. մտ(ա)նել, գիտ(ե)նալ, մատնոց, յայտնել > Երզ. մրդնալ, կիդնալ, մադնոց, հայդնել, հրբ. մրննիլ, կիննալ, մաննոյ, հայննել:

Առնմանական այս փոփոխությամբ հրբ. բրբռ. հարում է Ակնա, Տիգրանակերտի, Երևանի, Ղարաբաղի բարբառներին:

14. Բառասկզբի սպ, ստ կապակցությունների ս-ն հրբ. բարբառում ընկել է: Երզ. բարբառում նույն հնչյունախմբերը մնալով անփոփոխ, սկզբից ավելացնում են նաև ը. սպանանել, սպիտակ, ստեղծանել, Ստեփան, ստեղ > Երզ. ըսպաննել, ըսպիդակ, ըստեղծել, ըստեփան, ըստեղչ, հրբ. բաննել, բիդագ, դեղծել, Գեփան, դեղչ:

Երզ. համար այս հատկանիշի բացառություն է ստեպղին բառը, որը ս-ի անկումով դարձել է տեղրին||տեղրինդ: Այս ձևը, սակայն, պետք է ենթադրել, որ փոխառություն է հարևան բարբառներից, թերևս հենց հարբերդից:

Սպ, ստ հնչյունակապակցությունների ս-ի անկումով հրբ. բրբռ. նման է Մալաթիայի բարբառին:

Այժմ քննենք այն տարբերությունները, որ Երզ. և հրբ. բարբառները ունեն ձևաբանական մակարդակում, որն ավելի էական է ամեն մի լեզվական համակարգի յուրահատկությունը բացահայտելիս:

15. —ստան ձևույթը հրբ. բարբառում դրվում է ի-ով ավարտվող մի շարք բազմավանկ բառերի վրա և ցույց է տալիս բուն հոգնակիություն, սակավ դեպքերում միայն՝ հավաքականություն, տեղ, վայր. էֆեստան (այգիներ և այգիների վայր), հոֆեստան (հոգիներ), հօրեստան (ջորիներ), ուրեստան (ուռիներ): Երզ. բարբառում այն դրվում է այգի, գինի, ծառ բառերի վրա՝ էֆեստան, կինեստան (գինեատուն), ծառաստան, բոլորն էլ տեղի, վայրի նշանակությամբ:

16. հրբ. բարբառում մարմնի զույգ անդամ ցույց տվող բառերը -է հոգնակերտին զուգահեռ ստանում են նաև -վի (երկակիություն արտահայտող) ձևույթը՝ օդվի (ոտքեր), ծնւրվի (ձեռքեր), ձուռգվի (ծընկներ), աշվի (աշքեր), ունեվի (հոնքեր), անգրջվի (ականջներ): Այստեղ կա նույնիսկ պլեռանվի (բերաններ)՝ կազմված մարմնի մաս ցույց տվող մյուս բառերի համաբանությամբ: Երզ. բարբառում հիշյալ բառերը ստանում են ոչ թե մաքուր -վի, այլ -նի-ով բարդված վրնի, որը բուն հոգնակերտ չէ, այլ ստացական հոգնանիշ ձևույթ (տն՝ս «Գոյականի թվի կարգը» բաժինը):

17. Եթե Երզ. բրբռ. ունի հոլովման տարբեր տիպեր (ի, օ, ա, ան, վա, օշ, օ, ց), որոնք հիմնականում գալիս են հոլովման հին լամակարգից (հնչունափոխական կամ համաբանական կազմություններով), ապա Խրբ. բրբռ. հիմնականում միասնականացրել է դրանք բերելով ի հոլովման տակ: Քիչ թվով բառեր միայն ստանում են ի-ից տարբեր այլ հոլովակերտներ: Այսպես՝ գինի, տուն, լեռ, բնկեր. սեռ. տրակ > Երզ. կինուն||կինին, տան||տունին, լեռան, բնգեւոշ, Խրբ. կինին, դունին, լաւին, բնգեւին:

18. Խրբ. բարբառում ձայնավորով վերջացող միավանկ բառերը և հոգը կայունացրել են իբրեւ արմատական հնչյուն, և հոգառության դեպքում դրանք ստանում են ը, որով պատմականորեն ստացվում է կրկնակի հոգառություն. Մինք գաբէցի՞ր (Ձին կապեցի՞ր): Քինք դո՛ւր ինձի (Քին տուր ինձ): Լունք շատցէր է (Լուն շատացել է): Նման երևույթ Երզ. բարբառին անծանոթ է:

19. Երզ. բարբառին բնորոշ են -(ի)-կ-ով (իկ, իգ, գ) դերանվանական կազմությունները՝ ասիգա, աղիգա, անիգա, ասանգ, աղանգ, անանգ, ֆուգին, որպիսիք իսպառ բացակայում են Խրբ. բարբառում: Այստեղ հիշյալ դերանուններն ունեն անի, անի, անի, սաբէս, դաբէս, անբէս, ֆուլուն ձևերը:

\*20. Ստացական դերանունները Երզ. բարբառում ստանում են ի հոլովակերտը, Խրբ. բարբառում՝ ու. իմ, քո, մեր, ձեր > Երզ. իմին, քուգին, մէրին, ձերին, Խրբ. իմուն, քուվուն, մէրուն, ձերուն:

Երզ. և Խրբ. բարբառները կարևոր տարբերություններ են երևան հանում նաև խոնարհման համակարգում:

\*21. Երզնկան, բարբառների մեծագույն մասի նման, օժանդակ բայի ներկա ժամանակի հոգ. թ. 1-ին դ. գրաբարի մ-ի դիմաց ունի և, իսկ անցյալ ժամանակում առկա է հավելյալ և. եմ > իմ, էմ > էմ: Մինչդեռ Խրբ. բրբռ. ավելի հարազատ է գրաբարին: Այստեղ անցյալի կազմության համաբանությամբ դուրս է մղվել նաև ներկայի մ-ն. եմք > իք, էմք > էք: Այս վերջավորությունները պահպանվում են խոնարհման բոլոր տիպերում, բոլոր եղանակների բոլոր ժամանակաձևերում՝ ստեղծելով նկատելի տարբերություն երկու բարբառների խոնարհման հարացույցներում: Այսպես՝ վազենք, վազենիք, վազեցինք > Երզ. վազինք, վազէանք, վազեցինք, Խրբ. վազիք, վազէաք, վազեցիք: Բացի այդ, Երզ. բարբառում կատարյալ ավարտին է հասել բայական համակարգում ղնգայիններից առաջ ե լծորդի ի-ի վերածվելու պրոցեսը, իսկ Խրբ. բար-

բառում հոգ. 3-րդ դ. ե-ն մնացել է անփոփոխ: Օրինակ՝ բերեմ, բերենք, բերեն > Երզ. պէրիմ, պէրիմֆ, պէրիմ, հրբ. պէրիմ, պէրիֆ, պէրէն:

\*22. Երզ. բրբռ. ե և ի խոնարհման անաժանց բայերի հրամ. եզ. եզ. թվում ունի միևնույն է վերջավորությունը, իսկ հրբ. բարբառում ե խոնարհման բայերն ունեն է, ի խոնարհման բայերը՝ ի՛ր վերջավորությունները. Երզ. խըմէ, նըստէ, հրբ. խըմէ, նըստի՛ր:

23. Երզնկայի բարբառում ապ. ժամ. կազմվում է պիտի > պիդի բառով կամ նրա առաջին բաղադրիչով՝ պի, պ-ով, իսկ հարբերդում՝ նույն բառի երկրորդ բաղադրիչով՝ դի, դը, դ-ով. Երզ. պի խըմիմ, պէթամ, հրբ. դը խըմիմ, դէթամ:

\*24. Ապ. ժամ. ժխտական ձևերում Երզ. բարբառում ժխտականի մասնիկը դրվում է պիտի-ից հետո, հրբ. բարբառում՝ դրանից առաջ. Երզ. պի չի նըստիմ, հրբ. չի դի նըստիմ:

\*25. Տալ, գալ, լալ միավանկ բայերի խոնարհման ժամանակ հրբ. բարբառում ապ. ժամանակում դի, դը մասնիկները դառնում են դու՝ նույն բայերի ներկա ժամ. հանդես եկող գու-ի համաբանությամբ. դու գամ, դու դամ, դու լամ (պիտի գամ, տամ, լամ): Նման հնչյունափոխություն Երզ. բարբառում գոյություն չունի:

26. հրբ. բարբառի ենթաբարբառներում (Չմշկածագ, Չարսանճագ և այլն) ներկայի և անկատարի շարունակականի ձևեր են կազմվում նը մասնիկով: Երզ. բարբառի տարածքում չկան շարունակականի ձևեր:

Երզնկայի և հարբերդի բարբառներն ունեն նաև հնչյունական ու քերականական մի շարք այլ մասնակի տարբերություններ, որոնց չինք անդրադառնում:

Քննվող բարբառները նկատելիորեն տարբերվում են նաև բառային մակարդակում: Ոչ սակավ դեպքերում միևնույն հասկացության համար նրանք ունեն տարբեր բառեր:

Այսպես՝ նայել, հոգնել, տանիք, պապ, ծիրան, շեմ, կզակ, ինչո՞ւ, դագաղ > Երզ. հա՛իլ, օկնիլ, էրթիֆ, պապ||պարուկ, պարգուկ, սէմ||շէմ, շանա, ի՞նչ||ի՞նչո՞ւ, ճախփ, հրբ. հա՛իլ, խօնջընալ, դէնէր, դա՛դա||ափա՛ռ, մըշմիշ, էշիգ, թուշ, օ՛րի||ի՞նչ, գաթաղ և այլն:

Զուգադրական քննությունից երևում է, որ հրբ. և Երզ. բարբառները հնչյունաբանական, ձևաբանական և բառային մակարդակներում երևան են հանում էական, բարբառային սահմաններ գծող տարբերություններ: Այդ բարբառների միջև ընդհանրություններն այնքան են, որքան միմյանց հետ ունեն արևմտյան խմբակցության բարբառներն

ընդհանրապես: Երգ. բրբռ. ամբողջությամբ ավելի մոտ է Պոլիի բարբառին: Ակնառու է հրբ. բարբառի ընդհանրությունը Մալաթիայի, Արաբկիրի, Ակնա բարբառների հետ:

հրբ. և Երգ. բարբառները ձևաբանական միահատկանիշ դասակարգմամբ պատկանում են կը ճյուղին: Աճառայնի այն միտքը, թե «...հարբերդ-Երզնկայի բարբառը կը ճյուղի բարբառների մեջ ամենից ավելի հավատարիմն է գրական հայերենին, ճիշտ ինչպես Երևանի բարբառը ում ճյուղի բարբառների մեջ»<sup>12</sup>, պետք է մասնավորեցնել Երգ. բարբառի համար, որովհետև Երգ., ի տարբերություն հրբ., ունի բարբառային հատկանիշների համեմատաբար նոսր ցանց: Նրա շեղումները աշխարհաբարի (հատկապես արևմտահայ գրական լեզվի) համակարգից մեծ չեն<sup>13</sup>: Չի խաթարված հատկապես ձայնավորների համակարգը, որի պատճառով բրբռ. պարզ, դյուր հասկանալի խոսակցական է: Ենելով վերը բերված տարբերակիչ հատկանիշներից, մենք կարծում ենք, որ հրբ. և Երգ. բարբառները պետք է համարել առանձին, ինքնուրույն բարբառներ:

Խարբերդի բարբառի ուսումնասիրությունը թողնելով ապագային, մենք այստեղ ներկայացնում ենք հիմնականում Երզնկա քաղաքի, մասամբ նաև գավառի դյուղերի (Վերին Զիվթիկ, Ղարաքիլիսա, Ագաբակ, Երկան, Մթնի, Կարմրի) բարբառային իրողությունների քննությունը:

---

12 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, էջ 343:

13 Հավանաբար արևմտահայ գրական լեզվի ձևավորման մեջ էական դեր է խաղացել նաև Երզնկայի բարբառը:

## Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ՀՆՉՅՈՒՆԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Բարբառում կան հետևյալ ձայնավոր հնչյունները. ա, ի, ու, օ, է, ը, է, փ, փ, փ, օ:

Ա, ի, ու, է, օ, ը-ն արտասանությամբ չեն տարբերվում գրական լեզվի նույն ձայնավորների արտասանությունից:

Ֆ, փ, օ-ն ներկայացնում են համապատասխան ձայնավորների քմային արտասանությունը:

Է-ն իր արտասանությամբ գրավում է միջին դիրք է և փ ձայնավորների միջև:

Բաղաձայնների համակարգը գրական լեզվի համեմատությամբ նորություն չի պարունակում: Հնչյունական մակարդակում պայթական ու կիսաշփական հնչյունները ներկայացնում են եռանդամ համակարգ՝ բ, պ, փ, գ, կ, ֆ, դ, ա, ք, ձ, ծ, զ, ը, ն, չ: Սրանցից գ-կ-ֆ շարքը փոխառյալ բառերում հանդես է գալիս նաև քմային տարբերակով՝ գ՛-կ՛-ֆ՛:

Շփական հնչյունները, բացի կոկորդային հ-ից, երկանդամ են՝ առաջնալեզվային՝ գ-ս, ժ-շ, ետնալեզվային՝ դ-խ, շրթնատամնային՝ վ-ֆ:

Ձայնորդները, բացառությամբ ու-ր-ի, մենանդամ են՝ մ, ն, լ, յ: Բարբառին հատուկ չեն երկբարբառներ և եռաբարբառներ:

### ՀՆՉՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ձայնավոր հնչույթներ: Ա, ի, ու, օ-ն չունեն գործառական ոլորտների սահմանափակում. դրանք ազատորեն հանդես են գալիս բառասկզբում, բառամիջում և բառավերջում, բաց ու փակ վանկերում, շեշտի տակ և շեշտանախորդ դիրքերում: Սա ինքնին նշանակում է, որ [Ա], [Ի], [ՈՒ], [Օ] ձայնավորներից յուրաքանչյուրը լեզվական անկախ միավոր է, հնչույթ է:

է-ի համար կա բացառված մեկ դիրք՝ ա-ից առաջ գտնվող դիրքը, ուր առկա է Է հնչյուն. պէն, լէն, հէնու, ծէնօ, էնսուն (բեռ, լիռ, հեռու, ձեռք, երեսուն)։ Այս հնչյունը նույն դիրքում դիտելի է նաև փոխառյալ բառերում՝ պիքէն (բիբար)։ Է-ն հանդես է գալիս նաև է լծորդության բայերի ըզձ. եզ. ապ. ժամ. եզ. թվի 3-րդ դեմքում, որը ձևով նույնն է նույն լծորդության բայերի հրամ. եզ. եզ. թվի հետ։ [Է]-ի ֆերձավորագույն հնչյոյթն է [է]-ն, որի հետ նրա հակադրությունն ըստ արտաբերման տեղի արտահայտվում է միևնույն՝ առաջնային շարքի տարբեր բարձրություններով։ [է]-ն [Է]-ի հետ կազմում է հակադրության նվազագույն զույգեր, կատարում իմաստազատիչ դեր, դրանով իսկ ձեռք բերում հնչույթի արժեք։ Հակադրություններ ստեղծվում են մի կողմից՝ անվանական արմատով է լծորդության բայերի ըզձ. եզ. ապ. ժամ. եզ. թվի 3-րդ դեմքի (որը ձևով նույնն է հրամ. եզ. եզ. թվի հետ), մյուս կողմից՝ այդ նույն անվանական արմատների բացառ. հոլովածների միջև.

ըզձ. և հրամ. եզ.

բացառ. հոլով

նրէ (1. ջրի, 2. ջրի՛ր)

նրէ (ջրից)

ծէձէ (1. ծեծի, 2. ծեծի՛ր)

ծէձէ (ծեծից)

Ամենայն հավանականությամբ, է և Է հնչյունների հակադրությունն սկսվել է հրամ. եզ. և բացառ. հոլովածների վերջավորությունների տարբերակումից։ Սրանք նախապես ունեցել են տարբեր սկզբնաձևեր. հրամ. գրաբարի եա (գրեա) վերջավորությունը, իսկ բացառ.՝ գրաբարյան է-ն։ Երգնկայում եա-ին համապատասխանել է մեր նշած Է հնչյունը, իսկ բացառ. է-ին՝ արևմտյան խմբի շատ բարբառների նման՝ մաքուր է-ն։

Բարբառում օրինաչափորեն Է կա օժանդակ բայի ներկա ժամ. եզ. թվի 3-րդ դեմքում՝ մաքր Է և նույնի ժխտական ձևում՝ մաքր է։

Բարբառում ևս Է-ն շեշտ չի կրում, եթե չհաջվենք այն բառերը, որոնցում բացի Է-ից չկա այլ ձայնավոր. խըմբը՛լ (հիմար), նըլը՛զ (նիհար), նըղը՛զ (խաղի մեջ խարդախ) և այլն։ Բացի այդ, Է-ն ունի գործածության սահմանափակության մեկ դիրք. դա բառի ուղիղ ձևում բառավերջի փակ վանկն է. ծառ (ծամր), պառս (բարձր), լիռ (լիտր)։ Հիշյալ սահմանափակությունները (շեշտի տակ չգտնվելը և բառավերջի փակ վանկում չգործածվելը), սակայն, կասկածի տակ չեն դնում [Է]-ի

հնչույթային արժեքը, մանավանդ որ ք-ն ունի գործածության մեծ հաճախականություն. ք կա բառասկզբում, հանդիպում է հատկապես բաղաձայնների միջև և բառավերջի բաց վանկում որպես որոշիչ հոդ. բսկուշ (զգուշ), կրլոխ (զուխ), նուր (ջուր): Մի քանի բառերի վերջում ք-ն գիտակցվում է իբրև արմատական հնչյուն. օխաք, ուքը, ինք:

[Ը]-ի հնչույթային արժեքը հիմնավորապես հավաստվում է այլ ձայնավորների հետ նրա ունեցած հակադրություններով. քս (այս)—էս (ես), կռել (կտրել)—կոռել (կտրել), հինք (հինք)—հինօ (որպեսզի):

Առավել էական է [Ը]-ի հակադրությունը զրոյի հետ. հարս (հայրս)—հարս (հարս), կրլօխը հաճել (զուխը որևէ տեղից հանել)—կրլօխ հաճել (որևէ բան, գործ ավարտին հասցնել):

Ճ-ն, բացի փոխառյալ բառերից (ձմի, նմնա, տննա և այլն), հանդես է գալիս սակավաթիվ հայերեն բառերում՝ նռնա, նռչիքեկ, անձն, անէն, զննել, նմիլ, մած:

[Մ]-ն իր ամենամերձավոր հնչույթին՝ [Ա]-ին, հակադրվում է ֆմայնություն—ոչ ֆմայնություն հատկանիշով և նրա հետ կազմում հակադրության նվազագույն միավորներ. քաֆ (թագ)—քաֆ (միայն, լոկ), ֆալ (խալ)—քաֆ (ճաղատ), նագիկ (նազանի, նաև հատուկ անուն)—նագիկ (ճախարակի մաս):

Ինչպես երևում է, ա-ն հակադրություն կա հիմնականում շեշտի տակ և մեկ զույգում՝ նագիկ—նագիկ, նաև՝ շեշտից առաջ: Հակադրություն չունենք բառասկզբում, բառավերջի բաց վանկում: Սա, և ընդհանրապես ա-ն-ով հակադրվող միավորների սակավությունը բացատրվում է ն-ով սահմանափակ թվով բառերի գոյությունը: Այսուհանդերձ, բերված զույգերը հիմք են տալիս [Մ]-ն ինքնուրույն միավոր դիտելու և բարբառի հնչույթային համակարգի մեջ ներառելու:

Ու-ն և օ-ն բացառապես գործառում են փոխառյալ բառերի մեջ, ութու, քուֆ, կուֆում, կ'օլ, Դրանք չհակադրվելով [ՈՒ]-ին և [Օ]-ին և չկատարելով իմաստազատիչ դեր՝ հնչույթներ չեն, այլ համապատասխանաբար [Ու]-ի և [Օ]-ի տարբերակները փոխառյալ բառերում:

Այսպիսով, բարբառի ձայնավորների հնչույթային համակարգը ընդգրկում է հետևյալ հնչույթներն իրենց տարատեսակներով. [Ա], [Մ], [Ը], [Ի], [ՈՒ]—ու տարբերակով, [Օ]—օ տարբերակով, [Ը], [Է] և [Է]:

Բ ա դ ա ձ ա յ ն հ ն չ ու յ թ ն ե ր: Պայթական ու կիսաշփական բաղաձայնները, ինչպես ասվել է, հնչյունական մակարդակում ներկայացնում են եռանդամ համակարգ՝ ք-պ-փ, դ-տ-ք, գ-կ-ֆ, ձ-ծ-ց,

ջ-ճ-շ: Հնչույթաբանական մակարդակում նրանց հակադրությունն արտահայտվում է շնչեղություն-ոչ շնչեղություն հատկանիշով: Ընդ որում, շնչեղություն եզրում միշտ հանդես են գալիս շնչեղ խուլերը՝ իբրև նշանակիր անդամ, իսկ ոչ շնչեղություն եզրում՝ մերթ խուլերը, մերթ էլ ձայնեղները՝ իբրև ոչ նշանակիր անդամ:

Շնչեղ խուլերը գործառական սահմանափակում գրեթե չունեն. հանդիպում են բառասկզբում, միջձայնավորային դիրքում, բառի մեջ խուլ հնչյունների մոտ, Ե-ից և ռնգայիններից հետո և բառավերջում (փընթի, կաթիլ, էփնէլ, փըրփուր, զըրուց): Շնչեղ խուլերի համար միակ բացառված դիրքը ձայնեղների հարևանությունն է: Սա էլ բացատրվում է բարբառի այն կայուն օրինաչափությամբ, որի համաձայն իրար հարևանությամբ կարող են հանդես գալ միայն նույն որակի (կամ խուլ, կամ ձայնեղ) բաղաձայններ (խտկէլ, էրիշտա, օտկէր, աշկ, ախպար, մաղղաշ, կըզգէլ, ըստէղծէլ): Հետևաբար, շնչեղ խուլերի հնչույթային բովանդակությունն անհայտ է:

Միևնույն խուլերի և ձայնեղների միջև կատարվել է ուղորտների բաշխում: Խուլ պայթականներն ու կիսաշփականները հանդես են գալիս բառասկզբում՝ զրաբարի խուլ և ձայնեղ պայթականների ու կիսաշփականների դիմաց (պ,բ>պ, կ,գ>կ, տ,դ>տ, ճ,ջ>ճ, ծ,ծ>ծ), բառավերջի ետձայնավորային դիրքում, Ե-ից և խուլ հնչյուններից հետո (պատ, կինի<գինի, սիրտ, վօսպ): Բառամիջում խուլ պայթականներն ու կիսաշփականներն կան միայն այլ խուլ հնչյունների մոտ (ըսկխպ, ըստտնալ, աշկէր, ըսպաննէլ):

Դրան հակառակ, ձայնեղները գործառում են միջձայնավորային դիրքում, ձայնորդ և ձայնավոր հնչյունների միջև, ինչպես նաև ռնգայինների և ձայնեղ շփականների հարևանությամբ (աբուր, սըրգօտ, նընջօց, ճիւնգ, կունդ):

Հեշտ է նկատել, որ այնտեղ, որտեղ հանդես է գալիս խուլը, ձայնեղ հանդես գալ չի կարող, և հակառակը: Այլ կերպ ասած, խուլերը և ձայնեղները նույն դիրքում հանդես չեն գալիս, որպիսի հանգամանքը բացառում է ձայնեղություն-խուլություն հակադրությունը: Իսկ խուլերի և ձայնեղների միջև կիսաուղորտային հարաբերությունը հավաստում է նրանց միևնույն հնչույթի ենթահնչույթներ լինելը: Հնչյունական մակարդակում այդ հնչույթները ըստ ուղորտների իրացվում են մերթ խուլ, մերթ ձայնեղ տարբերակով՝ այս մակարդակում ներկայացնելով խուլերի և ձայնեղների երկակի շարք, իսկ հնչույթաբանական մակարդա-

կում դրանք ներկայացնում են ոչ շնչեղություն հատկանիշով բնութագրվող պայթականների ու կիսաշփականների մենաշարք՝ այդ հատկանիշով էլ հակադրվելով շնչեղ խուլերին:

Մյուս կողմից՝ գործառությամբ միմյանց հետ համընկնում են խուլերը և շնչեղ խուլերը, իսկ վերջիններս ձայնեղների հետ համընկնում են միայն մասնակիորեն՝ միջձայնավորային դիրքում, մասամբ նաև՝ ռնգայիններից հետո: Այս հանգամանքը, կարծեք թե, հնարավոր է դարձնում խուլերի և շնչեղ խուլների հակադրությունը:

Հայտնի է նաև, որ բաղաձայնների համար ուժեղ հնչույթաբանական դիրք է բառասկիզբը: Այստեղ էլ կարող են հակադրվել միայն խուլերը և շնչեղ խուլերը. պատ (պատ)—փատ (փայտ), կալ (գալ)—ֆալ (խակ), ծան (ձայն)—ցան (մաշկի հիվանդություն):

Նշված հանգամանքները, սակայն, չեն ենթադրում, որ խլությունը հնչույթաբանորեն էական, առաջնային հատկանիշ է: Իրոք, բառավերջի դիրքում հանդես եկող խուլերը բառի թեքման, ածանցման և բառաբարդման ժամանակ, ինչպես նաև խոսքի շղթայում՝ կապված հաջորդ բառի սկզբնահնչյունի որակի հետ, ընկնելով համապատասխան հնչյունական միջավայր (միջձայնավորային դիրք, ռնգայինների, ձայնորդների և ձայնեղների հարևանություն), կորցնում են խլությունը և ձեռք բերում ձայնեղություն: Այսպիսի փոփոխությունը, սակայն, իմաստային նոր հակադրություն չի առաջացնում: Այսպես՝ տակ (կարմիր ձակընդեղ)-տաֆ (տաք), կուտ (կորիզ)-կուր (կարելու ժամանակ ասելի մեկ անգամ խփելն ու հանելը): Սրանք թեքվելիս դառնում են տագին-տաֆին, կուդով-կուրով, ուր հակադրության առաջին եզրերի վերջին խուլ հնչյունները՝ կ-ն և տ-ն, ըստ հնչյունական շղթայի (միջձայնավորային դիրք) դարձել են ձայնեղ (կամ նույնն է ասել, թե կորցրել են խլությունը), սակայն վերոբերյալ իմաստային հակադրությունները մնացել են անփոփոխ: Փաստորեն, խուլերը հնչյունական շղթայի նկատմամբ զգայուն են, հետևաբար և ունեն դիրքային պայմանավորվածություն:

Երևույթն է՛լ ավելի ակնառու է բառասկզբի դիրքում՝ դարձյալ կապված խոսքի շղթայի հետ: Խուլ և ձայնեղ հնչյուններով սկսվող բառերը խոսքի շղթայի սկզբում հնչվում են խուլ. Տաբին դասվեցու ա-միս է: Տուն բսօր գացի՞ր էֆի:

Տաբի և տուն (<դու) բառերի առաջին հնչյունները խուլ են: Խոսքի շղթայի մեջ ևս նրանց խուլ հնչումը պահպանվում է, երբ այդ բառերին նախորդում են խուլ հնչյուններով ավարտվող բառեր, այսինքն՝ հնչյունական շղթայում գրավում են խուլերին հաջորդող դիրք. Ըս տա-

րի գարունը շուտ էգամ: Կէթաս տուն էֆի: Այստեղ տվյալ հնչյունները խուլ են՝ նրանց խուլ սուլական և նախորդելու պատճառով:

Մինչդեռ, երբ խոսքի շղթայի մեջ խուլ հնչյուններով սկսվող բառերին նախորդում են ձայնավորներով և ձայնեղներով ավարտվող բառեր, և խուլերը հնչյունական շղթայում գրավում են դրանց հաջորդող դիրք, ստանում են ձայնեղ հնչում. Հիգ(հիւնգ) դարի գէղէն դուս շէգամ: Էս ու դուն ֆաղաֆ պէթանէֆ<sup>14</sup>: Տարի և տուն բառերի առաջին հնչյունները ձայնեղ են՝ համաձայն վերը նշված օրինաչափության (տարի-ին նախորդում է գ ձայնեղ, տուն-ին՝ ու ձայնավոր, և տ-ն ընկնում է միջ-ձայնավորային դիրք): Այս դիրքում առաջացած ձայնեղները բառիմաստի մեջ փոփոխություն չեն մտցնում:

Խոսքային մակարդակում, հնչյունական շղթային համապատասխան, խուլերի և ձայնեղների նման փոխհարաբերությունը աներկբա է դարձնում հնչույթաբանական մակարդակում խուլերի և ձայնեղների հավասարարժեք լինելը, դրանց՝ միևնույն հնչույթի ենթահնչույթներ լինելը:

Այսպիսով, Երզ. բրբռ. իր պայթականների և կիսաշփականների բաղաձայնական համակարգով մտնում է հայ բարբառների և հայերենի գրական տարբերակների այն տարածքի մեջ, որին բնորոշ է երկաստիճան հակադրությունը: Բարբառում այդ հակադրությունն արտահայտվում է շնչեղություն-ոչ շնչեղություն հատկանիշով:

Պայթականներից Գ-կ-բ շարքը փոխառյալ բառերում ունի Գ՛-կ՛-բ՛ բնային տարբերակները. կ՛ուկ՛ում, ք՛ուկ՛:

Շփականները իրար հակադրվում են ձայնեղություն-խլություն հատկանիշով: Շփականների խուլ և ձայնեղ շարքերի միջև (վ-ֆ, գ-ս, ժ-շ, դ-խ) ուրտների բաշխում կատարված է միայն մեկ դիրքում: Խուլ շփականները կարող են հարևանել միայն խուլ հնչյունների (ախ<աստղ, ախշիկ, նէխսիրտ, հաֆսար), իսկ ձայնեղ շփականները՝ ձայնեղների (նէղվասկ, հավդալ, կօծգէլ): Նշանակում է՝ այս դիրքում ձայնեղ և խուլ շփականների հակադրությունը հնչույթաբանորեն չեզոքանում է: Մնացած դեպքերում՝ բառասկիզբ, միջձայնավորային դիրք և բառավերջ, դրանք կատարում են իմաստազատիչ դեր և հանդես գալիս հնչույթային արժեքով:

<sup>14</sup> Բերվող օրինակներում խուլով սկսվող և ավարտվող բառերը խոսքային մակարդակում ենթարկվում են նույն օրինաչափությանը, ուստի տառադարձելիս նկատի ենք ունեցել ոչ թե նրանց անկախ գործածությունը, այլ հնչյունական շղթայում նրանց ստացած ձայնի որակը: Այս մոտեցումը պահպանված է ողջ ուսումնասիրության մեջ:

էական է ցույց տալ վ-Ֆ հակադրութիւնը: Ունենք հակադրվող մեկ զույգ՝ վըշվըշալ (ափսոսալ)-ֆըշֆըշալ (ֆշֆշալ): Վ-Ֆ հակադրութեան այլ զույգեր մեզ չեն հանդիպել: Բանն այն է, որ բարբառում ֆ-ով բաներ քիչ կան: Բառասկզբին ֆ հանդիպում է միայն բնածայն և փոխառյալ բառերում: Քանի որ նշված հակադրութեան եզրերում բնածայն բաներ են, ուստի բերում ենք նաև այլ օրինակներ:

Ինչպես բառասկզբում, այնպես էլ բառամիջում և բառավերջում ֆ-ն և վ-ն հստակորեն տարբերակվում են միմյանցից: Այսպես, մի կողմից ունենք ֆալախա (պատժի գործիք), մյուս կողմից՝ վալա (սրփոռոց, ծածկոց), մի կողմից՝ խալֆա (վարպետից հետո եկող ավագ աշակերտը), մյուս կողմից՝ հալվա (հալվա), մի կողմից՝ աֆօկ (ամոթ), մյուս կողմից՝ հավօղ (խաղող) և, վերջապես, բառավերջում մի կողմից ունենք օֆ (ձայնարկութիւն), մյուս կողմից՝ վօվ (ով), ձօվ, կօվ, հօվ. ֆէֆ, ապա՝ քէվ, սէվ. ֆաֆ (եփելու ժամանակ առաջացած փրփուրը) և հավ, ցավ, քավ: Մի կողմից ունենք փիլաֆ (փլավ), մյուս կողմից՝ փըլավ (փլվեց): Բերված զույգերում վ-ն և ֆ-ն հանդես գալով գրեթե նույն հնչյունական շրջապատում՝ որոշակիորեն տարբերակվում են միմյանցից, առանց երբեք իրար հետ շփոթվելու:

Առաջնալեզվային շարքի շփականները բացի խլութիւն-ձայնեղութիւնից, իրար հակադրվում են նաև սուլական-շշական հատկանիշով (զ-ծ, ս-շ): Հնչույթաբանորեն չեզոքացված է ս-շ հակադրութիւնը մեկ զույգում՝ սէմ||շէմ: Երկուսն էլ արտահայտում են միևնույն սեամ իմաստը:

Հանրահայտ է, որ բարբառներում հ-ն կարող է դիրքային տարբերակներ ստեղծել կամ չեզոքանալ յ-ի և խ-ի հետ: Երգ. բարբառում [Հ], [Յ], [Խ]-ն անկախ հնչույթներ են, որն ապացուցվում է նաև նվագազույն զույգերի հակադրութեամբ. յէղ (յուղ)—հէղ (անգամ), խօտ (խոտ)—հօտ (հոտ), հախը (արժեքը)—հայը (հայր):

Քեև հակադրութիւնները չեն ընդգրկում բոլոր դիրքերը (բառամեջ, իսկ յ-հ-ով նաև բառավերջ՝ այս դիրքում յ-ով և հ-ով բաներ քիչ ունենալու պատճառով), այնուամենայնիվ եղած զույգերը լիարժեք հիմք են տալիս [Հ], [Յ], [Խ]-ն առանձին հնչույթներ դիտելու:

Իմաստազատիչ դեր ունեն, հետեւաբար և հնչույթներ են [Մ], [Ն], [Լ], [Բ], [Ռ], [Յ] ձայնորդները:

Մի շարք բարբառներում չեզոքացված է ր-ռ հակադրութիւնը: Երզնկայի բարբառում դրանք հակադրվող հնչույթներ են, ունեն իմաս-

տատարբերակիչ հատկանիշ. առ'ւր (տալ բայի հրամայականը)—տուտ (դուտ), մար (մայր)—մառ (մանր), պարօվ (բարե)—պառօվ (պանրով),

Ձկա ր-ն հակադրություն բառասկզբում՝ ր-ով սկսվող բառեր շունենայու պատճառով:

Ինչպես տեսնում ենք, շփականներն ու ձայնորդները հնչույթային տեսակետից նորություն չեն ներկայացնում: Դրանք, ինչպես նաև պայթական ու կիսաշփական հնչույթները որոշ դիրքերում ունեն գործառություն ուրորտների սահմանափակում: Օրինակ, բացառվում են աբ, էբ, է+շրթնային պայթական կապակցությունները, կիսաշփականների հարեվանությունը պայթական, ձայնորդ ու ձայնեղ հնչյուններին, յ կիսա-ձայնի գործածությունը երկու ձայնավորների միջև: Այս սահմանափակումները հետևանք են պատմական, դիրքային ու փոխազդեցական հնչյունափոխությունների:

### ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ձայնավորներ: Գրաբարի նկատմամբ բարբառի ձայնավորական համակարգի տարբերությունները արտահայտվում են հետևյալում.

1. Հայտնի է, որ գրաբարը տարբերակում էր ե և է հնչույթները. առաջինը հնչվում էր իբրև պարզ ձայնավոր է, երկրորդն ուներ երկբարբառային արտաբերում՝ բաղադրված է և յ միավորներից: Բարբառների մեծագույն մասում, այդ թվում և Երզնկայում, ինչպես նաև գրական հայերենի երկու դրսևորումներում վերացված է ե և է հնչույթների տարբերակվածությունը: Սրանց դիմաց բոլոր դիրքերում բարբառն ունի առաջին շարքի միջին բարձրացման է: Բացառություն են կազմում միավանկ մի քանի բառեր, որոնց բառասկզբում գրաբարի ե-ին համապատասխանում է յէ. եզ>յէզ, երբ>յէփ, երզ>յէրֆ:

2. Բարբառում հնչույթային նույն արժեքն ունեն նաև գրաբարի ո և աւ>օ ձայնավորները, որոնց դիմաց բարբառը երևան է հանում ետին շարքի միջին բարձրացման օ: Այստեղ էլ բացառությունները հանդես են գալիս հիմնականում միավանկ բառերի սկզբում, ուր ո-ի դիմաց առկա է վօ. որբ>վօրփ, ով>վօվ, ործ>վօրց: Ո>վօ հնչյունափոխությամբ ձևերը, հավանաբար, Երզնկա են թափանցել բարբառների այն տարածքից, ուր ո-ի հնչյունափոխության ընթացքը (ս) երկբարբառային ձևից այնուհետև զարգացել էր vuօ կամ պարզապես vo ուղիով<sup>15</sup>:

<sup>15</sup> Հմմտ. «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Երևան, 1972, էջ 84:

3. Բառամիջուժ՝ ձայնավորից առաջ ու-ն վերածված է վ-ի. աստուած>ասված, բուրուռու>փուրվառ, աղուէս>աղվէս: Զուռն բառի դիմաց բարբառը երևան է հանում չովան:

Աշխարհաբարում, ինչպես նաև շատ բարբառներում, ձայնավորից առաջ ու>վ փոփոխությունը կայունացած է ոչ միայն բառի ուղիղ, այլև թեք ձևերում՝ առու+ի—առվի, կատու+ի—կատվի: Մինչդեռ բարբառում թեք ձևերը, գրեթե հավասար կիրառությունը, հանդես են գալիս զուգաձևերով՝ առուի և առվի, կադուի և կադվի:

4. Գրաբարի նկատմամբ տարբեր է և հնչույթի գործառությունը: Հայտնի հնչյունական օրենքների հիման վրա<sup>16</sup> հտգրաբարյան շրջանում առաջացավ Ը-ն որպես հոդ՝ լրացուցիչ բաշխման մեջ մտնելով ե-ի հետ: Երգնկայում նույնպես, Ը-ն որպես հոդ՝ ունի լայն գործածություն բաղաձայնահանգ բառերից հետո՝ Արշագը, տունը: Դրան հակառակ, Ը-ի գործածությունը սահմանափակված է բառափեղջի փակ վանկերում: Այսպես, հնչյունափոխական զանազան միջոցներով (գրափոխություն, հնչյունների անկում, հերթագայություն) գրաբարի մեկուկես վանկանի բառերի Ը-ն ընկել է. բարձ(ը)ր>պարս, մեղ(ը)ր>մէղդ, ծան(ը)ր>ծառ, ման(ը)ր>մառ, սանդ(ը)ր>սառ, թանձ(ը)ր>թարգ, անօս(ը)ր>նօրս, քաղց(ը)ր>քաղս, լիտ(ը)ր>լիռ, ճիպ(ը)ր>ճիռայ, ոսկ(ը)ր>օսկօռ: Միակ բացառությունը տայգը>տաֆը բառն է:

Հստակ ու հնչուն է Ը-ն սպ, ստ, սկ կապակցություններից առաջ. սպասել>բսպասել, ստեղծանել>բստէղծել, զգոյշ>բսկոյշ:

5. Բառի ուղիղ ձևերում բազմավանկ բառերի միջին վանկի ձայնավորը ընկած կամ հնչյունափոխված է Ը-ի, անապակ>ամբակ, ժողովել>ժողվել, ածել>աձըլի, պտտտիլ>պըղըղիլ, հանդիպել>հանդըրիլ:

Այս երևույթը ունի նույն բացատրությունը, ինչպիսին ընդունված է միջին հայերենի համակարգի համար: Այն է՝ բառը կրում է գլխավոր կամ ուժեղ (վերջին վանկում) և երկրորդական կամ թույլ (առաջին վանկում) շեշտեր<sup>17</sup>: Հիշյալ դիրքում ձայնավորները մի դեպքում ընկ-

16 Հմմտ. Ա. Ղաթիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 113—114:

17 Պետք է ենթադրել, որ այն բառերում, ուր առկա է երկվանկ և բազմավանկ բառերի նախաշեշտ բոլոր ձայնավորների հնչյունափոխություն, ինչպես՝ լակել>լըգել, կարենալ>կըրենալ, ժամանել>ժըմնել և այլն, այս բարբառ են անցել բարբառների այն տարածքից, ուր չի եղել բառի երկու շեշտակրություն (Հմմտ. է. Աղայան, Գրաբարի քերականություն, Երևան, 1962, էջ 276):

նում, մյուս դեպքում հնչյունափոխվում են ր-ի՝ համաձայն հայերենի և բարբառի վանկակազմության սկզբունքների<sup>18</sup>,

Այս փոփոխությունը բարբառում ընդհանրական օրինաչափություն է, եթե նկատի ունենանք զրաբարի և բարբառի համար այն ընդհանուր բառերը, որոնք բարբառ են անցել խոսակցական ճանապարհով (վերը բերված օրինակները), ինչպես նաև բարբառային կազմության բոլոր բառերը՝ հարսընհար (հարսնաբույր), կրգեղի (կուկուզեղ), ծոսֆօր (ծոցավոր՝ հղի), տրդասկան (տղացական՝ նորածին ունեցող կին), վարնօց (վարանոց՝ անարժեք մարդ), խազխբզել (խազխազել), ճօջրբալ (ճորճորալ՝ շորորալ):

Ավելին. նույնը կատարվում է նաև փոխառյալ հիմքերով բառերի մեջ՝ սախատել > սախտել, թալանել > թալլել:

Երևույթն է՝ ավելի ընդհանրական ուժ է ստանում, երբ սրանց գումարվում են երկվանկ բառերի թեքման ժամանակ շեշտի հետ կապված հնչյունափոխական նույն դրսևորումները՝ հատկապես ա ձայնավորի մեջ՝ պլեհի (բերանի), պլեհեթեռան (բերնեբերան), ճագղին (ճակատին), սեղնի (սեղանի): Սակայն վերջինս առաջացած լինելով համաբանությամբ, ամբողջովին չի կայունացել և չի ընդգրկում սպասելի բոլոր դեպքերը: Շեշտից դուրս մնալով, մի շարք բառերի միջին վանկի ձայնավորները մնում են անփոփոխ՝ ցուցաբերելով իրենց վաղեմի կայունությունը. պառավին, էրեսին, կօղօշին և այլն:

6. Օժանդակ բայի եզ. թվի 3-րդ դեմքի է (< էյ)-ին բարբառում համապատասխանում է է, որը պահպանվում է նաև ժխտական ձևում. չէ:

7. Գրաբարի և լծորդության բայերի ներկա ժամ. եզ. թվի 3-րդ դեմքի է-ի դիմաց ունի է. ուտէ > աղէ, գրէ > կրէ:

8. Բարբառում է հնչումն է ստացել նաև զրաբարի ու-ից առաջ գտնվող ե-ն. ձմեռն > ծըմէռ, մեռանել > մէռնիլ, թիթեռն > թիթէռ, լեռն > էռ:

Նշված տարբերությունների գերակշիռ մասով զուգաբանությունների լայն ցանց է գծվում Երզնկայի և հայիրենի բարբառների մեծ մասի, միջին գրական հայերենի, աշխարհաբարի համակարգերի միջև: Զայնավորական համակարգում բարբառը գրեթե զերծ է զուտ տեղային բարբառային հատկանիշներից, որով և պայմանավորված է բարբառի ընդհանուր պարզությունը:

<sup>18</sup> Հմմտ. նույն տեղում, էջ 252—256:

Մյուս բոլոր դեպքերում և դիրքերում (շեշտի տակ և շեշտանախորդ դիրքեր, փակ և բաց վանկեր, միավանկ և բազմավանկ բառերի բառասկզբ) գրաբարի ձայնավորները բարբառում հանդես են գալիս անփոփոխ, օրինակ՝

ա>ա՝ հաց>հաց, աման>աման, տղայ>տղա

ի>ի՝ միս>միս, գինի>կիճի, իշանել>իշնալ

ու>ու՝ դուռն>տուտ, գուրպայ>կուրբա, երկու>էրգու, ութ>ութք

ո>օ՝ կով>կօվ, ցորեան>ցօրէն, ոչխար>օշխար

ե,է>է՝ ես>էս, երեկ>էրէկ, էշ>էշ, սէր>սէր, մարգարէ>մարֆարէ

ը>ը՝ ընտիր>ընդիր, ընտրել>հըռէլ, գ(ը)լուխ>կըլօխ:

Հիմնական օրինաչափությունից դուրս տարբեր դիրքերում առկա են ձայնավորների որոշ փոփոխություններ, որոնք կրում են մասնակի բնույթ:

Այսպես՝

ա>յա՝ առաջ>յառյա՛շ, առաջնակ>յառյինէկ, ամեն>յամէն||յամմէն, զարկանել>զյարգէլ, նայել>նյիլ, (երկրա)շարժ>ժյաժ, վառել>վյառէլ

ա>է՝ միջնակ>միշնէկ, յարդ>էրթ, ավելի>էվէլի, ավելորդ>էվէլօրթ, վերակացու>վըրագէցու, փայծաղն>փաձէղ, բաղնաւոր>պաղնէվօր, ռահան>ռէհան, վարդավառ>վարթէվօր

ա>ը՝ ասել>ըսել, մաշել>մըշէլ, կարենալ>կըրնալ, լակել>լըգէլ, նահատակ>նըհաղակ, կաղանդ>կաղընդ, հապա>հըբա||նըբը

ա>ի՝ անկանիւլ>անգնիւլ>ինգնալ>ինալ

է>ի՝ կիւրակէ>կիրագի

ե>ը՝ սեղմել>սըխմէլ, կեղեւ>քըլէֆ, լեզու>լըգու<sup>19</sup>, հղունգն>ըղունք||օղունգ, ճեղքել>նըխկէլ, վերադիր>վըրաթիլ, թեղ>թըղ, լեզուանի>լըզվանի, կեռաս>կըռաս, վերայ>վըրա

ե>օ՝ ցերեկ>ցօրէկ (ըստ Աճառյանի՝ օր բառի ազդեցությամբ):

ե>ի՝ արգելել>արքիլէլ, հրեշտակ>նըրիշտակ, երեք>իրէֆ,

<sup>19</sup> Բարբառի լրգու ձևը հնարավոր է ենթադրել հնագույն իլլւ ձևից (հմտ. Жирмунский В. М., Некоторые итоги дискуссии об армянском консонантизме, ВЯ, 1962, № 5, стр. 33—46)՝ հայերենի համար բնորոշ ի/ը հնչյունափոխությամբ:

երիկամ>իլիգամ, երիցակին>իրիսկին, մենակ>մինակ,  
եմ, եմք, եմ>իմ, իմք, ին.

ե>ա՝ եղել>անդէլ

ի>ը՝ նախիր>նախրո, շինել>շընէլ, դիպանել>տըրնալ, վիճակ>վը-  
ջակ, մի>մը, ինձ>ընձի (վերջինիս հնչյունափոխությունը բա-  
ցատրվում է շեշտի դիրքով):

ի>ա՝ գոգի>կըռգա

ի>է՝ կոտիմն>կոդէմ, առիք>առէք

ու>օ՝ գլուխ>կըլօխ, բղուղ>պըղղղ

ու>ը՝ ուղեղ>ըղէղ

ու>ի՝ թուղանդ>Փիղանք

ո>ու՝ թոնիր>թունդիր||թունիր, թափոր>թափուր

ո>ա՝ բարավոր>պալավար

ը>ի՝ ընդ որ>ինդօր, լուս(ը)նկայ>լուսինգա, չ(ը)>չի, ն(ը)շան>նի-  
շան, կ(ը)շիռք>կիշանք, ք(ը)շանալ>քիշնալ, դ(ը)ժուար>տիժար,  
ճ(ը)շտել>նիշտէլ, ճ(ը)րագ>նիրագ

ը>է՝ շ(ը)րէշ>շէրէշ

Հնչյունափոխական այս մասնակի երևույթները արդյունք են նը-  
գընկայի՝ այլ բարբառների հետ ունեցած շփման ու փոխազդեցության,  
մանավանդ որ իր բացառություններով բրբռ. ընդհանրություններ է  
հանդես բերում արևմտյան խմբակցության գրեթե բոլոր բարբառների  
հետ:

Բացառությունների մյուս խումբը գրական, կրոնական փոխառու-  
թյուններն են: Ձայնավորական համակարգում շեղումները հանդես են  
գալիս՝ ա) ե, ո-ով սկսվող բազմավանկ բառերի սկզբում, ուր հակառակ  
բարբառի օրինաչափության, մի շարք բառեր ունեն յէ; վօ երկհնչյուն-  
ներ. եպիսկոպոս>յէքիսկօրօս, որոգայթ>վօրօֆայթ, բ) բազմավանկ  
բառերի միջին վանկում, ուր ձայնավորները կարող են պահպանվել,  
հակառակ նրանց հնչյունափոխվելու ընդհանուր օրինաչափության. ա-  
վազան, կէրէզման, պաղիրարք, կոդօրած:

Երբեմն միջին վանկի ձայնավորները պահպանված են առօրյա  
գործածական բառերում՝ կէղացի, ըխտավօր: Սրանք, հավանաբար,  
ներթափանցումներ են այնպիսի բարբառներից, ուր չի գործել հնչյու-  
նափոխական տվյալ երևույթը:

Քննությունից երևում է, որ նրգնկան այն սակավաթիվ բարբառնե-  
րից է, որ ձայնավորական համակարգով գրեթե նույնանում է գրա-  
բարին, դրսևորելով միայն մասնակի տարբերություններ:

Երկբարբառներ: Գրաբարի երկբարբառների դիմաց ունի պարզ ձայնավորներ:

Աւ երկբարբառը այստեղ ևս հանդես է գալիս հայերենի ընդհանուր պատմական հնչյունափոխության սահմաններում՝ իբրև աւ>օ անցում. տաւն>տօն, ար>օր, կարատ>կառօտ: Աղաւնի-ն և նաւթ-ը բարբառների մեծ մասում շեղվում են ընդհանուր օրինաչափությունից՝ չկրելով աւ>օ փոփոխություն: Շեղումը առկա է նաև Երզնկայում, ուր՝ աղաւնի>աղվրնիկ, իսկ նաւթ բառը չի անցել բարբառ: Աղաւնի>աղվրնիկ հնչյունափոխությունը, հավանաբար, կատարվել է այն բանից հետո, երբ աւ երկբարբառը հնչվել է իբրև ավ երկհնչույն, ապա իբրև միջին ձայնավոր, ա-ն ընկել է, նման ծարաւիլ>ծարավանաւ>ծառվրնաւ հնչյունափոխությանը:

Յաւնք բառի դիմաց բարբառն ունի օնք և ունք զուգաձևեր: Վերջինը անցել է այն բարբառներից, ուր գործել է աւ>օ>ու հնչյունափոխություն:

Գրաբարի այ երկբարբառին շեշտի տակ և շեշտանախորդ դիրքերում համապատասխանում է ա. հայր>հար, աղբայր>ախպար, ճայթել>ճաթել, այսօր>աւօր, մօտենայր>մօղէնար:

Յուցական դերանուններում բառասկզբի այ-ի փոփոխությունը հանդես է գալիս զուգաձևերով՝ այ>ա||ը. այս, այդ, այն>աս, առ, աճ||ըս, ըս, ըն, այսչափ>ասչափ||ըսչափ:

Այ-ի դիմաց է կա այգի>էֆի, այլ(իկ)>էրիկ, այրել>էրէլ բառերում՝ բոլորն էլ իբրև բարբառների փոխազդեցության արդյունք:

Շեշտի տակ իւ երկբարբառի դիմաց առկա է ու. ձիւն>ձուն, ալիւր>ալուր, հերիւն>հէրուն, կտրիճութիւն>կըռիջութուն:

Բարբառներում, այդ թվում Երզնկայում առկա կէղ, յէղ, ճէղ-ը ենթադրվում են գեւղ, եւղ, ճեւղ ձևերից:

Շեշտանախորդ դիրքերում իւ-ի դիմաց ի կա իւրեան>իւրէն և կիւրակէ>կիրագի բառերում:

Հայտնի է, որ գրաբարում ոյ-ը հանդես էր գալիս միայն շեշտի տակ: Այն պարզեցվել է ու-ի. քոյր>քուր, ընկոյզ>ունգուզ, պատրոյգ>պառուֆ:

Գրաբարի բաց վանկի ոյ-ը, որը հանդես էր գալիս մի խումբ բառերի և անորոշ դերբայի սեռ. հոլովաձևում, դասական շրջանից հետո, հատկապես խոսակցական լեզվում ստանալով & հոդ, դարձել է փակ վանկ, ուր ոյ-ը, հավանաբար, վերահնչվել է իբրև երկբարբառ: Այս փեպքում ևս ոյ-ի դիմաց բրբռ. ունի ու. մարդոյ>մարդոյն>մարքուն,

ուտելոյ>ուտելոյն>ուղէլուն: Քոյ բաց վանկում դարձյալ կա ու՛ բու:

Գրաբարի շեշտի տակ գտնվող փակ վանկի եւ երկբարբառը հանդես է գալիս զուգահեռ փոփոխություններով: Բառի ուղիղ ձեւերում եւ-ն դարձել է է. սեաւ>սէվ, դայեակ>տանէկ, ճայեակ>ճանէկ: Եւ> է հնչյունափոխություն է կատարվել նաև անց. հիմքից կազմվող ձեւերում. սիրեաց>սիրէց, տեսեալ>տեսէր:

Եւ-ն ա է տվել ութին>ութուն ածանցավոր բառերի սեռ.-արակ. հոլովաձեւում. լավութեան>լավութան, մարդկութեան>մարդկութան: Իրեաւ բառում էւ եւ-ն դարձել է ա՛ իրաւ:

Գրական, կրոնական փոխառություններում բոլոր երկբարբառները երևան են գալիս իբրև երկհնչյուններ. պայծառ>պայճառ, բոյս>փույս, լուսաւորեալ>լուսավորյալ:

Բաղաձայններ: Առկա են հնչույթային հետեւյալ տարբերությունները.

1. Գրաբարի վ-ն և լ-ն բարբառում հանդես են գալիս իբրև մեկ հնչույթ՝ շրթնատամնային ձայնեղ շփական վ. հաւ>հավ, կով>կով: Այսպիսի նույնացում կատարվել է դասական հայերենից հետո նրա բոլոր դրսևորումներում, բացառությամբ հատ ու կենտ բարբառների, ինչպես, օրինակ, Շատախի, ուր կան լ-ի որոշ կիրառություններ<sup>20</sup>:

2. Հայերենի ներքին զարգացման ընթացքով (ինչպես, օրինակ, բարբառների մեծ մասում խուլ շփականների մոտ միայն խուլ հնչյունների գործառություն՝ հաւասար>հավասար>հաֆասար՝ ի տարբերություն հաւատալ>հավդալ-ի), գուցե նաև փոխառյալ բառերի միջոցով գրաբարի շփական բաղաձայնների մենանդամ վ-ն հետագայում լրացվում է ֆ խուլ շփականով: Երգնկայում կան ֆ-ով բնաձայն և փոխառյալ մի քանի բառեր. ֆէս, ֆըլան, ֆըշֆըշալ, օֆ, ինչպես նաև վ-ի դիմաց ֆ կա այն բոլոր դեպքերում, երբ առաջանում է խուլ շփականների հետ վ-ի հարեանություն. իշֆօր (ինչ որ), վըլասֆիլ (լվացվել), սըֆֆիլ (զուգվել):

3. Հանրահայտ է, որ հին հայերենում դ-ն ձայնորդ էր և հանդիսանում էր լ-ի լծորդը: Ետդասական շրջանում դ-ն ետնալիզվային ձայնեղ շփական է: Բարբառում դ-ն լ-ի լծորդն է միայն ճիլ||ճիղ (շիղ) նույնիմաստ բառաձեւերում, մյուս դեպքերում նրանք առանձին, անկախ հնչույթներ են:

4. Պայթականների և կիսաշփականների խուլ և ձայնեղ (բ-պ, գ-կ,

20 Մ. Մուրադյան, Շատախի բարբառը, Երևան, 1962, էջ 60:

դ-տ, ձ-ծ, ջ-ճ) շարքերի միջև առաջացել է ենթահնչույթային հարաբերություն՝ ի տարբերություն այդ բաղաձայնների՝ գրաբարում առանձին, անկախ հնչույթներ լինելու:

Բաղաձայնների հնչունական փոփոխություններն ունեն հետևյալ արտահայտությունը.

Ձայնեղ պայթականներ և կիսաշփականներ: Բառասկզբում ձայնեղ պայթական և կիսաշփական բ, գ, դ, ջ, ձ-ի դիմաց համապատասխանաբար ունի պ, կ, տ, ճ, ծ խուլ հնչույթներ.

բ>պ՝ բարձր>պարս, բուրդ>պուրք, բերան>պէրան

գ>կ՝ գարի>կարի, գառն>կառ, գինի>կինի, գուլի>կըլօի

դ>տ՝ դու>տուն, դեղին>տէղին, դալար>տալար,

ձ>ծ՝ ձայն>ծան, ձեռք>ծէոք, ձի>ծի, ձմեռն>ծրմէո

ջ<ճ՝ ջուր>նուր, ջրաղացական>նաղասպան||նաղաշպան, ջրհոր-դան>նօրքան:

Միջձայնավորային, բառավերջի ետձայնավորային, ինչպես նաև բ-ին հաջորդող դիրքերում բ, գ, դ, ձ, ջ-ն հնչվում են շնչեղ խուլ փ, ֆ, ք, ց, չ:

Միջձայնավորային դիրք՝ խաբել>խափէլ, այգի>էֆի, Թադեոս>Թաթօս, ոջիլ>օշիլ:

Բ-ին հաջորդող դիրք՝ արբենալ>նարփէլ, երզումն>էրթում, արգելել>արֆիլէլ, թրջել>թրշէլ:

Բառավերջի ետձայնավորային դիրք՝ Հակոբ>Ագօփ, աւղ>օթ, ձագ>ծաֆ, աւձ>օց, առաջ>անաշ:

Ռնգայիններից հետո ձայնեղ պայթականներն ու կիսաշփականները մնում են նույնը. բամբակ>պամբակ, լինդ>լինդ, գանգատ>կանգատ, խանձել>խանձէլ, բանջար>պանջար:

Ականջ և կամուրջ բառերում բառավերջում հնչվում է ջ, որպես ուրնգայինին հաջորդող, թեև վերջինս ականջ բառում դրափոխվել է. ա-կանջ>անգաջ, կամուրջ>կարմունջ:

Գրական, կրոնական փոխառություններում ձայնեղ պայթականներն ու կիսաշփականները բառասկզբում և ռնգայիններից հետո հնչվում են շնչեղ խուլ. բազմել>փազմիլ, գմբեթ>քմփէթ, համբուրել>համփուրէլ, Մամբրէլ>Մամփրէլ:

Ձայնեղ պայթականների ու կիսաշփականների կրած ընդհանուր փոփոխություններից դուրս բարբառում կան դրանց հնչունափոխության մասնակի դեպքեր, որոնք, ինչպես ձայնավորների դեպքում, հիմնականում բացատրվում են նրդնկայի՝ այլ բարբառների հետ ունեցած շրփ-

մամբ՝ ու փոխադրեցությամբ: Այսպես՝ գ-ի դիմաց f կա գիշեր>ֆիշեր  
բառում:

Բառամիջում ձայնեղի դիմաց պարզ խուլեր կան ագահ>ակհահ  
և յօգնել>օկնել բառերում. սրանք բացատրվում են շնչեղ խուլերի հատ-  
կությունները (տե՛ս «Շնչեղ խուլեր» հատվածը):

Խուլ պայթականներ և կիսաշփականներ: Բառասկզբի խուլ պայ-  
թականներին ու կիսաշփականներին բարբառում համապատասխանում  
են նույն որակի հնչյուններ.

պ>պ՝ պատ>պատ, պարապ>պարապ, պուտուկ>պուտուկ

տ>տ՝ տալ>տալ, տեսանել>տեսնալ, տերեւ>տերել

կ>կ՝ կաթն>կաթ, կարկուտ>կարգուտ, կացին>կածծին

ծ>ծ՝ ծառ>ծառ, ծիրտ>ծիրտ, ծմակ>ծըմա

ճ>ճ՝ ճակատ>ճագատ, ճանաչել>ճաշնալ, ճրագ>ճիրաֆ:

Միջձայնավորային դիրքում, ռեզայինների և ձայնեղ բաղաձայննե-  
րի հարեանություններ խուլ պայթականների ու կիսաշփականների դիմաց  
առկա են համապատասխան ձայնեղներ. ատնել>ադել, կոճակ>կօջակ,  
երկաթ>էրգաթ, ստեղծանել>լստէղծել, ծունկն>ծունգ, ճանճ>ճանջ:

Խուլերի ձայնեղանալը այնքան բնորոշ է բարբառին, որ այն  
գործում է ոչ միայն առանձին բառերի մեջ, այլև խոսքի շղթայում: Այս-  
պես, անկախ կիրառության ժամանակ խուլով սկսվող կամ ավարտվող  
բառի խուլ հնչյունը խոսքի շղթայում ընկնելով նշված դիրքերը՝ ձայնե-  
ղանում է. Պաղը փըլավ: էս տէսա, ֆի բաղը փըլավ: Մէծ սիրտ, բայց՝  
մէծ աշկ<sup>21</sup>:

21 Խուլերի և ձայնեղների այս փոխհարաբերության մեջ էական դեր է խաղում դա-  
գարը, որի ղեկքում խուլիքը պահպանում են իրենց որակը: Տառագարձելիս նկատի է  
առնված նաև այս հանգամանքը:

Խոսքի շղթայում, հնչյունական զուգորդումներին համապատասխան, խուլերի և ձայ-  
նեղների նման փոխհարաբերության անտեսումը հանգեցրել է մի քանի բարբառների  
(Երզնկայի, Ակնա, Շապին-Գարահիսարի, թերևս նաև Պոլսի) բաղաձայնական համա-  
կարգերի ոչ ճիշտ գնահատման: «Քննություն պոլսահայ բարբառի» աշխատության մեջ  
Անատոյանը գրում է. «Պոլսեցի գրագետը երկու տեսակ արտասանություն ունի.  
բուն ժողովրդական կամ բարբառային արտասանություն, որ գործ է ածվում  
տանը, փողոցում, հասարակ խոսակցության միջոցին, և դպրոցական կամ գրական  
արտասանություն, որ գործ է ածվում դպրոցում, որևէ դիրք կարգալու ժամանակ կամ  
գրական անձերի հետ խոսելիս: Տարբերությունը կայանում է ք, գ, դ, ձ, ջ տառերի ար-  
տասանության մեջ, որոնք բարբառային ձևով հնչում են թրթռուն (կամ խուլ), իսկ  
գրական ձևով թավ (փ, ք, ք, ք, ջ): Այսպես, միևնույն դուռը բաց նախադասությունը,  
եթե ուղղված է մի հասարակ դռնապանի, արտասանվում է դուռը բաց կամ տուռը

Խուլ շփականների հարևանությունը, բառավերջի ետձայնավորային և ր-ին հաջորդող դիրքերում խուլ պայթականներն ու կիսաշփականները մնում են անփոփոխ. ուսպն>վօսպ, խստոր>սրխտօր, ոսկի>օսկի, սիրտ>սիրտ, գործ>կօրծ, երակ>էրակ, այծ>ած:

Սեպտեմբեր>սէգդէմփէր բառում պ>գ փոփոխությունը կատարվել է հօգդէմփէր բառի համաբանությամբ:

Անկուտ ձևի դիմաց բարբառն ունի անդուտ, անկ-ի (ունկ, կանթ) դիմաց՝ անդ||անգ զուգաձևեր, որոնք արտահայտություն են բարբառային որոշ տարածքում գործող հնչյունական այն հատկանիշի, ըստ որի ձայնորդների մոտ կ||գ-ն դառնում է ղ (հմմտ. խանգարել>խաղոել, ժանգառոտ>ժաղոտ՝ Պոլսի բարբառ., կանգնել>կաղնել, լոգանալ>լէղանալ՝ Լոռու խոսվածք, ալկոա||ազոա-աղոա||առոա՝ մի շարք այլ բարբառներ):

Շնչեղ խուլ պայթականներ և կիսաշփականներ: Շնչեղ խուլերը բոլոր դիրքերում մնացել են անփոփոխ.

փ>փ՝ փայտ>փատ, եփել>էփել, շամփուր>շամփուր, շերեփ>շէրէփ

թ>թ՝ թան>թան, մորթել>մօրթել, խենթ>խէնթ, լաթ>լաթ՝  
'թ>թ՝ քիրտն>քըրդինք, ցամաքել>ցամֆիլ, առիք>առէք

ց>ց՝ ցաւ>ցավ, խնոցի>խընօցի, դեղնուց>տէղնուց  
չ>չ՝ չամիչ>չամիչ, աղաչել>աղաչէլ, կանաչ>կանանչ:

Մասնակի հնչյունափոխության դեպքեր են՝

չ>ջ՝ խաչերկաթ>խաջրգաթ

ց>ս՝ ճրագալոյց>նրաֆալուս:

Բաղաձայնների կուտակման մեջ ֆ-ն ընկնում է՝ խօսքզրոյց>խօսզրուց, աչքակապուկ>աչքկապուկ>աշկաբուկ, խընթոտ>խըլլօտ:

Բարդ հնչյուններ (ծ, ծ, ց, ջ, ն, չ, փ, ք, ֆ): Զ, ծ, ց, ջ, ն, չ բարդ հնչյունները բաղաձայնների նախորդելիս կորցնում են իրենց պայթական բաղադրիչը (դ, տ, ք-ն) հանդես գալիս շփական տարրով. ձ>զ, ծ,ց>ս, ջ>ժ, ն,չ>շ: Ընդ որում, պարզեցման համար եզր է ծառայում տվյալ բառի ոչ թե գրաբարյան ձևը, այլ բարբառի կազմավորման ժամանակ տվյալ բառին հատուկ հնչումը: Այսինքն՝ զ-ի է վերածվում ոչ միայն գրաբարի ձ-ն, այլև՝ ծ-ն, որը մինչ պարզվելը հնչվել է

---

պաց, իսկ երբ ուղղված է մի գրական անձի, արտասանվում է բռտը փաց» (էջ 11—12): Թ, գ, դ, ձ, ջ-ի բարբառային հնչման հիշյալ երկվությունը կարող է բացատրվել միայն հնչյունական շղթայում այդ բաղաձայնների գրաված դիրքով:

ձ. ա-ի են վերածվում ոչ միայն ծ,ց-ն, այլև ձ-ն, որը որպես միջին օղակ նախ հնչվել է ց. նույն ձևով ծ կա գրաբարի ջ, ժ-ի և շ կա ն, շ,ջ-ի դիմաց.

ձ>զ՝ անձրել>ածրէվ>ազրէվ>ազգէվ, թանձր>թանզր>թարզ, մեծանալ>մէձնալ>մէզնալ, կծկել>կըձգէլ>կըզգէլ, մեծ մարդ>մէձ մարթ>մէզ մարթ

ծ,ց>ս՝ անէծք>անէսի, երիցակին>իրիսիին, քացախել>ֆասխիլ, անցանիլ>ասնիլ, բարձր>պարցր>պարսր>պարս:

Այսպես նաև՝ ցոյական հիմքից կազմվող կրավորաձև բայերում՝ վրլասֆիլ (վլացվել), պասֆիլ (բացվել):

Այս օրինաչափությունը պահպանվում է նաև այն դեպքում, երբ բառն ավարտվում է ց-ով, իսկ հաջորդ բառն սկսվում է բաղաձայնով՝ կամաց-կամաց>կամաս-կամաս, բացբերան>պասպէրան: Բառը ց-ով ավարտվելու և ն որոշյալ հոդ ստանալու դեպքում դարձյալ ց-ն պարզվում է ա-ի՝ հացն ալ>հասն ա:

Արմատական խուլ հնչյուն ունեցող բայերի դեպքում ցոյական հիմքում խուլ հնչյունները միանալով ց-ին՝ դառնում են ծծ. կարօտցա>կարօծծա, մէծցա>մէծծա, հիվընտցա>հըվըծծա: նաև՝

ջ>ժ՝ յօրանջել>կէրծգըդալ, կոճակել>կօջադէլ>կօժգէլ, խղճմըտանք>խըղջմըդանք>խըժմըդանք:

ձ, շ>շ՝ նոճֆ>նօշի, աշք>աշի, քիշ մը>ֆիշ մը, թարթիչներ>թարթիշներ, իջանիլ>իշնալ>իշնալ:

Հանգոյց բառի դիմաց կա հանգուշտ: Պետք է ենթադրել, որ նախ՝ տեղի է ունեցել ց>չ փոփոխություն, ապա ա-ի հավելումով շ-ն օրինաչափորեն պարզեցվել է շ-ի. հանգուլց>հանգուշ>հանգուշտ>հանգուշտ:

Փ, ք, ֆ շնչեղ խուլ բարդ հնչյունները խուլ և շնչեղ խուլ հնչյունների հարևանությամբ ապաշնչեղանում են և հանդես գալիս պարզ խուլ բաղադրիչներով՝ պ, տ, կ-ով: Այս դեպքում ևս պարզվում են ոչ միայն գրաբարի փ, ք, ֆ հնչյունները, այլև արդեն խոսակցական լեզվում փ, ք, ֆ-ի վերածված բ, դ, գ հնչյունները.

փ>պ՝ աղբ>ախփ>ախպ, երկուշաբաթի>էրգուշափթի>էրգուշապաթի

թ>տ՝ մխիթարել>մըխթարել>մըխտարէլ, աղօթք>աղօտի, վաթսուն>վատսուն>վաժուն>վածծուն, փաթաթել>փաթթել>փատտել:

Նույն ձևով՝ բարբառային սօտտէլ-ը սոթոթել-ից: Նույն սկզբուն-

քով արմատական ք ունեցող ցոյական հիմքով բայերի անցյալ կատար-  
յալ ժամանակում թց հնչյունակապակցությունը դառնում է ծծ՝ մուծծավ  
(մուտծավ < մութծավ < մութցավ), խօրծծավ (< խորթցավ):

Խաւքն բառի ք-ն ա է դարձել խուլ խ հնչյուն նախորդելու պատճա-  
ռով՝ հաւթն > օխթն > օխտը: Նաև՝

ք > կ՝ խմիշք > խըմիշկ, քաղաքացի > ֆախկըցի, ագահ > աֆահ >  
աքքահ > ախկահ:

Ք-ն շնչողությունը կորցրել է նաև յօգնել > օֆնել > օկնել բառում՝  
ոնգայիններից առաջ ձ, ծ, ց, ջ, ն, շ հնչյունների փոփոխությունների  
նման:

Ք-ն նշված դիրքում չի պարզեցվում կ-ի ֆան-ով բաղադրված ձևե-  
րում՝ ինշքան > իշֆան, այսքան > ասֆան և ծնօղք > ծընօխք բառում,  
ուր գիտակցվում է ֆ-ի հոգնակերտությունը:

Ձ ա յ ն ե ղ շ փ ա կ ա ն ն ե ր: Բառասկզբում, ձայնեղների հարևա-  
նությամբ, միջձայնավորային և բառավերջի ետձայնավորային դիրքե-  
րում վ, զ, ժ, դ-ն<sup>22</sup> մնացել են նույնը:

Ձայնեղների հարևանություն ասելով նկատի պետք է ունենալ ոչ  
միայն գրաբարի ձայնեղների մոտ հանդես եկող դիրքերը, այլև գրաբա-  
րի խուլերի դիմաց բարբառում առկա ձայնեղների հարևանությունը:

վ > վ՝ վաստակել > վաստկիլ, հաւանել > հավնիլ, հով > հօվ

զ > զ՝ զատել > զադէլ, լեզու > լըզու, քարոզ > ֆառօզ

ժ > ժ՝ ժիր > ժիր, արժել > աժէլ, շարժ > ժաժ

դ > դ՝ աղալ > ադալ, մատղաշ > մադղաշ, թեղ > քէղ || քըղ:

Հայտնի է, որ գրաբարում դ-ով սկսվող բառեր չկային, մինչդեռ  
քրքռ. փոխառյալ բառերի շերտում ունի՝ դաթ, դագան, դարմա, դա-  
փաղ և այլն, ինչպես նաև դ-ով սկսվող հատուկ անուններ՝ Ղազար, Ղու-  
գաս, Ղէվօնք: Գրաբարի հետ ընդհանուր բառերի շերտում առկա ուղե-  
տրել և ուղարկել բառերում ու-ն ընկել է, իսկ՝ դ > դ կամ դ > խ. դավ-  
րել և դրգել || խըրգել:

Գրաբարի խուլ շփականների և ձայնեղների դիմաց առկա խուլերի  
մոտ վ, զ, ժ, դ՝ ձայնեղները հնչվում են խուլ՝ ֆ, ս, շ, խ. հաւասար >  
հաֆասար, զուգուիլ > սըֆֆիլ, դժգոհ > քըշկօհ, աստղ > ասխ:

Ձայնեղ և շնչել խուլ պայթականների ու կիսաշփականների հետ  
դ-ի զուգորդումներին, երբ դ-ն զուգորդման առաջին բաղադրիչն է

22 Բարբառի կազմավորման շրջանում գրաբարի դ-ն այլևս ձայնորդ չէր. այն  
հանդես է գալիս շփականներին հատուկ հնչյունափոխությամբ:

(ղը-ղփ, զգ-զֆ, զդ-զթ, զծ-զց, զջ-զշ), բարբառում համապատասխանում են խպ, խկ, խտ, խց, խշ խուլ զուգորդումները. աղը>ախպ, աղ-բիւր>ախպուր, Սեղբոս>Սէխպօս, շաղգամ>շօխկամ, աղդոտ>ախտօտ, աղջիկ>ախշիկ: Ընդ որում, ձայնեղ պայթականների հետ զուգորդումներում նախ տեղի է ունեցել ձայնեղների շնչեղ խլացում՝ աղ-բայր>աղփար, ապա՝ շնչեղ խուլի աղդեցությամբ դ-ի խլացում՝ աղ-փար>ախփար, այնուհետև խուլ հնչյուն խ-ի առնմանությամբ տեղի է ունեցել փ-ի ապաշնչեղացում՝ ախփար>ախպար: Որ զբ, զդ, զգ...>խպ, խտ, խկ... անցումն, իրոք, նշված ընթացքով է կատարվել (այսինքրն՝ հիշյալ զուգորդումներն ունեցող բառերը կենդանի խոսակցական լեզվից բարբառ են անցել այն շրջանում, երբ խախտվել էր գրաբարի գրության ու արտասանության համապատասխանությունը, և խոսակցական լեզվում զբ, զգ, զդ հնչյունակապակցություններն առնվազն արդեն հնչվում էին զփ, զֆ, զթ, որից հետո բարբառում՝ խփ, խֆ, ապա՝ խպ, խկ, խտ), վկայում են շնչեղ փուլերի հետ դ-ի զուգորդումներով օրինակները՝ աղ-բատ>ախբատ>ախկատ, յաղթել>հախթել>հախտել, թուղթ>թուխթ>թուխտ: Իսկ որ վերջին ձևերում էլ նախ կատարվել է դ-ի խլացում, ապա խուլ խ-ի առնմանությամբ փ, ք, ֆ շնչեղ փուլերի ապաշնչեղացում, հաստատում են մխիթարել>մըխթարել>մըխտարել, դժոխք>տըծօխկ ձևերը: Թեև չունենք զփ, խփ զուգորդումներով օրինակներ, սակայն, բերված ձևերն, անշուշտ, ենթադրել են տալիս միասնական օրինաչափություն:

Նույնպիսի խլացում է կատարվել ձայնեղ պայթականների՝ գ-ի հետ ունեցած զուգորդումներում՝ զգ>սկ||ըսկ, զբ>սպ||ըսպ, զդ>ստ||ըստ (ը-ով տարբերակները հանդես են գալիս բառասկզբում): Պարզեցման ընթացքը նույնն է յբ, զգ, զդ... զուգորդումների պարզեցման ընթացքի հետ, ինչպես՝ զգ>զֆ>սֆ>սկ, զբ>զփ>սփ>սպ և այլն. զզոյշ>ըսկոյշ, զգեստ>ըսկէստ, ազգ>ասկ, վազգեն>վասկէն, ազբ>ասպ:

Ընդհանուր օրինաչափությունից դուրս դիտվում են ձայնեղ շփականների նաև մասնակի հնչյունափոխության դեպքեր: Օրինակ՝

վ>բ՝ կեղեւել>կէղվել||կէղբել: Այստեղ, ըստ երևութին, առկա են հնչյունական երևույթների հնագույն հետքեր, եբր վ-ն և բ-ն իմաստազատիչ դեր չունենին, նույնարժեք էին: Կամ՝ շատ ետին շրջանի իրողություն է՝ կճպել>կըթբել ձևի համաբանությամբ գոյացած:

վ>ֆ՝ հարաւ>հարաֆ, Ազնիւ>Ասնիֆ

զ>ձ՝ ձուազեղ>ձըվաձէղ

զ>ծ՝ երազ>էրած

դ>խ՝ բեզ>պէխ, ասեզ>ասսէխ. վերջին հնչյունափոխությունը կատարվել է խուլ սուլականն ու հնչյունի առնմանությամբ, որի կրկնակ հնչումը ուժգնացրել է խլության ազդեցությունը և առաջացրել դ>խ փոփոխությունը:

ժ>ճ՝ պատիժ>պատին:

Խ ու լ շփականներ. Գրաբարի խուլ շփականները բոլոր դիրքերում հիմնականում մնում են նույնը.

ս>ս՝ սակառ>սագառ, լսել>լրսել, հիւս>հոս

շ>շ՝ շալակել>շալգել, նշան>նիշան, ուրիշ>ուրուշ

խ>խ՝ խոզան>խօզան, փոխել>փօխել, աղխ>ախ

հ>հ՝ հերու>հէրու, նահատակ>ներհաղակ, մահ>ման:

Ս, շ, խ-ն հարևան հնչյունների վրա ունեն որակական ազդեցություն: Դրանց մոտ ձայնեղները և շնչեղ խուլերը համապատասխանաբար ապաձայնեղանում և ապաշնչեղանում են՝ վերածվելով պարզ խուլերի, ինչպես՝ նղիսաբեթ>էխսափէթ, խօսք>խօսկ, ուշք>ուշկ:

Բառում շ, ն, շ հնչյուններ լինելու դեպքում բառակազմի շ-ն վերածվել է ս-ի՝ շչականների տարնմանության օրենքով. շունչ>սունչ, շրջել>սրջել, շիճուկ>սիջուկ:

Հ-ն, բոլոր բարբառների նման, ընկել է՝ ա) ր-ից հետո. արհեստ>արէստ, շնորհաւոր>շընավօր, աշխարհ>աշխար: Բացառություն են կազմում օրհասարակ>օրհարակ, բորհել>պօրհել ձևերը:

բ) Այն բարդ բառերի երկրորդ եզրում, որոնք անհոդակապ են՝ խոտհունձ>խօդունձ, ջրհեղեղ>նըրէղէղ, կտաւահատ>կըղավատ:

գ) Մի քանի հատուկ անունների բառավերջի ետձայնավորային դիրքում. Սեպուհ>Սէքու, Շապուհ>Շաքու, Զարեհ>Զարէ:

Խուլ շփականների մասնավոր հնչյունափոխության դեպքեր են՝

ս>զ՝ խորիսխ>խօրիզ (խ-ի անկումով)

խ>հ՝ խաղող>հաղօղ>հավօղ

հ>թ՝ օրհնել>օրթնել, որից և՛ տընօրթնէք

հ>յ՝ պահ մի>պայ մը, ահա հիմա>այմա, վահրամ>վայրամ, Զոհրապ>Զօյրապ:

Ձայնոդներ. Գրաբարի ձայնորդները ընդհանուր առմամբ հանդես են գալիս անփոփոխ.

լ>լ՝ լալն>լան, վալել>վալլել, ծալել>ծալլել:

Անցյալ դերբայի -եալ վերջավորությունը, արեւմտյան խմբի շատ

բարբառների նման, այստեղ ևս դարձել է -էր. կերեալ>կէրէր, փախուցեալ>փախէր:

Մ>մ՝ մատանի>մաղնի, խմոր>խըմօր, սերմն>սէրմ:

Բայերի ըղձ. եղ. ապ. ժամ. հոգ. թվի 1-ին դեմքի -մէ վերջավորութիւնը դարձել է -նէ. վազեմք>վազինէ, խօսիմք>խօսինէ, աղամք>աղանէ:

ն>ն՝ նէր>նէր, հանել>հանէլ, երկուն>երգուն||իրինգուն:

Բառավերջում գաղտնավանկ կազմող զրաբարյան ն-ն ընկել է. ծոգկն>ծունգ, եղունգն>ըղունգ, փայծաղն>փաձէղ:

Խաւքն և ինն բառերում ն-ն ընկել է, բայց պահվել է գաղտնավանկը-ն՝ օխաը, ինը:

Մի շարք բառերում նլ և լն կապակցութիւններում կատարվել է լիակատար առնմանական փոփոխութիւն՝ նլ, լն>լլ. բանալի>պալլիք, ելանել>էլնալ>էլլալ, խլնոտ>խըլլօտ, կլանեցուցանել>կլնեցուցանել>կըլլեցընէլ, կալնիչ>կալլիչ, նաև բարբառային թալանել>թալլէլ ձևը: Այդ կանոնին չեն ենթարկվում. անվա>անվըլա, տբալ+նէր (գդալներ), անլըզու (անլեզու), թուլանալ>թուլնալ, անալի>անլի:

Ն-ն, որպես կանոն, բարբառում երկու բաղաձայններից առաջ ընկնում է. հանգչել>հաֆչիլ, ինչքան>իջքան, անձրեւ>առգէվ, կանգնել>կայնիլ: Օրինաչափութիւնը պահպանվում է, երբ նույն դիրքն է առաջանում բառակապակցութիւններում՝ հինգ մարդ>հիք մաւրք:

Շրթնային բաղաձայններից առաջ առնմանութան օրենքով՝ ն>մ՝ անբախտ>ամփախտ, անփորձ>ամփօրց, ճանապարհ>ճամփա:

Ռ>ռ՝ ռահան>ռէհան, քառասուն>քառսուն, բուրուռ>փուրվառ  
ր>ր՝ ցերեկ>ցօրէկ, գուրպալ>կուրբա, երկիր>էրգիր<sup>23</sup>:

Նր-ի դիմաց ունի ո՝ ծանր>ծառ, մանր>մառ, մանրուք>մառուք, մանրել>մառէլ: Նր>ր/ռ անցումը, ինչպես նշել է Աճառյանը<sup>24</sup>, կատարվել է նոր օղակի միջոցով: Այդ են վկայում նաև Երզնկայի մի շարք օրինակներ. սանդր>սառ, կադրիւ>կառէվ, ընտրել>ըռտէլ:

Տր-ի դիմաց ևս ունի ո. կոտրել>կօտէլ, կարել>կրտէլ, կտրիճ>կրոիճ, Պետրոս>Պէոս, լիտր>լիռ, պատրոյգ>պառուք:

Ժ և շ հնչյուններից առաջ ր-ն ընկել է. արժան>ւձժան, կարժ>

<sup>23</sup> Մթնի գլուղում ր-ն որոշ դիրքերում հնչյունափոխվում է յ-ի, ինչպես՝ արծաթ>այծաթ, մարդ>մայթ, սիրտ>սիլտ, կարմիր>կայմիր, մայրս>մայրս, արդար>այթար, սերմ>սէլմ, քիտն>քիլին:

<sup>24</sup> Հ. Աճառյան, Քննութիւն պոլսահայ բարբառի, էջ 63:

կած, խարշել>խաշել, քարշել>քաշել: Բացառություն են մի շարք գրական ձևեր՝ վաթժարէտ, Արշակ:

Մի քանի բառերում *ր*-ն ընկել է հաճախակի գործածության պատճառով<sup>25</sup>. ներս>նէս, դուրս>տուս:

Յ>յ՝ բառամիջում (ձայնավորի և բաղաձայնի միջև)՝ պայման>պայման, հայելի>հայլի, միավանկ բառերի վերջում՝ հայ>հայ, վայ>վայ: Յ-ն ընկել է՝ ա) բառասկզբում՝ յարդ>էրթ, յիսուն>իծծուն, յօգնէլ>օկնէլ, յստակ>իստակ, Յարութիւն>Արութ, բ) միջձայնավորային դիրքում՝ նայել>նաիլ, մայիս>մաիս, Միքայել>Միքաէլ, գ) բաղմավանկ բառերի վերջում՝ տղայ>տըղա, վկայ>վըգա, սատանայ>սաղանա:

Բառասկզբում *յ*-ն հանդես է գալիս նաև հայերենի ընդհանուր պատմական հնչյունափոխության սահմաններում, իբրև *յ*>հ փոփոխություն՝ յաղթել>հախտէլ, Յիսուս>Հիսուս, յօտ>հօտ:

Ձայնորդների մասնակի հնչյունափոխության դեպքեր են՝

*ր*>*ն*՝ նախիր>նախըռ, ծարաւենալ>ծառվընալ, մեղր>մէռղ, մարիս>մառիս, թաղար>թաղառ, երեսուն>էրսուն: Վերջինում *ր*>*ռ* փոփոխությունը կատարվել է քառսուն բառի համաբանությամբ:

*ր*>*լ*՝ երիկամ>լիլգամ, բարաւոր>պալավար, ջրապուր>նըլբուր, վրթանես>վըրթանէս||վըլթիկ

*ռ*>*լ*՝ կայծոռիկ>կաձօլիկ

*ռ*>*ր*՝ վտառ>վըթար (ձկների երամ)

*յ*>*հ*՝ դայեակ>տահէկ, ճայեակ>ճահէկ:

## ՀՆՁՅՑՈՒՆԱՓՈԽԱԿԱՆ ԱՅԼ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

### Հ ա վ ե լ ու մ

ի—ինձ>ինձի||ընձի, քեզ>քէզի||քըզի

ը—նմանել>ըլմանիլ

դ—թոնիր>թունդիր, ստեպղին>տէղբինդ

հ—ռպունք>հռպունք, ընտրել>հըռէլ, արբենալ>հարփէլ, ալեւոր>հալվօր, ագանիլ>հաքնիլ, ագուցանել>հաքցընէլ

մ—կանափ>կանամփ

ն—պարտատէր>պառքընդէր, երիկուն>իրինգուն, աղջիկութիւն>ախիգնութուն, դու>տուն, է՛ջ>ինչի՛ր, մեք>մէնք, կանաչ>կանանչ,

կամուրջ>կարմունջ, գոթանշ>գոնֆանշ, արտասուք>արցունք, կր-  
տոյց>կրդունց: Ն-ի հավելմամբ օրինակներից շատերը արտահայտու-  
թյուն են բարբառային որոշակի տարածքում գործող այն հնչյունական  
հատկանիշի, ըստ որի փ, ք, ֆ, ց, շ շնչեղ խուլներից առաջ ավելանում  
են ռնգայիններ:

տ—հանգոյց>հանգուշտ, հոգեկորոյս>հօֆէգօրուստ

ր—սարկաւազ>սարգավարֆ (պաղիրարֆ բառի համաբանությամբ),  
կտաման>կըդրաման, գազաթ>կագարթ, կովածուծ>կօվըծուծ  
ֆ—թամբ>թամֆ, ետ>ետֆը>յէտկը, բանալի>պալլիֆ, ջրա-  
ղաց>ջրաղացֆ>նաղասկ, բարեկենդան>պարգէնթանֆ և մի շարք  
բառեր, որոնցում մթազնված է գրաբարի ֆ հոգնակերտի իմաստը:

### Ա Ն Կ Ո Ւ Մ

ու—երկու-երկու>էրգ-էրգու(ֆ)

որհ—շնորհաւոր>շընավօր

ող—ողկոյզ>կուզ

բ—թամբ>թամբ

դ—սանդ>սան

ղ—աղխ>ախ, աղխել>ախէլ, խղճմտանք>խըծսըղանֆ, բղխել>  
պըխէլ, կոճղ>կօճ

կ—ծմակ>ծըմա, թրքակալ>թըրֆալ, կրնկակոխ>կըրընգօխ

հ—հովանոց—օվանօց, պահք>պաֆ

ն—կորնգան>կօրընգա, կաղանշան>կաղըշնա, տէրնընդայս>  
տէրընդաս, ստաքա (СТАКАН)

ռ—առնել>անէլ

ս—սկեսուր>կէսուր, սկեսրայր>կէսար||կէսար, ստեպղին>տէղ-  
քինդ

տ—աստղ>ասխ, Աստղիկ>Ասխիկ, պաշտպան>պաշպան, աս-  
տուած>ասված, պատճառ>պաճճառ, խիստ>խիս

ր—բարձր>պարս, կտոր մի>կըզօ մը, երբ>յէփ, երբ որ>յէփօ,  
ընդ որ>իճզօ, որ>օ (շաղկապ), սուրբ>սուփ, երթալ>էթալ, տար-  
գալ>տըֆալ, կրճատ>կըջատ, ջրաղացք>նաղասկ, բաղարջ>պաղաշ  
ճի—ահա հիմայ>այմա

### Ա Ո Ն Մ Ա Ն Ո Ւ Մ

ի-ու—ուրիշ>ուրուշ

ը-ու—սնդուկ>սունդուկ, ընկոյզ>ընգուզ>ունգուզ

Է-ի—երկկամ>իլիգամ, երկցակին>իրիսկին, երկուն>իրինգուն  
 շ-ժ—շարժ>ժած  
 դ-ն—դժգոհել>նըշկօհիլ  
 ծ-զ—ծառագարդար>զարգարթար (նահ՝ ո-ր)

#### Տ ա ր ն մ ա ն ու մ

դ-վ—խաղող>հաղող>հավող  
 ն-լ—նմանել>լլմանիլ  
 դ-ր—մղեղ>մրել  
 ր-լ—ուրար>ուրալ

#### Գ ր ա փ ո խ ու թ յ ու ն

դր/ռդ—մեղր>մէռդ  
 ձր/զր/րզ—թանձր>թազր>թարզ, անձրիւ>արզիվ  
 ձր/ցր/ւր/ւս—բարձր>պացր>պասր>պարս  
 սր/ւս—անսոր>նօս, սկիսրայր>կէրսար, օրհասարակ>օրհար-  
 սակ  
 րի/իր—պատրիարք>պաղիրարք, Գրիգոր>կիրգօր  
 խս/սխ—խստոր>սքխտօր  
 մր/ւմ—կամուրջ>կարմունջ  
 փեա/թէբ—փետուր>թէբուր||թէբուլ  
 րի/րյ/յր—Մարիամ>Մարյամ>Մայրամ  
 լվ/վլ—լուալ>լրվալ>վրալ, լուացք>վրասկ  
 կն/նգ—ականջ>անգաջ  
 րհւ/ուր—զրուցել>զուրցել  
 կո/ռկ/ռդ—ակռայ>առգա>առդա  
 պո/ռպ—ճիպո>նիռպ, ճպոտ>նըռքօտ  
 շխ/խշ—բաշխել>պախշիշ անել, նախշուն>նաշխուն  
 պր/րբ—տոպրակ>տօրբակ  
 նշ/շն—կաղանշան>կաղըշնա

#### Հ ն շ յ ու ն ի կ ր կ ն ու թ յ ու ն

ծծ—կացին>կածծին, յխուն>իծծուն, վաթսուն>վածծուն, կծիկ>  
 կըծծիկ  
 սս—ասեղ>ասսէխ, մասսա (գավազան)  
 մմ—ամեն>ամմեն, նրամմեցէք (համեցեք)

տտ—քթոց>ֆրտոց, փտել>փրտալ  
լլ—ծալել>ծալլել, մօլլա  
նն—պատճառ>պանճառ  
կկ—ազահ>ակկահ  
թթ—Հուդա>Հութթա

### Հ ն չ յ ո ն ի ք ա ր դ ա ց ու մ

տս-ց—արտասուք>արցունք  
զ-ծ/ծ—երազ>էրած, երազահան>էրածահան  
ս-ծծ—յիսուն>իծծուն, վաթսուն>վածծուն

### Ա մ փ ո փ ու մ

անա—աշնանացան>աշընցան  
որ—օրորան>օրան

Հնչյունի պարզեցման դեպքերը բարբառում լինելով խիստ օրինա-  
չափ՝ քննված են առանձին՝ «Բարդ հնչյուններ» բաժնում:

### Ժ ո ղ ո վ ր դ ա կ ա ն ս տ ու գ ա բ ա ն ո թ յ ո ն

Ստեպդին բառի բարբառի տեղքինդ ձևը ժողովուրդը ստուգաբանում  
է՝ տեղը պինդ, իբրև հոգում պինդ, ամուր գտնվող: Այս ստուգաբանու-  
թյունը արդարացնելու համար է, հավանաբար, որ բառավերջում ավե-  
լացված է դ հնչյունը:

Ճրագալույց>նրագալուս ձևում ց>ս հնչյունափոխությունը «ար-  
դարացվում է» նրագի լույս ժողովրդական ստուգաբանությամբ:

### ՇԵՇՏ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱՍԾ ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Նրզնկայի բարբառում շեշտը վերջին վանկում է: Շեշտվում են բո-  
լոր ձայնավորները՝ բացառությամբ ր-ի: Վերջին վանկում ր լինելու  
դեպքում շեշտը տեղափոխվում է նախորդ վանկ. ամա՛ն, առո՛ւն, ախ-  
շի՛կ, ֆիշէ՛ր, սրբո՞ւտ, ո՛ւթը, ի՛նք, հա՛ցը, խա՛նք: Շեշտը ր-ի վրա է  
ընկնում մայն այն դեպքում, երբ տվյալ բառում բացի ր-ից չկա այլ  
ձայնավոր. ֆսֆր՛ս, փր՛ստ, նր՛նգ:

Շեշտ չեն կրում ցուցական դերանունների սը, աը, նը/ըս, ըտ, ըն  
ձևերը. դրանք միշտ հանդես են գալիս իրենց որոշյալի հետ, որի վրա

էլ անցնում է շեշտը. սը մէ՛գը, տը մա՛րթը: Որոշիչը շեշտելու անհրաժեշտութեան դեպքում գործածվում է ցուցականների աս, աա, աան տարբերակները: Ա՛ս տուր ընծի:

Բառի աճման և թեքման դեպքում շեշտը որպէս կանոն տեղափոխվում է վերջին վանկի ձայնավորի վրա: Շեշտի տեղափոխութեան հետ կապված՝ նախորդ վանկում կարող է տեղի ունենալ հնչյունափոխություն: Սովորաբար հնչյունափոխվում են ի, ու, (<ու, ոյ), է(<է) և ա ձայնավորները՝ առաջացնելով հնչյունափոխութեան մի քանի տիպեր:

Հայտնի է, որ գրաբարում ա-ն կայուն ձայնավոր էր և ենթակա չէր հնչյունափոխութեան, բացառութեամբ մեկ-երկու դեպքերի՝ արմատաւմտիք, աստուած-աստծոյ:

Միջին հայերենում և գրեթե բոլոր բարբառներում խախտված է ա-ի այս կայունությունը և բառի աճման ժամանակ ա-ն ընկնում կամ հնչյունափոխվում է ւ-ի: Այդպէս է նաև Երզնկայի բարբառում: Սակայն ա/Օ և ա/ը հնչյունափոխությունները չեն ընդգրկում շեշտակիր ա-ով բոլոր բառերը: Միավանկ բառերը այդպիսի հնչյունափոխութեան երբեք չեն ենթարկվում, բազմավանկներից հնչյունափոխվում են հիմնականում փակ վանկով ավարտվողները: Այսպէս՝

ա/Օ՝ պէրան-պէրնի, պէրնէքէրան, բայց կա նաև պէրանբաց, ճագատ-ճագդի, զավակ-զավգի, բաց վանկում՝ փէսիկ||փէսաիկ, սաղանասաղանգութուն:

ա/ը՝ անգաջ-անգրջի, անգրծնէր, աշխար-աշխարի, վազվրզէլ (վազ-վազել):

Պետք է նկատել, սակայն, որ ա-ի հնչյունափոխությունը կանոնավոր չէ և չի ընդգրկում սպասելի բոլոր դեպքերը. շատ հաճախ ա-ն պահում է իր վաղեմի կայունությունը: Այս տեսակետից բարբառը մտնում է այն բարբառախմբի մեջ, որը միջին դիրք է գրավում գրաբարի և միջին հայերենի համակարգերի միջև:

Դեռևս գրաբարում հնչյունափոխվում էին ի, է, ու ձայնավորները: Ի-ն բարբառում հնչյունափոխվում է միավանկ բառերի փակ և բազմավանկ բառերի բաց և փակ վանկերում, առաջացնելով առաջին դեպքում՝ ի/ը, երկրորդ դեպքում՝ ի/Օ և ի/ը հնչյունափոխութեան տիպերը.

ի/ը՝ շիղ-շըղում, թիվ-թըվագան, սիրտ-սըրդօտ

ի/Օ՝ երգիր-էրգացի, կըռիվ-կըռվագան, տըրացի-տըրացօնք,

Բարբառում հնչյունափոխվում է գրաբարի միայն է-ի դիմաց առկա է-ն, առաջացնելով հիմնականում է/ի, մասամբ նաև՝ է/Օ հնչյուն-

նափոխության տիպերը, իսկ գրաբարի ե-ին և եա-ին համապատասխանող է-ն անփոփոխ է.

է/ի՝ մէշ-միշնօրք, էշ-իշաղէր, կէս-կիսվագէս

է/Յ կօմէշ-կօմշու

է/ը՝ մէշ-մըշէն:

Գրաբարի ե-ի դիմաց կան հնչյունափոխության հազվադեպ օրինակներ՝ ե/է/ը տիպով՝ քեզ-քէզ-քըզի:

Բարբառում հնչյունափոխվում է փակ վանկի ու-ն, որը համապատասխանում է գրաբարի ու-ին և ոյ-ին: Առաջանում են ու/Յ և ու/ը հնչյունափոխության տիպերը.

ու/Յ տըթում-տըթմաջարու

ու/ը՝ ուխտ-ըխտավօր, պուրթ-պըրթման, կունդ-կընդրլա,

Բազմավանկ բառերի բաց վանկի ու-ն հնչյունափոխվում է վ-ի.

ու/վ՝ կատու-կաղվի, կրձու-կըզվութուն, թըթու-թըթֆութուն (այստեղ ֆ-ն վ-ի տարբերակն է շնչեղ խուլ ք-ի մոտ):

Հատկանշական է, որ շեշտափոխության հետ կապված հնչյունափոխություն կատարվում է հատկապես ածանցման և բարդացման ժամանակ, իսկ բառը հոլովակերտ և հոգնանիշ թեթույթներ ստանալիս կարող է չհնչյունափոխվել: Իսկ ընդհանրապես շեշտի հետ կապված հնչյունափոխությունը բարբառում կայունացած չէ, և վերջին վանկում ա, ի, ու, է հնչյուններն ունեցող բառերը թեքվելիս, ածանցվելիս և բարդվելիս հանդես են գալիս. և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ հիմքերով (սէղանի||սէղնի, ծընգան||ծունգին, տիրօշ-տէրէրուն): Այդ զուգաձևությունները վկայում են, որ Երզնկայի բարբառը տիպաբանորեն զբաղվում է միջակա դիրք հնչյունափոխվող և անհնչյունափոխ հիմքերով համակարգերի միջև:

## Ա մ փ ո փ ու մ

Երզնկայի բարբառի ձայնավորական համակարգը գրաբարի համեմատությամբ էական տարբերություններ չի ներկայացնում: Հնչյունաբանական մակարդակում կատարված է և ե, օ և ո հնչույթների շեղութացումը վերաբերում է հոգրաբարյան շրջանի հայերենի բոլոր դրսևորումներին, բացառությամբ սակավաթիվ բարբառների: Նոր հնչույթների՝ ւ-ի և է-ի, առկայությունը ցածր հաճախականության պատճառով չի խաթարում ողջ ձայնավորական համակարգը, մանավանդ որ գրաբարի ձայնավորները բարբառում բոլոր դիրքերում մնում են անփոփոխ: Քացառություն են կազմում հետևյալ դեպքերը.

ա) բազմավանկ բառերի միջին վանկի ձայնավորի սղում կամ նրա հերթագայում ը ձայնավորի,

բ) ու-ով սկսվող մի քանի միավանկ բառերում շրթնային վ-ի հավելում,

գ) ե-ով սկսվող մի քանի միավանկ բառերում յ-ի հավելում,

դ) ե լծորդության բայերի ըդձ. եղ. ապ. ժամ. եզ. թվի Յ-րդ դեմքի է (<էջ) վերջավորության փոխարինում է հնչույթով,

ե) օժանդակ բայի ներկա ժամ. եզ. թվի Յ-րդ դեմքի է-ի փոխարինում է հնչույթով,

զ) ե-ի դիմաց ու-ից առաջ է հնչյունի առկայություն,

է) բառավերջի բաց վանկում ը-ի գործածության առաջացում, իսկ բառավերջի գաղտնավանկում ը-ի կիրառության սահմանափակում,

ը) շեշտի հետ կապված հնչյունափոխական նոր երևույթներ (հատկապես ա ձայնավորի հնչյունափոխություն),

Բարբառի ձայնավորների մյուս փոփոխությունները ներկայացնում են մասնակի դեպքեր:

Գրաբարի երկբարբառների դիմաց Երզնկան բոլոր բարբառների նման երևան է հանում պարզ ձայնավորներ, ընդ որում՝ ա) ալ>ա||ը (ը-ն միայն բառասկզբի դիրքում՝ որոշ ձևերում), բ) ոլ>ու, գ) իւ>ու, դ) եա>է և եա>ա:

Գրաբարի նկատմամբ բարբառի բաղաձայնական համակարգի տարբերություններն այսպիսին են:

Հնչույթաբանական մակարդակում՝

ա) վ-ի և լ-ի ենթահնչույթային հարաբերության վերացում, դրանց նույնացում իբրև շրթնատամնային ձայնեղ վ (ինչպես հոգրաբարյան շրջանի հայերենի բոլոր դրսևորումներում, բացառությամբ մեկ-երկու բարբառների),

բ) ֆ հնչույթի առկայություն,

գ) ղ և լ հնչյունների տարբերակվածություն իբրև առանձին, անկախ հնչույթներ (համապատասխան՝ դասական շրջանից հետո ողջ հայերենի զարգացման ընթացքին),

դ) խուլ և ձայնեղ պայթականների ու կիսաշփականների շարքերի միջև ենթահնչույթային հարաբերության առաջացում:

Հնչյունական մակարդակում՝

ա) բառասկզբում, հնչյունական շղթայից անկախ, գրաբարի ձայ-

նեղ պայթականների և կիսաշփականների դիմաց խուլերի առկայություն,

բ) ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ խլացում միջձայնավորային, բառավերջի ետձայնավորային և Ե-ից հետո գրաված դիրքերում,

գ) խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղացում ռնգայինների և ձայնեղ բաղաձայնների հարևանությամբ,

դ) խուլ շփականների մոտ ձայնեղների և շնչեղ խուլերի ապաձայնեղացում և ապաշնչեղացում,

ե) բաղաձայններից առաջ բարդ հնչյունների պարզեցում,

զ) գաղտնավանկում & վերջնահանգով բառերում &-ի կորուստ,

է) &-ի անկում երկու բաղաձայններից առաջ,

ը) & և առ հնչյունակապակցությունների դիմաց ո-ի առկայություն,

թ) & և առ առնմանական փոփոխություն:

Մյուս բոլոր դեպքերում և դիրքերում բաղաձայնները համակարգայինորեն մնում են անփոփոխ: Առկա շեղումները ներկայացնում են մասնակի դեպքեր:

## Բ Ա Ռ Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բառապաշարն ընդգրկում է երեք հիմնական շերտ՝ գրաբարի հետ ընդհանուր բառեր, բարբառային կազմություններ և փոխառյալ բառեր: Գերակշռող մասը առաջին շերտն է: Զգալի քանակ են կազմում նաև ինչպես գրաբարից ավանդված բառերի հենքի վրա բառակազմական զանազան միջոցներով, այնպես էլ անկախ դրանցից ստեղծված բարբառային կազմություններ:

Փոխառյալ բառերի թիվը, բաղդատմամբ արևմտյան խմբի բարբառների մեծ մասի հետ՝ քիչ է: Այս շերտում հիմնականում թուրքերեն, ապա՝ պարսկերեն, արաբերեն բառերն են: Սակավ քանակությամբ կան եվրոպական լեզուներից և հատուկենտ ռուսերենից փոխառություններ:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն բառերը, որոնք ակներևորեն լինելով հայերեն՝ պարբերում վկայված չեն: Դրանց մի մասը, անշուշտ, եղել է հին հայերենում, բայց ինչ-ինչ պատճառներով չի ավանդվել մատենագրության մեջ, մյուս մասն էլ հնդեվրոպական բառեր են կամ հին փոխառություններ, որոնք չեն պահպանվել գրաբարում: Այդ բառերի մի խումբ քննվում է «Բառային հնաբանություններ» վերնագրի տակ:

### ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բառերն ընդհանուր առմամբ բնութագրվում են մենիմաստությամբ: Բարբառում այնուամենայնիվ առկա բաղմիմաստությունը հիմնականում բառերի փոխաբերական իմաստով կիրառության արդյունք է, մասամբ էլ՝ ավանդույթի ուժ: Այսպես, կոտ բառի գրաբարյան հայտնի իմաստների («կոտ, կեր, կորիզ») հետ բարբառում կան նրա փոխաբերական իմաստով կիրառություններ, իբրև «1. դրամ, 2. խելք»։ Անգուղիին մէզն է (Աղքատ է, դրամ չունեցող է): Կրօխը գուտ չի գա (Գրել խում խելք չկա, խելք չունի): Վէճադուն՝ «վերևի հարկում գտնվող տուն» սովորական իմաստից բացի, կա մեկ այլ կիրառություն՝ «գլուխ,

ուղեղ» իմաստով. Սօ՛, բոլոր վերնագրուներ բարաբ է (Գրա գլուխը դասարկ է):

Գրաբարի և բարբառի համար ընդհանուր բառային միավորների միջև գոյություն ունեն իմաստաբանական զանազան հարաբերություններ:

1. Ճնշող գերակշռությամբ գրաբար-բարբառ ոլորտի բառերի իմաստների փոփոխությունները կատարվում են տվյալ իմաստային դաշտի սահմաններում: Այս դեպքում էլ փոփոխությունները կատարվում են երկու ոլորտում՝ իմաստի հարստության (մենիմաստություն-բազմիմաստություն) և իմաստի ծավալի (նեղացում-լայնացում):

1. Հատկանշական է, որ գրաբարյան բազմիմաստության դիմաց բարբառը երևան է հանում մենիմաստություն. ընդ որում՝

ա) այդ միակ իմաստը համընկնում է գրաբարյան հիմնական իմաստին: Սա գրաբար-բարբառ բառերի իմաստային արժեքների փոխհարաբերության ամենաբնորոշ ու հիմնական արտահայտությունն է: Տալիս ենք միայն ա-ով սկսվող այն բառերի ցանկը, որոնք գրաբարում բազմիմաստ են, իսկ բարբառում մենիմաստ, և այս իմաստը համընկնում է գրաբարի հիմնական իմաստին. ասկ, ամբ, ամփօխչ, այլանքակ, էրէլ, անֆօրժ, անէր, ինալ, ասօր, արօռ, ածէլ, ածըլի, ախալ, ախչիկ, ախկատ, անաւատ, անխիխն, անգօղին, անճավատ, ասնիլ, նօրս, աշխար, արբանֆ, անչի, առատ, առու, ըսէլ, անժան, արուն, արձաբ:

բ) Հաճախ գրաբարի բազմիմաստության դիմաց բարբառը երևան է հանում մի իմաստ, որն առաջնայինը չէ գրաբարի համար: Օրինակ, երկիր > էրգիր բառը հին հայերենում ունի հինգ իմաստ, որից երկրորդը՝ «գավառ, հայրենիք» իմաստն է: Այս՝ «հայրենիք, գավառ, ծննդավայր» իմաստն է բարբառում դարձել միակ և հիմնական իմաստը: Իշխել > իշխրնալ բայը գրաբարում ունի «տիրել» առաջնային իմաստը, իսկ երկրորդաբար այն արտահայտում է նաև «համարձակվել, հանդերձնել» իմաստը: Բարբառում կայունացել է վերջինը որպես միակ և հիմնական իմաստ: Օգուտ բառից, որը գրաբարում երկրորդաբար արտահայտում է «բավական, հերիք» իմաստը, բարբառում կա օկտել բայածեր՝ «բավականացնել, բավել, հերիքել» միակ իմաստով: Պարապ բառի վկայված երրորդ իմաստն է «դատարկ», որը հիմնականն է բարբառի համար: Վերանալ > վերնալ բայը գրաբարում ունի «վեր ելնել» և «վերանալ, չքանալ» իմաստները. բարբառն ունի միայն վերջին իմաստը:

գ) Ոչ մեծ թվով բառեր գրաբարի բազմիմաստության դիմաց ի հայտ են բերում մեկից ավելի իմաստներ: Այսպես, բաժանել>պաժնել բայը գրաբարում և բարբառում ունի «1. բաժանել, 2. զատել, 3. զատվել» իմաստները: Դարան>տարան արտահայտում է «1. ծածուկ կենալու տեղ և 2. որոգայթ» իմաստները: Դուր>տուր՝ «1. հարթ տեղ, 2. հյուանի բերիչ»: Թագաւոր>թափաւոր՝ «1. թագավոր, 2. փեսա». վերջին իմաստի համար բրբռ. հանդես է բերում հնչյունափոխված ձև՝ քափֆօր: Թաթ>քաթ՝ «1. տոտիկ, 2. կշեռքի նժար», բարբառում առաջին իմաստը՝ ընդհանրացած է նաև «ձեռքի թաթ» իմաստով: Թաթ է անվանվում նաև ձեռնոցի և գուլպայի այն մասը, որն ընդգրկում է ձեռքի և ոտքի թաթերը:

դ) Խիստ սակավ են այն դեպքերը, երբ գրաբարի մենիմաստ բառի դիմաց բրբռ. ունի մեկից ավելի իմաստներ: Առիթ>առեֆ բառը գրաբարում ունի միայն «առաստաղ» իմաստը, բարբառում նաև՝ «քիմք»: Զատիկ>զադիկ, գրբ.՝ «կրոնական (ժողովրդական) տոն», բարբառում նաև՝ «միջատի տեսակ»: Պարան>պարան, բացի գրաբարի «պարան» սովորական իմաստից, բրբռ. ունի նաև այգու մեջ «որթատունկերի շարք» իմաստը: Առաջին իմաստի համար ավելի շատ գործածական է չովան ձևը: Պենդե>պըջեզ, գրբ.՝ «ոտքի կոճը», բրբռ.՝ «1. կճղակավոր կենդանիների կճղակի մեկ մասը, 2. ընկույզի միջուկի մասերը, 3. սըխտորի մասերը»:

2. Գրաբար-բարբառ շերտի բառերը մնալով իմաստային նույն դաշտում, դրսևորում են իմաստների ծավալային փոփոխությունների տարբերություններ:

ա) Գրաբարի մասնավոր իմաստին համապատասխանում է տվյալ երևույթի, հասկացության ընդլայնված, ընդհանրացած իմաստը: Այսպես, նենո>նէո, գրբ. նշանակում է «անտիքրիստոս», բրբռ.՝ «չար ոգի, շար մարդ»: Թեփ>թէփ, գրբ. ունի «1. ցորենի թեփ, 2. ձկան թեփ» մասնավոր իմաստները, իսկ բրբռ.՝ «թեփ» ընդհանրապես: Վիճակ բառի գրաբարյան վեց իմաստներից «մեկին ընկած բաժին» իմաստն է գործածվում բարբառում, այն էլ ընդլայնված իմաստով՝ «համբարձման տոն», որի ժամանակ վիճակ են գցում: Հուր>հուրֆ, գրբ.՝ «կրակ» բրբռ.՝ «ջերմություն, տաքություն» ոչ միայն կրակի, այլև՝ տապի, տոթի:

բ) Ավելի հաճախակի են այն դեպքերը, երբ գրաբարի ընդհանուր իմաստ արտահայտող բառը բարբառում ունի նեղ, մասնավորված իմաստ: Այսպես, գլխաւոր>կըլխավօր բառը գրաբարում նշանակում

է «գլուխ եղող, երեւի» (անձ, բան), իսկ բարբառում իմաստով մասնավորված է և նշանակում է «ամուսին»՝ որպես տան գլուխ եղող: Թան>թան, գրբ.՝ «թաց ուտելիք, ապուր», բրբռ.՝ «մածունի հարածը»: Աղբերակն>ախպէրակ, գրբ.՝ «ջրի ակ», բրբռ.՝ «աչքի ծայրամասը քթի կողմից», որտեղից արցունքն է հոսում: Գմբեայ, կմբեայ>կրմբիկ, գրբ.՝ «գմբեթի ձևով, ուռած», բրբռ.՝ «բռունցք»: Դարձ առնել>տարց առել, գրբ.՝ «դառնալ», բրբռ.՝ «հիվանդութեան կրկնվելը»: Կատար>կադար, գրբ.՝ «վերի և վերջին ծայրը», բրբռ.՝ «հավի կատար»: Հալաւ>հալավ, գրբ.՝ «հագուստ», բրբռ.՝ «հարս ու փեսայի հագուստ»: Հոր>հօր, գրբ.՝ «հոր» ընդհանրապես, բրբռ.՝ «այն փոսը, որի մեջ ջուլհակը կախում է ոտքերը գործելու ժամանակ»: Զաղկել>ծաղգել, գրբ.՝ «1. ծեծել, 2. ծեծ ուտել», բրբռ.՝ «բուրդ և բամբակ ծեծել»: Շոր>ջօր, գրբ.՝ «լաթ, լաթեղեն», բրբռ.՝ «նորածին երեխայի լաթեղենը»: Շուրթն>շուրթ, գրբ.՝ «1. պոկունք, 2. լեզու, խոսք», բրբռ.՝ «թոնրի կողերը»: Ունկն>ունգ, գրբ.՝ «ականջ», բրբռ.՝ «ամանի ականջ, բռնատեղի»: Սոթտել>սօտտել, գրբ.՝ «ամփոփել, հավաքել», բրբռ.՝ «հագուստի թևերը և քղանցքը վեր բարձրացնել»: Բարբառում այդ բառն ունի նաև նոր իմաստ՝ «կողոպտել»: Օրհասարակ>օհարսակ, գրբ.՝ «1. օր, 2. ցերեկ, 3. տարի», բրբռ.՝ «կէսօր»: Հորդել>հօրթել, գրբ.՝ «ճանապարհ բանալ, հարթել, ուղղել», բրբռ.՝ «առուն աղբից մաքրել, առվի ճանապարհը բացել»: Վազել>վազել, գրբ.՝ «վազել», բրբռ.՝ «հոսել»: Մաղել>մաղել, գրբ.՝ «մաղով անցկացնել», բրբռ.՝ «բարակ անձրև տեղալ»:

զ) Տվյալ բառը գրաբարում և բարբառում արտահայտում է մերձավոր իմաստ: Հաճար>հաջար, գրբ.՝ «տարեկան», բրբռ.՝ «ձավար»: Հատիկ>հաղիկ, գրբ.՝ «հունդի հատ՝ թռչունների կերակուր», բրբռ.՝ «խաշած ցորեն»: Զիգ>ծիգ, գրբ.՝ «պիրկ», բրբռ.՝ «պինդ, ամուր, հաստատ»: Ծաշ>հաշ, գրբ.՝ «կեսօրվա կերակուր», բրբռ.՝ «գաթայի տեսակ»: Ընեճոտել>նէնջօղիլ, գրբ.՝ «ծխոտվել, մրոտվել», բրբռ.՝ «յուղոտվել, ճարպոտել»: Ծոխացուցանել>նօխնօխքնել, գրբ.՝ «հարբստացնել, մեծացնել», բրբռ.՝ «գովել, պանծացնել»: Խեռ>խէռ, գրբ.՝ «ապստամբ, ըմբոստ», բրբռ.՝ «ոխ, քեն»: Մլիլ>ծլլել, գրբ.՝ «ընձյուղվել», բրբռ.՝ «նալ»՝ «քաղցրավենիքի շաքարոտվելը»: Ժիր>ծիր, գրբ.՝ «կտրիճ», բրբռ.՝ «ամուր, պինդ»: Փեթակ>փէթակ, գրբ.՝ «փեթակ», բրբռ.՝ «նալ»՝ «փեթակաձև ալյուրի ամբար»: Խաշ>խաղ, գրբ.՝ «թատրոնի տեսարան», բրբռ.՝ «պար և երգ»: Հոզ>հօզ, գրբ.՝ «զովություն», բրբռ.՝ «քամի»:

II. Նույն բառերը գրաբարում և բարբառում բաշխվում են իմաստային տարբեր դաշտերի միջև (այստեղ ներկայացնում ենք միայն բարբառի՝ գրաբարից տարբեր իմաստը). ժամ՝ «եկեղեցի». ժամանակ՝ «ինքնազգացողություն, տրամադրություն» (Ըսօր ֆիշ մը ժամանակ չունիմ՝ Այսօր անտրամադիր եմ, ինքնազգացողությունս վատ է). մաղաղ՝ «զոհաբերություն, զոհ». պօրտ՝ «վերմակի երես». ժրմնել՝ «պատանիների և աղջիկների հասունանալը». կարֆել, կարֆվիլ՝ «ամուսնացնել, ամուսնանալ», կանիլ (<գանել)՝ «զգվել, խորշել». դոճ>տօժգել՝ «սըմքել, անհամանալ» (վերաբերում է կերակուրներին). կըդուր՝ «քիվ». նաշակ՝ «հաղորդություն». նօղիլ՝ «մեռնել անարգական ձևով, սատկել» և «նեղանալ, ոխակալել». նօն՝ «հաճար». մախօխ՝ «թթված խմորի խլուսով պատրաստած կերակուր». շանել՝ «հոգ տանել, խնամել». չէշ՝ «ծաղիկ հիվանդությունից առաջացած սպի». չըդէս՝ «ազահ». պուտ՝ «մի կաթիլ, մի քիչ». պուրակ՝ «թելի մի փունջ». սընդու՝ «թոնրի օղանցքը». քավ՝ «խոնավություն, թացություն»: Բարբառի քավ ձևը ավելի հավանական է բխեցնել գրաբարի ոչ թե քաւ, այլ քաքաւել ձևից, որն ունի «ջրում թրջել, թաթախել» իմաստը: Բրբո. ունի նաև քաքավ ձևը «անձրև» իմաստով:

Պատմական իմաստաբանության տեսանկյունից ներկայացված բոլոր դեպքերը իմաստափոխական երևույթներ են, որոնք բացատրվում են իմաստափոխություն առաջացնող հայտնի պատճառներով:

## ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Ա ծ ա ն ց ու մ և Բ առ ա ր ա ր դ ու մ: Բարբառն ունի բառակազմական նույն միջոցները, ինչ որ հայոց լեզուն ընդհանրապես, այն է՝ ածանցում և բառաբարդում:

Բարբառում ևս սահմանափակված է նախածանցների կիրառությունը: Այստեղ հիմնականում գործառում են ան և չիլը նախածանցները, որոնք անվանական հիմքերից և բայարմատներից կազմում են ածականներ.

ան—անլըզու, անջար, անվարդի, անվրլա,

չիլը—չունելօր, չըխօս, չըբէտ:

Գործածական է հատկապես ան նախածանցը:

Թըշ (<դժ) և տ(<տ) նախածանցներ կան գրականից բրբո. մուտք գործած մի քանի բառերում. թըշօփ, թըշփախտ, տըբէտ:

Հակառակ նախածանցների սակավության, մեծ թիվ են կազմում վերջածանցները: Թեև գրաբարի շատ վերջածանցներ այստեղ այլևս չեն գիտակցվում իբրև այդպիսիք և կորցրել են իրենց կենսունակությունն ու բառակազմական արժեքը, այնուամենայնիվ բրբռ. հարուստ է վերջածանցներով:

Գրաբարի բազմաթիվ ածանցների հետ զործառուում են նորերը, որոնք հիմնականում արդյունք են գրաբարի որոշ արմատների իմաստների մթափման, հոլովական թեքույթների և հոգնակերտ ձևույթների քարացման:

Բարձր հաճախականություն ունեն —ան, —(ա)գան, —(ա)նօց, —անֆ, —(ա, է)վօր, —իկ, իֆ, —(ա, ր)ցի, —է, —ուֆ, —ուկ, —ուքուն, —ուն, —օտ||գօտ,—օց||նօց վերջածանցները:

Վերջածանցները հիմնականում անվանակերտ ածանցներ են, որոնք այլևայլ բառերից և բայարմատներից (այդ թվում նաև փոխառյալ բառերից) կազմում են նոր բառեր: Թվականակերտ ածանցները ներկայացվում են «Թվական անուն» բաժնում: Ստորև տալիս ենք գոյականակերտ, ածականակերտ և մակբայակերտ ածանցների շարքը.

ան—խրման, ուզան, կօզան, կախան

անի—լեզվանի, նազանի

(ա)զան—հորէնագան, տրդասկան, մըսկան

անք—հարանք, կօղբանք, ախլանք

ակ—ճուխտակ, կօշնակ

ատ—փէդատ, կըջատ

(ա, ր) նօց—վարնօց, ցազնօց, տըբալնօց

աշ—մադղաշ, թըթֆաշ

(ա, ր)ցի—կէղացի, քախկըցի, մըթընցայի

(ա, է)վօր—կըլխավօր, հարսնէվօր, արդվօր, պաղնէվօր

անգ—ասանգ, ադանգ, անանգ

էկ—էտքինէկ, էրնէկ, կարէկ

էնի—ինչէնի

է—փադէ, էրգաթէ, արձաթէ

էխ—մօլէխ

էք—հալավօրթնէք, տընօրթնէք

էրէն—տընէրէն

իկ||լիկ||ուլիկ||շուկ—պըշիկ, շէգուլիկ, պըդըլիկ, կարշլիկ||կարշըշուկ

իք—ըսէլիք, առնէլիք, էրթիք

իչ—խաղվիչ, կուղիչ, ծաղգիչ  
 իճ—տառնիճ  
 ինք—էդինք  
 ից—օդից  
 ուտ—ցախուտ, կըղուտ  
 ուճ—պըրթուճ  
 ուք—քէրուք, խընդուք, մաւուք, մաղուք, էվէլցուք, խէղգըղուք  
 ուկ—էփուկ, պըլլուկ, ծէգուկ  
 ուն—էփուն, կօխուն, լէցուն  
 ուակ—էրուակ, ճէրմըգուակ, սէրուակ  
 ութուն—խախկութուն, կըռիշութուն  
 ուրիկ—տուրուրիկ  
 ու—ծախու  
 ում—ժանժում  
 ուլա—ծագուլա  
 ունց||ուս—պըդղունց||պըդղուս, թըթղունց||թըթղոփ  
 ունգ—խօրունգ  
 օտ||գոտ||կօտ—խօցօտ, խըլլօտ, ճըռքօտ, քընգօտ  
 օց—տըփօց, տաբգօց, ճըզըրդօց  
 օրթ—փօխնօրթ  
 օնք—պըռչօնք  
 օն—կըռձօն, պըրթօն  
 օղ||լօղ—տըգլօղ, տընգօղ  
 օշ||ռօշ—տըռդօշ, թանգռօշ  
 օվ—համօվ, տէսքօվ, կինօվ  
 օ—շէգօ  
 կէկ||գէկ—լավգէկ, հաստկէկ, ծիկկէկ  
 գուն—աջէգուն||աջըգուն  
 լա—կընդըլա  
 լուք—իլլուք  
 լան—կօգլան  
 պան||բան—ճաղասպան, ճըրբան, փասպան  
 չէք—ափուրչէք, էփօղչէք, կաղընդչէք  
 ստան—կինէստան, էքէստան, ծառաստան  
 ցու—հարսընցու, աբըրցու, հընդացու  
 ձու—պահձու  
 նօց—սըղնօց, տըսնօց, վարնօց

ուռաց||ուրաց—սօխուռաց||սօխուրաց  
ք—զօրք, ծալք, վօռք

Կան քիչ թվով մակբայակերտ ածանցներ.

աց||անց—էդէվանց, տրգանց||տագաց, պարդաբանաց  
ուց||ունց—շագունց, պըզդիգուց, տըղագուց  
ուկ—կամացուկ, կօղդուկ, հիմաջուկ:

Թուրքերենից բարբառում գործածական են—չի/ջի, —սըզ||սիզ ածանցները. դուֆանչի, շալչի, բօստանչի, թանգարզ:

Բառակազմական մյուս միջոցը բարդացումն է: Գրաբարից բրբռանցած բարդ բառերի կազմության օրինակով բարբառում կան նորանոր բարդություններ: Սրանք խմբավորվում են համադրական, հարադրական և կրկնավորներ տեսակների մեջ:

Համադրական բարդությունները հիմնականում ունեն երկբաղադրիչ անհոդակապ կառույց: Դրանց բաղադրիչները տարբեր խոսքի մասեր են՝ ուղիղ կամ թեքված ձևով, հնչյունափոխված կամ անհնչյունափոխ արմատներով: Բաղադրիչների կազմում հաճախ լինում է փոխառյալ բառ. ալբրմադ, ախլիգդէս, անգաժմըդուֆ, արընդէր, արունվըլա, պասպէրան, պըրքման, ֆարման, տըթմըջօր, էրգանարէվ, ունգուզմէշ, թաթագիշ, թըլխաշ, թըրընչուպ, թըրֆալ, խտըզըրէլ, խանձէլփօտ, խըսնամ, խօսկապ, ծագաշկ, կագուդէրէս, կէրգօխ, կըրընգօխ, հալավօրքնէֆ, ծարմադ, հավգուր, հարսնառ, ծիֆէրէս, մալէզաբուր, մէլէլդուն, մադընշունչ:

Ավելի սակավ դեպքերում համադրական բարդության բաղադրիչները կապվում են շաղկապով կամ գրաբարի որևէ նախդրով. վըզագօթ, հօֆէհաց, մարթամօտ, մութնուլուս, նէրսիդի, տուրսիդի, պընագըրիլ (բույն կտրել՝ բույն դնել, հաստատվել), ծընգաշօֆ, աշկիլուս:

Համադրական բարդության բաղադրիչների շարահյուսական կապակցությունները միշտ նույնարժեք չեն: Մի դեպքում, ըստ որում տարածվածը, առաջին բաղադրիչը հանդիսանում է երկրորդի լրացումը՝ շաբընգէր. դրանց անշատումը առաջացնում է իմաստի խախտում: Մյուս դեպքում, կապակցության բաղադրիչները հավասարազոր են, դրանց անշատումից իմաստի խախտում չի առաջանում՝ կէրուխում, առուդուր:

Երեք բաղադրիչներից բաղկացած համադրական բարդություններ են՝ հօրֆուրար, մօրֆուրար (հոր + քույր + այր, մոր + քույր + այր):

Հարադրավոր բարդության տարածված տեսակը բայական հարադրությունն է, երբ՝

ա) բաղադրիչներից առաջինը որևէ խոսքի մաս է, իսկ երկրորդը պարտադիր ձևով՝ բայ. պէ՛րան ձրո՛ւն, պէ՛րնէն գախ՝մի, կըլօխը բըլլէ, տօղ էլլալ, աճ բլլալ, արմանք գարմանք բլլալ, տուս կալ, նէս կալ, վագ ասնիլ: Ըլլալ, անէլ, տալ, կալ (<գալ) բայերի և փոխառյալ բառերի հարադրությամբ կազմվում են մեծ թվով հարադրություններ. սրթար բլլալ, միսաֆիր բլլալ, ֆէֆ անէլ, շաբալմիշ բլլալ, յալվար բլլալ, խաբար դալ, ջոտաբ դալ, ռաստ կալ:

բ) Երկու բաղադրիչներն էլ բայ են՝ էլլալ էթալ, էթալ գալ, ուղէլ խըմէլ, սըֆֆիլ գարթարվիլ:

Ոչ բայական հարադրությունները մեծ մասամբ հարադրվում են ու շաղկապով՝ տար ու դաթար, խուրդ ու խաշ, ունն ու բունը, կունդ ու գըձիկ, պուֆ ու բօրան:

Կրկնավոր բարդությունները լինում են բայական և ոչ-բայական. խազխըզէլ, խըշխըշալ, ծագձըզիլ, կաթկըթիլ, կըմզըմալ, նըլնըլիլ, ծըփծըփալ, հընհընալ, խըռխըռալ, շարշըրգէլ, դըժդըժալ, տընդընալ, լընգլընգալ, հօլհօլ, ծըվիգ ձըվիկ, հիմագ ու հիմա, կիսվագէս, կամաս-կամաց, մէյ մէկ, մաղմաղ, մըզմըզ, պառբառ, մըռմոռ, ճարջարակ և այլն:

Կրկնավորների ժամանակ հաճախ երկրորդ արմատի ձայնավոր և բաղաձայն հնչյունները հանդես են գալիս հնչյունափոխված ձևով՝ մարթմուրթ, ծագոձուկ, սուսուփուս, կիսաղ բըռատ, աբուռ ջուրուռ, առուշ պառուշ, ափալ թափալ և այլն:

Բարբառում բառակազմական ակտիվ միջոց է նաև անվանական հիմքերից դերբայական վերջավորությունների միջոցով բայաձևերի կազմումը: Այսպիսի բայերն ունեն անածանց, բազմապատկական ածանցներով, խիստ հազվադեպ նաև սոսկածանցներով կազմություններ. փաղէլ (փայտ նետել), փաղնալ (փայտանալ), ծանէլ||ծէնէլ (ձայնել, կանչել), պըղգիլ, պաղնէլ (պատանել), պաշէլ, թընջըֆէլ, տըֆալէլ, տըֆըլէլ, տանգըղէլ, ապխընդէլ, շսպէլ, լուսէլ, խօստէլ, կաժէլ, կըջէլ, հօղէլ, ծափտէլ, շըբէշէլ:

#### ԲԱՌԱՅԻՆ ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ<sup>26</sup>

Բառերի մի զգալի խումբ ակներև հնաբանություններ են: Դրանք ունեն զանազան դրսևորումներ<sup>27</sup>.

<sup>26</sup> Սրանց ամբողջական քննարկումը համարելով մեր ուսումնասիրության հիմնական նպատակից դուրս, այնուամենայնիվ հարկ ենք համարում տալ հնաբանությունների մի խումբ:

<sup>27</sup> Հմմտ. Գ. Զառնույան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 277—330.

1) գրաբարից տարբեր հնչյունական կերպարանք (ձայնավորական և բաղաձայնական), որոնք չեն բացատրվում բարբառի հնչյունափոխական օրենքներով. *թառամել-թոմել*, *գաղտնի-կողքով*, *շաղկամ-շօխվամ*, *մոռն-մօն*, *ծոմ-ծում*, *մրրիկ-մըլըլիկ*, *կեղեւել-կէղբէլ*, *կուտ-ղուտ*, *խեճեպ-կըջէպ*, բարաւոր-պալավար, *աղի(անք)-ախլանք*.

2) գրաբարյան արմատի դիմաց աճականով կամ հին ածանցով ձև. *հո(ալ)-կէռալ*. *յօրանջել-կէրծգըղալ*, *մոլ-մօլէլս*, *մորճ-մօրջախ*, *դոճ-աօճիլ*, *նօթի-անօթի*, *հաւթն-օխար*.

3) գրաբարից տարբեր աճական կամ հին ածանց. *զճիլ-կըծգիլ*, *մրել-մըրգէլ*, *շոպել-շօբգէլ*||*շըբգէլ*, *լկտալ-լըգըրթիլ*, *խոռել-խոռնել* (*հավանաբար խոռոչ ձևից*), *հալել-հըլսիլ*, *շոշափել-շօշըփէլ*, *ումպէտ-ումբէղրս*, *սալոր-սալվօր*, *ուլենի-ուլվէնի*,

4) Գրաբարյան բաղադրյալ ձևի դիմաց արմատական ձև. *ճառա-գայթ-նառ*<sup>28</sup>, *սատկել-սաղալի*, *թաթաւել-թաթալ* և *թալ*, *լակել-լակ*, *ճայթել-նաթ*, *սանդ-սան*:

---

<sup>28</sup> Ճառ ձևը «շահ» իմաստով կա նաև Պոլսի և Մեղրու ռարբառներում: Աճառյանը տարակուսանքով կապում է ճանապարհ բառի հետ (Հ. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, էջ 56), իսկ Աղայանը բխեցնում է ջան ձևից (Է. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 89):

## Չ Ե Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ԹՎԻ ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ: Հոգնակերտներն են՝ -էր, -նէր, -ֆ, -վրդիֆ||վրդանֆ,-դանֆ||դիֆ, -ունֆ||դունֆ, -անֆ||վանֆ, -իֆ: Սրանցից յուրաքանչյուրը գործառու է որևէ դիրքում, որը հիմնականում պայմանավորված է տվյալ բառի ձևով կամ իմաստով:

Հոգնակերտների բնույթով բարբառը հեռացած է գրաբարից: Գրաբարի ամենատարածված ու կենսունակ ֆ հոգնակերտը հանդես է գալիս սահմանափակ թվով բառերի հետ, որոնք հիմնականում խմբավորվում են ձևաիմաստային հատկանիշով. այն է՝ ծագումը, բնակավայրը ցույց տվող -ցի/ացի/ըցի ձևույթակիր բառեր. փախկըցիֆ, կէղացիֆ, էր-զընգացիֆ, մըթընցացիֆ: Որպես հնաբանություններ ֆ են ստանում տղայ-տըղաֆ և ծնող-ծընօխֆ բառերը:

Բուն հոգնակերտներ են -էր (<եար) և -նէր (<նեար) մասնիկները: Սրանք վկայված են դեռևս գրաբարում հիմնականում իբրև հավաքական իմաստ արտահայտող ձևույթներ: Արդեն միջինհայերենյան փուլում դրանք վերածված են բուն հոգնակերտների, որոնց բաշխման ոլորտները, սակայն, այստեղ խիստ անշրպենոված չեն և իրենց գործառույթով չեն բնութագրվում որևէ որոշակի հատկանիշով: Մինչդեռ Երզնկայում (ինչպես բարբառների մեծագույն մասում, արևմտահայ և արևելահայ գրական լեզուներում) -էր և -նէր ձևույթների ոլորտները հստակորեն սահմանազատված են և բնութագրվում են ձևային հատկանիշով.—էր են ստանում բոլոր միավանկ, իսկ -նէր՝ բազմավանկ բառերը: Այս բաշխմանն են ենթարկվում ինչպես գրաբարի և բարբառի համար ընդհանուր, այնպես էլ բարբառային կազմություն ունեցող և փոխառյալ բառերը: Չկա ոչ մի սահմանափակում նաև ձայնավորահանգ և բաղաձայնահանգ հիմքերի դեպքում: -էր, -նէր ձևույթների զուգորդումները ըստ վանկաքանակության խիստ կայուն և միասնական են և ունեն համակարգային արժեք: Այսպես՝ կովէր, տունէր||տնէր, ծիէր, լաթէր, սըրդէր, անգըծնէր, խապառնէր, լըզունէր, խալզիննէր:

Ք-ով վերջավորվող բառերը, որոնցում մթագնված է Բ-ի հոգնակերտության իմաստը, և որի պատճառով էլ այն դիտվում է իբրև արմատական հնչյուն, հոգ. են կազմում ընդհանուր հիմունքներով՝ միավանկները -էր, բազմավանկները՝ -նէր ձևույթներով. աշկ (<աշք)—աշկէր, օտկ (<ոտք)—օտկէր, հարսնիքներ, աղիքներ:

Դրաբարում բառավերջում և-ով գաղտնավանկ կազմող միավանկ բառերը բարբառում թեև եզակի ուղիղ ձևում չեն պահպանել վերջնահար և-ն, հոգ. կազմության ժամանակ դրանց մի մասը հանդես է գալիս արմատական և-ով. պլններ, քոններ, աքոներ, մրգներ, ծրգներ, յէգներ, կառներ, լէռներ:

Մատն>մատ, հիմն>հիմ (տան հիմքը), եռուն>նուռ, մասն>մաս, որդն>վորք բառերի հոգնակի ձևում և-ն չի վերականգնվում՝ մադէր, հիմէր, նուէր, մասէր, վորքէր:

Ու վանկարարով հիշյալ խմբի բառերը հնչյունափոխված հիմքով հանդես են գալիս -նէր, անհնչյունափոխ հիմքով՝ -էր հոգնակերտներով. ծրգներ||ծուգէր, մրգներ||մուգէր, աքոներ||աուռէր, ծրգներ||ծունգէր:

Հոգնակին -էր-ով են կազմում այն բարդ բառերը, որոնց վերջին բաղադրիչը լինելով անվանական միավանկ բառ՝ պահում է իր անվանական իմաստը<sup>29</sup>, մյուս դեպքերում՝ բարդ բառերի հոգնակին կազմվում է -նէր-ով. ախշրէր, ալրւմադէր, պրքամադէր, բայց՝ չըդէսներ, աւրգիցներ:

—վրդիք||վրդանք, -դիք||դանք, -ունք||դունք... հոգնակերտները, գրաբարի համեմատ լինելով նորություն, ընդհանուր են գրեթե բոլոր բարբառների և միջին հայերենի համակարգերի համար: Այդ հոգնակերտների գործառումը չունի համակարգային արժեք, որովհետև դրանք դրվում են սահմանափակ թվով բառերի վրա և ազատորեն փոխանցվում են -էր,-նէր ձևույթների:

Հաճախականության տեսակետից -վրդիք||վրդանք,-դիք||դանք հոգնակերտները գրեթե հավասար բաշխում ունեն: Դրանք դրվում են ազգակցություն և հարազատություն ցույց տվող մի քանի բառերի վրա. փուրվրդիք||փուրվրդանք, ապլվրդիք||ապլվրդանք, ախալրդիք||ախալրդանք, կրնգրդիք||կրնգրդանք:

—դանք են ստանում նաև օսկօր և փըսօր բառերը՝ օսկըրդանք, փըսօրդանք:

---

<sup>29</sup> Հմմտ. Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 46:

—ունք||դունք հոգնակերտները հանդես են գալիս փրսօր, պոունգ հիմքերի հետ՝ փրսօրունք||փրսօրդունք, պրոգունք:

—անք||վանք-ը զուգորդվում է տէր բառի հետ՝ տեղանք||տեղվանք:

—իք հոգնակերտը դրվում է միայն մարք բառի վրա՝ մարքիք: Վերջինս ունի նաև մարքիքներ և մարքէր ձևերը:

Հավաքական իմաստ արտահայտող հոգնակերտներից —էնք-ը դրվում է անձնանունների՝ Վարթանէնք, Կարօէնք, Արմէնագէնք, Շուշանիգէնք, անք-ը և օնք-ը՝ հարազատություն և ազգակցություն ցույց տրվող մի խումբ բառերի վրա՝ հարանք, մարանք, տաղօնք, պարօնք, ֆէօնք:

Բարբառում հոգնակերտների միջև կատարվում են փոխանցումներ: Բնորոշ են հատկապես —վրդիք||—վրդանք, —դիք||դանք, —ունք||դունք, —անք||—վանք փոխանցումները: Այս զուգահեռ հոգնակերտները իրար նկատմամբ ունեն ազատ տարբերակների արժեք: Միաժամանակ, բոլոր հոգնակերտները ազատորեն փոխանցվում են —էր, —ներ-ի:

Կան նաև —էրնի, —վրնի||—վրնէր և —նի ձևույթներ: Դրանց գործածությունը խիստ որոշակի է. —էրնի ստանում են միավանկ, —վրնի||վրնէր՝ մարմնի զույգ անդամ ցույց տվող, իսկ —նի՝ հիմնականում երկվանկ, երբեմն կարող են ստանալ նաև բազմավանկ բառերը:

Թվում է, թե բարբառում —նի-ն գործում է նույն օրինաչափությամբ ու նույն արժեքով, ինչ միջին հայերենում, այսինքն՝ հանդես է գալիս երկվանկ բառերի դիրքում իբրև բուն հոգնակերտ: Այս ենթադրությանը կարող է նպաստել —նի-ի գործածության ոլորտը: Իրոք, պարզ —նի-ի կիրառություններ հիմնականում հանդիպում են երկվանկ բառերում՝ կիտցազնին, կրթիսնիտ, սեղաննիտ: Իսկ միավանկ բառերի դեպքում նախ՝ դրանք ստանում են այլ հոգնակերտ, նոր միայն զուգորդվում նի-ին, այսինքն՝ —նի-ն դարձյալ դրվում է երկվանկ ձևերի վրա. սրդէրնիս, մագէրնին, մեշկէրնին, աշֆրնին, ծէովրնին:

Գուցե, իսկապես, բարբառի կազմավորման ժամանակ —նի-ն կիրառվել է բուն հոգնակերտի իմաստով և հանդես եկել միջին հայերենի շրջանում իրեն հատուկ (երկվանկ բառեր) դիրքում: Սակայն հետագայում —նի-ն (ինչպես նաև —եր-ով և —վի-ով բաղադրված —երնին և —վրնին) բարբառում պահպանելով գործառնության վաղեմի ոլորտը՝ կորցրել է բուն հոգնակերտության իմաստը, և նրանով բառին սկսել է հաղորդվել հոգ. ստացականություն: Այս է պատճառը, որ —նի-ով բառերը միշտ հանդես են գալիս հոգերի հետ: Այսպես, Կիտցազնիս շինք ըսէր (մեր գիտեցածը): Սեղաննիտ շէն մընա (ձեր սեղանը):

Որ -նի-ն և նրանով բաղադրված ձևերը բուն հոգնակերտներ չեն, հավաստվում է և նրանց կապային կիրառություններում, ուր նրանք արտահայտում են հոգնակի դիմորոշություն. Վրաճնիս կրխընդան (մեղ վրա), Հեղէրճին գացի (նրանց հետ):

Հ ո լ Վ լ ի կ ա Ր գ Ր: Անվանական հոլովումն իրականացվում է մասնիկավորմամբ և հնչյունական հերթագայություններով: Բացարձակ գերիշխողը հոլովման մասնիկավոր տիպն է:

Գրաբարի համեմատ բարբառի հոլովման համակարգում առկա են հետևյալ էական տարբերությունները. բրբռ. չունի նախդրավոր հոլովներ, այստեղ չկան գրաբարյան իմաստով խառը հոլովման տիպեր, սահմանափակ են ներքին հոլովումները (չկա ե ներդրավոր հոլովում), կան նոր հոլովումներ (օչ, վա), հոլովման որոշ տիպեր դասակարգվում են ոչ միայն ձևային, այլև իմաստային հատկանիշով (վա, ոչ, օ):

Գրաբարում և բարբառում այլ է տարբեր հոլովման տիպերի մեջ բաշխվող բառերի հարաբերությունը: Բարբառում բացարձակ գերիշխողը ի արտաքին հոլովման տիպն է, մյուս հոլովումներին պատկանում են սահմանափակ թվով բառեր, որոնք հաճախ այլ հոլովակերտներին զուգահեռ ստանում են նաև ի, գրանով իսկ է՛լ ավելի ընդարձակելով ու կենսունակ դարձնելով ի հոլովումը:

Գրաբարի համեմատությամբ բրբռ. մեծ ֆոտակություն և պարզություն է դրսևորում հոլովման հարացույցում: Նախ՝ չեզոքացված է որոշյալ և անորոշ իմաստների ձևաբանական հակադրությունը եզակի և հոգնակի թվերի ուղղական և հայցական հոլովներում (բրբռ. չունի գ նախդիրով կիրառություններ, հոգ. թվում ք-ս հակադրություն), անպակայուն միօրինակություն և միասնականություն է գործում հոգնակի թվի հոլովման հարացույցում՝ հակառակ գրաբարյան բազմազանություն:

Հոլովակերտներն են՝ -ի(ն), -ու(ն), -ա(հնչյունական հերթագայության դեպքում), -ա(ն) (մասնիկավորման դեպքում), -վա(ն), -օչ(ը), -օ, -ց, -է(ն), -մէ(ն), -մընէ, -օվ, -մօվ:

Բարբառում կա շորս հոլովաձև՝ ուղղական-հայցական, սեռական-տրական, բացառական և գործիական:

Ուղղական-հայցական հոլով: Այս հոլովը բառի ուղիղ ձևն է, որի ձևային հատկանիշը հոլովական զրո վերջավորությունն է: Սրանով էլ նա հակադրվում է մյուս հոլովաձևերին:

Հոգնակի ուղղական-հայցականը ևս չունի հոլովակերտ: Եզակիին հակադրվում է միայն հոգնակերտի առկայությամբ:

Սեռական-տրական հոլով: Գրաբարի նման բրբռ. հոլովակերտների քանակային առավելություն է հանդես բերում սեռական-տրական հոլովում: Դրանք են՝ -ի(ն), -ու(ն), -ա, -ա(ն), -վա(ն), -օշ(ը), -օ, -ց-ն: -ի(ն), -ու(ն), -ա(ն), -վա(ն), -օշ(ը) հոլովակերտները դրվում են բառի ուղիղ ձևի վրա՝ բառահիմքը հնչյունափոխելով կամ թողնելով անհնչյունափոխ: Այսպիսի սեռ.-տրակ. կառուցվածքը ընդհանուր ձևով կարելի է բնութագրել որպես մասնիկավոր սեռական-տրական:

-Ա, -օ հոլովակերտները դրվում են հիմքի ներսում՝ համապատասխանաբար վերջին վանկի ու, ա հնչյունների փոխարեն: -Ց-ն հերթագայում է հոգնակի ուղիղ ձևում հանդես եկող -ի-ին: -Ա, -օ, -ց հոլովման տիպերի սեռ.-տրակ. կառուցվածքն է՝ ֆունկցիոնալ նշանակություն ունեցող հնչյունափոխված հիմք կամ այն կարելի է բնութագրել որպես հերթագայական սեռական-տրական:

Մասնիկավոր սեռական-տրական. -ի(ն): Այս հոլովակերտն ստացող բառերի ոլորտում են գրաբարյան բոլոր հոլովման տիպերից բառեր: Այսպես, ա մասնիկավոր հոլովման տիպի բոլոր բառերը, որոնք հիմնականում հատուկ անուններ էին՝ գրբ.՝ Արշակայ, բրբռ.՝ Արշագին, ա հերթագայական հոլովման տիպի գրեթե բոլոր բառերը՝ գրբ.՝ ասեղան, բրբռ.՝ աստիսի (բացառությամբ ժամանակի իմաստ արտահայտող ամառն>ամառ, ձմեռն>ծրմէռ բառերի). ե հոլովման բառերը՝ գրբ.՝ աստեղ, ալեւր, բրբռ.՝ ասիսին, ալուրին (բացառությամբ ազգակցություն ցույց տվող տայգր>տաճր. բառի). ի հոլովման բառերը՝ գրբ.՝ սրտի, փայտի, բրբռ.՝ սրդին, փաղին (բացի այ>ա վերջավորվող մի քանի բառերից՝ գրբ. տղայի, բրբռ.՝ աղու||տղային և ժամանակ ցույց տվող ատեան>աղէն բառից), ո հոլովման գրեթե բոլոր բառերը՝ գրբ.՝ արծաթոյ, բրբռ.՝ արծաթին, (բացառությամբ ի բաց վանկով ավարտվող միավանկ և բազմավանկ բառերի, ինչպես նաև անորոշ գերբայի). ու հոլովման բառերի մեծ մասը՝ գրբ.՝ աղունսու, բրբռ.՝ աղվեսին, ի-ա խառը հոլովման պատկանող գրեթե բոլոր բառերը՝ գրբ.՝ հարսին-հարսամբ, բրբռ.՝ հարսին, անկանոն հոլովման բառերից գեւղ>կէղ բառը՝ գրբ.՝ գեղջ, բրբռ.՝ կէղին: Անկախ գրաբարի այս կամ այն հոլովմանը պատկանելուց, բոլոր հատուկ անունները, բացի տեղանուն նշանակող մի քանի բառերից, բարբառում ստանում են -ի(ն) հոլովակերտը:

Ի(ն) հոլովման ոլորտը է՛լ ավելի մեծ է, եթե նկատի ունենանք, որ նրա մեջ են բաշխվում գրական ու կրոնական ճանապարհով բարբառանցած բարբառային կազմության և այլ լեզուներից փոխառյալ բառերը. թաղին, պաղարաֆին, շընչավաղին, ումուզին:

Ու(ն) — Հնդգրկման տեսակետից — ու(ն) հոլովակերտն ստացող բառերի խումբը զբաղեցնում է երկրորդ տեղը, թեև բառերի քանակով անհամեմատորեն զիջում է ի հոլովմանը: Գրաբարյան ու հոլովումից պահպանվել են մի քանի բառեր միայն՝ ծովուն, շապտուն, հավուն: Ու(ն) հոլովակերտով սեռ.-տրակ. են կազմում գրաբարյան ու հոլովակերտը ստացող բառերը: Այս անցումը բացատրվում է ոչ>ու պատմական հնչյունափոխությամբ. գրբ.՝ գլխոյ, իշոյ, հայոյ, մարդոյ, ասելոյ, հասանելոյ, բրբռ.՝ կրլխուն, իշուն, հայուն, մարթուն, ըսելուն, հասնելուն: Տղայոյ ձևի դիմաց բրբռ. ունի տրդուն և տրդաին զուգահեռ ձևեր: Ու(ն) է ստանում նաև միջին հայերենից ավանդված իրֆ>իֆ բառը՝ իֆուն: Բացի պատմական գործոնով պայմանավորված բառերի հիշյալ խմբից, ու(ն) են ստանում նաև ձևային հատկանիշով բնութագրվող բառեր: Դրանք ի-ով վերջավորվող միավանկ և բազմավանկ բառեր են, որոնք գրաբարում ևս ունեին ձևային դասակարգում և մտնում էին ու պարզ և ու-ա խառը հոլովման տիպերի մեջ. գրբ.՝ ձիոյ, թիոյ, ոսկւոյ, այգւոյ, քաղաքացւոյ, բրբռ.՝ ձիուն, թիուն, օսկուն, էֆուն, ֆախկըցուն: Ի-ով վերջացող բազմավանկ բառերում գրաբարյան ի/ւ հնչյունափոխության փոխարեն գործում է ի/զրո հնչյունափոխությունը: Միաժամանակ, այդ բառերը ու-ի հետ հանդես են բերում ի հոլովակերտով զուգահեռ ձևեր՝ օսկիին, էֆիին: Սրանք ավելի ուշ շրջանի և այլ ազդեցություններով (ի տարածված հոլովակերտի համաբանություն) բացատրվող կազմություններ են:

Ու(ն) հոլովակերտն են ստանում նաև որոշ տեղանուններ. Էրզրնզու, Փրքառչու, Աֆրզու, Մըշու, Խարփէթու:

Վա(ն) — Բարբառի — վա(ն) հոլովակերտով ձևերն են՝ իրզվան||իրզուն-վան, օրվան, ցօրէգվան, շապովան, տարվան, ժամվան, ֆիշէրվան, ամսվան, ծըմէտան, ամառվան, զաղզվան, օրհարսագվան, առդվան, հիմագվան, էրէգվան, անշվան, հէրվան:

Մահ բառը ավանդաբար հանդես է գալիս զուգահեռ ձևերով՝ մահու և մահուան-մահվան:

Ա(ն) — Գրաբարի՝ գաղտնավանկում և-ի հանգող բառերի և-ն ընկնելու պատճառով այդ բառերի հոլովման հերթագայական տիպը՝ ը/ա և ը/ի-ա (գառն-գառան, հարսն-հարսին-հարսամբ), բարբառում փոխարինված է մասնիկավոր տիպով՝ բառաձևիմֆ + աճ:

Այս խմբի բառերի սեռական-տրականում հանդես եկող ա(ն) և ի(ն) հոլովակերտների և-ն պատմականորեն արմատական հնչյուն է, բայց ներկայում, շատ բարբառների նման, ստացել է հոդային արժեք՝

այդ հոլովը ընդհանրապես հոդով ձևավորելու պատճառաբանվածութ-  
յամբ:

Ա(ն) հոլովակերտով հանդես եկող ձևերն են՝ կառան, մրգան, պլե-  
ռան, լեռան, տրոան, ծրգան, խրքման, ամոան, ծրմոան, ինչպես նաև՝  
աշնան, կարնան, ախշըգան, կրնգան, էրգան, ծառան:

Տեղանուն նշանակությամբ մի շարք հատուկ անուններ սեռական-  
տրականում ստանում են ա հոլովակերտը առանց հոդի՝ Լուսավօրչա  
վանք, Արշագա գարմունը, Էրզրումա հարս, Վանա ախշիկ, Էրգանա հա-  
վօղ:

Օշ(ը) — Գրաբարում այս հոլովակերտն (<ոշ) էր ստանում միայն կին  
բառը (նույն հիմքից են՝ տիկին և առնակին): Բարբառներում ընդար-  
ձակվում է օշ(ը) հոլովակերտն ստացող բառերի ոլորտը: Դրանք իմաս-  
տային հատկանիշով բնութագրվող (ազգակցություն ցույց տվող) մի  
շարք բառեր են՝ քրօշը, տալօշը, նիքօշը, անէքօշը, կէսքօշը, կէսարօ-  
շը, տիքօշը (կա նաև՝ տիրուն), տանդիքօշը, տաֆէքօշը:

Հերթագայական սեռական-տրական — Ու/ա: Եթե գրաբարում ներ-  
քին թեքման ա-ն առաջանում է հերթագայական մի քանի տիպերից,  
ինչպես՝ ր/ա՝ ատամ(ը)ն-ատաման, Օ/ա՝ անուն-անուան, իւ/եա՝ ա-  
րիւն-արեան, բազմութիւն-բազմութեան, ու/ա-տուն-տան և այլն, ապա  
բարբառում գործում է միայն մեկ տիպը՝ ու/ա, որն իր ոլորտում ունի  
գրաբարի իւ/եա և ու/ա հերթագայություններով բնութագրվող բառերը.  
ծիւն > ծուն-ծան, սիւն > սուն-սան, մարդկութիւն > մարքկութուն-մարք-  
կութան, շուն-շան, տուն-տան:

Ա/օ — Այս հերթագայությունը պատմականորեն հանգում է գրաբա-  
րի այլու հերթագայությանը, և դրանք իրար ծածկում են նաև իրենց  
մեջ ընդգրկող բառերի խմբով, որոնք ազգակցություն ցույց տվող հետե-  
յալ բառերն են՝ ախպար-ախպօր, հար-հօր, մար-մօր, սանահար-սանա-  
հօր, սանամար-սանամօր: Այդ նույն բառերով բաղադրված մի քանի ձե-  
վեր, որպես գրական, կրոնական փոխառություններ, նախ՝ ուղղականում  
հանդես են գալիս անհնչյունափոխ հիմքերով, ինչպես՝ տէրհայր, և ա-  
պա՝ թեքումը կատարվում է ոչ թե հերթագայական, այլ մասնիկավոր  
տիպով, ինչպես՝ տէրհայրին:

Հոգնակի թվում ևս սեռ.-տրակ. բնութագրվում է թեքման մասնի-  
կավոր և-հերթագայական տիպերով՝ ի տարբերություն գրաբարում առ-  
կա միայն հերթագայական տիպի: Վերջինս բարբառում ունի սոսկ ա-  
վանդական արտահայտություն, իբրև գրաբարյան ք հոգնակերտով բա-  
ռերի ք/ց հերթագայություն՝ ֆախկըցիք-ֆախկըցօցեց, Արմէնագէնք-Ար-

մէնագէնց, արդաբ-արդօց, մարթիբ-մարթօց, հարաւնբ-հօրաւնց, պա-  
բօնբ-պարօնց: Սրանք ավանդութիւն են ոչ միայն իրենց հերթագայու-  
թյամբ, այլև ամբողջ բառաձևով:

Հոգնակի թվում բնորոշը մասնիկավորումն է: Սեռական-տրական-  
նում առկա է մեկ հոլովակերտ՝ -ու(ն), որը դրվում է -էր, -նէր հոգնա-  
կերտներով բառերի ուղիղ ձևի վրա՝ փաւէրուն, պաղէրուն, էփնէրուն,  
ախշիգնէրուն, սօմուննէրուն:

-նի, -էրնի, -վրնի ստացական հոգնակերտներով բառերում -ու(ն)  
հոլովակերտից առաջ ի-ն ընկնում է. տէսագնուն, աշֆրնուն, օգվրնուն:

Սեռ.-տրակ. հոլովով գրված անունները որոշչային կիրառությամբ  
հանդես են գալիս առանց հոգի՝ Լուսավօրչա վանք, խրթման իրինգուն,  
աշնան դարմա, զաղգի օր, օրհարսագլա գէրագուր:

Բացառական հոլով: Գրաբարի բացառական հոլովի բաղմամբիւ  
հոգնակերտներից բարբառում առկա է -է(ն)-ը, որը երբեմն հանդես է  
գալիս -մ.-ով բարբառովստ՝ -մէ(ն) և -մընէ տարբերակներով: է(ն)-ը գրե-  
վում է բոլոր բառերի ուղղ.-հայց. հոլովաձևի վրա. սրղէն, տաշտէն,  
մարթէն, տարիէն, ծամէն, Արշագէն:

Մէ(ն)-ը և -մընէ-ն հանդես են գալիս անձ ցույց տվող բառերի հետ,  
բայտ որում -մէ(ն)-ը դրվում է և՛ ուղղական-հայցականի, և՛ սեռական  
տրականի հիմքի վրա, իսկ մընէ-ն՝ միայն սեռական-տրականի. Արշագ-  
մէն-Արշագիւմէն||Արշագիւմընէ, ախպօրմէն||ախպօրմընէ, արզօսմէն||  
արզօսմընէ:

Բացառականը կազմվում է երկու հիմքից՝ ուղղական-հայցականի և  
սեռական-տրականի: Ի, ու, ա, ան հոլովման տիպերի բառերը կազմը-  
վում են ուղղական-հայցականից՝ նրէն, օսկիէն, տրնէն, տուտէն.—օ,  
օշ, ց հոլովակերտներ ստացողները՝ սեռական-տրականից՝ հօրմէն||հօր-  
մընէ, տալօշմէն||տալօշմընէ, Արմէնագէսմէն||Արմէնագէսմընէ: Վա հո-  
լովման բառերինը կազմվում է և՛ ուղղական-հայցականից, և՛ սեռական-  
տրականից. տարիէն||տարվընէ, ամիսէն||ամսվընէ:

Հոգնակին կազմվում է հոգ. ուղղական-հայցականից. պառավնէ-  
րէն, ունգուգնէրէն, էրեսնէրէն, ծառէրէն:

Գործիական հոլով: Է՛լ ավելի պարզության է հասել գործիական  
հոլովի կազմությունը: Գրաբարի վ, լ, բ, ու, օբ, ովբ, ուփ, բփ, իւփ ցու-  
ցիչներից բարբառում կայունացել է օվ-ը (անձ ցույց տվող բառերի  
դեպքում՝ մօվ) և՛ եզակի, և՛ հոգնակի թվերում: Այս հոլովի կազմության  
համար ևս հիմք են ծառայում ուղղ.-հայց. և սեռ.-տրակ. հոլովները: Ա-  
ռաջինով գործիական են կազմում ի, ու, ան, ա, վա, երկրորդով՝ օ, օշ, ց

հոլովման բառերը. նազրով, օրով, կինիով, լավութունով, ծուգով, բայց՝ ախպօրմով, քրօշմով, փուլքոսմով: Օ և օշ հոլովման բառերը երբեմն բացառական և գործիական հոլովներ են կազմում ուղղական-հայցականի հիմքից՝ փութէն, փուրով:

Հոգնակին կազմվում է հոգնակի ուղղական-հայցականից հոլովակերտի (օվ) հավելումով՝ սրդէտով, աշկէտով, պօխչաճէտով, մաղնիճէտով:

Կան մի շարք բառաձևեր, որոնք ամբողջությամբ և հատկապես այս կամ այն հոլովակերտի առկայությամբ հնարանություններ են և կիրառվում են առանձին դարձվածքներում, ինչպես՝ պաղնէց քաս, հաւսնէց տուն, մօրվօք էրիկ, չինչպես նաև՝ սրդաճց, մօրուց, պէրնուց, օրաճց, մէղաց, կարֆավ և այլն:

Երզնկան, արևմտյան խմբակցության բարբառների նման, շունի ներգոյականի հատուկ ձև և համապատասխան իմաստն արտահայտում է մյուս հոլովաձևերի շարահյուսական տարբեր կիրառություններով:

Փոխանցումներ հոլովման տիպերի միջև: Փոխանցումները հիմնականում կատարվում են այլ և ի(ն) տարածված հոլովման տիպերի միջև: Ամենից բնորոշը ի-ով ավարտվող բազմավանկ բառերի հոլովական զուգաձևություններն են, որոնք գրեթե հավասար բախմամբ հանդես են գալիս ու(ն) և ի(ն) հոլովակերտներով: Զգալի տարածում ունեն նաև վա(ն) և ու(ն) հոլովման տիպերի փոխանցումները: Մյուս դեպքերը մասնակի արտահայտություն են.

ու(ն)-ի(ն)-կինուն||կինիին, էքուն||էքիին, օսկուն||օսկիին  
վա(ն)-ու(ն)-տարվան||տարուն, ամսվան||ամսուն, ժամվան||ժամուն  
աճ-ի(ն)-մրգան||մուգին, ծրգան||ծուգին, լէճան||լէճին  
ա-ի(ն)-տաճ||տունին, շան||շունին  
ի(ն)-ան-ծառին||ծառան  
օշ(ը)-ու(ն)-տիրօշը||տիրուն

Հոլովման տիպերի հարացույցներ

եզակի թիվ

Մասնիկավոր տիպ

|                     |                |                |
|---------------------|----------------|----------------|
| ի(ն) հոլովում       | ու(ն) հոլովում | վա(ն) հոլովում |
| Ուղղ.-հայց. սիրտ    | կըլօխ          | տարի           |
| Սեռ.-տրակ. սըրդի(ն) | կըլխու(ն)      | տարվա(ն)       |

|        |          |                     |                   |
|--------|----------|---------------------|-------------------|
| Բացառ. | սըրդէ(ն) | կըլխէ(ն)  կըլօխէ(ն) | տարվընէ  տարիէ(ն) |
| Գործ.  | սըրդօվ   | կըլխօվ  կըլօխօվ     | տարօվ  տարիօվ     |

ան(ը) հոլովում

օշ(ը) հոլովում

ծուկ

քուր

ծըզան(ը)

քըրօշ(ը)

ծուգէ(ն)

քըրօշէն||քըրօշմէն||

քըրօշմընէ

ծուգօվ

քուրօվ||քըրօշմօվ

Հ ե ռ Թ ա գ ա յ ա կ ա ն տ ի պ

ա հոլովում

օ հոլովում

տուն

աղէգութուն

մար

տան(ը)

աղէգութան

մօր(ը)

տընէ(ն)||տունէ(ն)

աղէգութունէ(ն)

մօրէն||մօրմէն||մօր-

մընէ

տընօվ||տունօվ

աղէգութունօվ

մարօվ||մօրմօվ

Հոգնակի թիվ

Մ ա ս ն ի կ ա վ ո Ր տ ի պ

սըրդէր

կըլօխնէր

տարինէր

ծուգէր

տընէր||տունէր

սըրդէրու(ն)

կըլօխնէրու(ն)

տարինէրու(ն)

ծուգէրու(ն)

տընէրու(ն)||

տունէրու(ն)

սըրդէրէ(ն)

կըլօխնէրէ(ն)

տարինէրէ(ն)

ծուգէրէ(ն)

տընէրէն

||տունէրէ(ն)

սըրդէրօվ

կըլօխնէրօվ

տարինէրօվ

ծուգէրօվ

տընէրօվ||

տունէրօվ

Հ ե ռ Թ ա գ ա յ ա կ ա ն տ ի պ

ց հոլովում

քուրվըղիք

կարօէնք

քուրվըղօց(ը)

կարօէնց(ը)

քուրվըղօսմէն||քուրվըղօսմընէ

կարօէսմէն||կարօէսմընէ

քուրվըղօսմօվ

կարօէսմօվ

Հոգառության ֆերականական կարգը: Բարբառն ունի որոշյալության, ստացականության և դիմորոշության ենթակարգեր, որոնք ձևաբանորեն արտահայտվում են ս, դ||տ, ն, ք հոդերի միջոցով:

Որոշյալության-անորոշության ենթակարգը: Բնութագրում է ն/ը-Յ և ն/ը-մը հակադրություններով: Չունի գրաբարի գ նախդիրով կիրառություններ:

Արտահայտության պլանի ն, ք ցուցիչները հանդես են գալիս որպես որոշյալության կարգի արտահայտման դիրքային տարբերակներ. ն-ն գրվում է ձայնավորահանգ, ք-ն բաղաձայնահանգ բառերի վրածին, տըղան, առուն, Կարօն, տուոր, նուր, մարք, տաբգօցը, ցրվիք:

Ը, ն որոշյալ հոդ են ստանում գոյականները և փոխանունները՝ եզակի և հոգնակի թվերի ուղիղ և թեք ձևերում. ախպար, պրզդիգնէր, փաղին, կօճէն, մէձէրուն, իրէք, տէսածէն, ուղէլը:

Որոշյալ հոդ չեն ստանում գործիական հոլովը, վա հոլովման բացառականը և սեռական-տրական ու բացառական հոլովների որոշային կիրառությունները. Օտկով գրծէձէր: Առվընէ արգէվ գրմաղէ: Մարի ձաղիկ, փաղէ դրֆալ:

Անորոշության կարգի Յ և մը (<մի) ցուցիչները, որոնք նույնանում են գրաբարի նույն կարգի ցուցիչների հետ, միևնույն անփոփոխակի ազատ տարբերակներ են. մարթ||մարթ մը, տուն||տուն մը, տըղա||տըղա մը:

Մը-ն, որը գրաբարի նման ունի ետադաս կիրառություն, իր հերթին հանդես է գալիս մ և մըն դիրքային տարբերակներով: Մը-ն գրվում է բաղաձայնով, մ-ն՝ ձայնավորով սկսվող բառերից առաջ, իսկ մըն՝ անփանական ստորոգելիական վերադրի վրա՝ հանգույցից առաջ. Մարթ մը դէսա: Մարթ մէգավ: Մաթիգը աղվօր ախչիգ մըն է:

Որոշյալություն-անորոշություն հակադրությունը ձևաբանական մակարդակում երբեմն չեզոքանում է: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ որոշյալ առման իմաստն արտահայտվում է նաև առանց հոդի. Անցած օր դուն էգավ գինօվ:

Ավելի հաճախակի են անձ ցույց տվող գոյականների անհոդ կիրառությունները. Ավազներուն մէջ տըղաֆ տունդուրագ գրխաղան:

Ինքն>իմք դերանունը մեծ մասամբ հոդ չի ստանում. Իմք իր սահաթ մօցէր է իր գէցած վանքը:

Որոշյալ առման իմաստով անհոգ կիրառությունները գրաբարի դրսևորումներ են:

Ստացականության ենթակարգը: Արտահայտվում է ս, տ, ր/ն հոգերով. հարքս, տունքս, ծանրտ, ֆուգրտ, ըսելիքրտ:

Գոյականները և փոխանունները ստացական հոգ ստանում են եզ. և հոգ. թվերի ուղիղ և հոլովված բոլոր ձևերում. աշկրս, աշկիս, աշկէտ, աշկօվրտ: Կոշականները զուգորդվում են միայն ս հոգի հետ. Քաւրքս, պախստէդ մի՛ ճըշկօհիր:

Դերանվան և հոգի միջև -ին մասնիկը դրվելով՝ տվյալ բառն արտահայտում է կրկնակի ստացականություն. Անօր էֆիին ձառէր ձաղգէր ին, իմիներ՝ չէ (իմ այգու ծառերը):

Հոգ. ստացականության իմաստի համար հոգերին նախորդում է -նի՝ մասումնիս: Հոլովված ձևերի վրա -նի-ն դրվում է հոլովակերտից հետո՝ աշկօվնիս:

Ստացականության իմաստ են արտահայտում նաև ր/ն հոգերը: Դրանց ստացականությունը պայմանավորված է ոչ միայն որոշ խմբի բառերի ինչ-որ մեկին պատկանելու, ներքին ստացական իմաստ ունենալու հանգամանքով<sup>30</sup>, այլև ս, դ||տ ստացական հոգերի հետ նրանց հակադրությամբ, ինչպես՝ Վախէն սիրդը գրփըլփըլա (նրա սիրտը): Տըղան գըհասգընա, օ գըլխուն խաղ է խախցէր իր հարը (իր գլխին): Հավը գըղունցին մէշ վօրթ մը բըռնէր ու գըցէսկէ (իր կտուցի): Այլև՝ Տունըս ժէռքէս առին (իմ տունը): Տունըդ ձէռքէդ առին (քո տունը): Տունը ձեռքէն առին (նրա տունը):

Հավանաբար, ստացական պետք է դիտել նաև սեռական-տրականի ր/ն-ն, մանավանդ որ վերջինս հանդես է գալիս ստացական անդամի՝ հատկացուցիչի հետ զուգորդումներում, իսկ որոշիչի դեպքում ր/ն չի գործածվում՝ Արշագին դըղան (հատկացուցիչ), Արշագա գաւմունը (որոշիչ): Նույն հոլովում խնդիր ու պարագա կիրառություններում հանդես եկող ր/ն-ն, սակայն, որոշիչ հոգեր են. Հարցո՛ւր Արշագին:

Ձևաբանական մակարդակում հիշյալ իմաստների համար ր/ն հոգի հանդես գալու պայմանները սահմանադատված չեն: Բայց շնորհիվ այն բանի, որ ր/ն-ն, ինչպես նաև ս, դ-ն բազմաթեք են, դրանք արտահայտում են որոշյալություն, ստացականություն, այլև՝ դիմորոշություն: Վերջին իմաստի համար դրանք զուգորդվում են դերանունների, կապե-

30 Հմմտ, Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 125:

րի և կապական բառերի հետ. անմեղուս, ինքզինքն, վովրս, մինա-  
գրտ, փօլօրտ, մէշը, վրաւն, տագը, ֆօվը: Վօվրս կիդի (մեզնից ով՝  
1-ին դեմք): Մինագըդ էգօ՝ (դո՛ւ միայնակ՝ 2-րդ դեմք): Պի գանգըդիմ  
վրաւն (ներանից՝ 3-րդ դեմք):

### ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Բաղդատական աստիճանի կազմությանը բնորոշ է վերլուծական  
կառուցվածքը, որը ստացել է բառական-ֆեռականակա միջոցի արժեք:  
Բաղդատումը կատարվում է տըհա (<թրք. daha) բառ-մասնիկի միջո-  
ցով. տըհա մէծ, տըհա ուծօվ, տըհա որնդիկ, տըհա ձուտ, տըհա դինջ:

Սակավ կիրառություն ունի գրաբարի քան զ> քզ նախորդի միջոցով  
բաղդատականի կազմությունը. իմ սովունենքը խօջօր ին, քզ ֆուզըտ:

Շարահյուսական միջոց է, երբ համեմատելի առարկան դրվում է  
բացառական հոլովով. իմ շօշուխը ֆու շօշուխէն քրզդիք է:

Բաղդատական աստիճան է հաղորդվում -գէկ/գակ ածանցով. խօ-  
ջօրգէկ, մէզգէկ, ամուրգէկ, նէզգէկ, լավգէկ, սէվգակ:

Դերադրական աստիճանը ևս կազմվում է բառական-քերականա-  
կան եղանակով: Դրա համար գործածվում է անմէն||անմէն դերանվան  
բացառական հոլովածուր կամ թուրքերեն en>էն մասնիկը. անմէնէն մէ-  
ծը, անմէնէն պըզդիքը, անմէնէն պարսը, էն կըռիշը, էն սօնը, էն յէտկը:

Որակական ածականին բաղդատականի ու գերադրականի տարբեր  
աստիճաններ են հաղորդվում նկարագրական եղանակով, զանազան բա-  
ռերի միջոցով. շատ թուվ, խիս (<խիստ) պարակ, էփէի շատ, ֆիշ  
ծառ (<ծանր), պագաս ուծօվ:

Հարաբերական ածականները կազմվում են այլ խոսքի մասերից  
-ազան և -է ածանցների միջոցով. հօրէնազան, լալզան, տըղասիան,  
փաղէ, արծաթէ, օսկէ: Ածականը փոխանուն կիրառությամբ հոլովվում  
է, ստանալով ի(ն) հոլովակերտը՝ աղվօրը, աղվօրին, աղվօրէն, աղվօ-  
րօվ:

### ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Միավորների շարքն է. մէկ, էրգու||էրգուֆ, իրէֆ, շօս||շօս, հինգ,  
վէց, օխսը, ուրք, ինը: Վերջին թվականների ք-ն հանդես է գալիս իբրև  
արմատական հնչյուն:

Տասնավորների շարքն է. տաս||տասը, քրսան, էնսուն, ֆաոսուն,  
իծծուն, վածծուն, յէթմիշ, սաֆսան, տօխսան (վերջին երեքը փոխառու-  
թյուն թուրքերենից):

Մյուս թվականներից նշելի են՝ հարուր, հազար, միլիոն:

Տասնավորների և միավորների հարադրումը կատարվում է տասնավորների նախադաս շարահաստությամբ: Տաս||տասը թվականը բազադրյալ կազմություններում հանդես է գալիս տասներ հիմքով. տասներմէկ, տասներգուկ||տասվեգու, տասներիւէկ||տասվիւէկ, տասներջօս, տասներհինգ, տասներվէց, տասներօխտը, տասներուրը, տասներինը: Տասվեգու, տասվիւէկ ձևերի առաջացումը կարելի է բացատրել տասուէրգու, տասուիւէկ կազմություններից, որոնցում ու-ն ձայնավորներից առաջ օրինաչափորեն դարձել է վ<sup>31</sup>: վ-ն առկա է նաև մյուս տասնավորների և երգու, իւէկ թվականների հետ հարադրություններում, ինչպես՝ քառասունվեգու, իծծունվիւէկ:

Դասական թվականների համար բերո. գործածում է գրական լեզվի միջոցները՝ -օրօք, -օրք, -էրօրք ածանցներով կազմությունները. յէրգօրօք, յէրօրք, չօրօրք, հինգէրօրք:

Բաշխական թվականները կազմվում են՝ ա) բացարձակ թվականների կրկնությամբ՝ մէյ-մէկ, էրգ-էրգուկ, իւէկ-իւէկ, տաս-տաս. բ) բացարձակներից -ազան (ածանցի հավելումով՝ մէզազան, էրգուֆազան, քառաֆազան:

Թվականը ևս հոլովվում է միայն փոխանուն կիրառությամբ՝ պատկանելով ի հոլովման: Բացառություն է կազմում միայն մէկ թվականը, որը անձնանիշ կիրառությամբ սեռական-տրականում ստանում է ու(ն), իսկ իրանիշի դեպքում՝ ի/ն. Մէզուն հարցուցի: Ա՛ս քառին մի՛ գա՛րգ, ա՛ն մէգին գա՛րգ:

## ԴԵՐԱՆՈՒՆ

Դ ե մ ֆ ի կ ա ր գ ր—Առկա է երեք դեմք՝ 1-ին, 2-րդ, 3-րդ (աւատ-ան): Հատկանշական է, որ մի շարք դերանուններ դեմքի զաղափար են արտահայտում հոգերի միջոցով՝ վօլրս, անմէնրս, փօլօրք:

Որոշ դերանուններ ընդհանրապես չեզոք են դիմային իմաստի նրկատմամբ: Դրանք հիմնականում հարցական-հարաբերական դերանուններն են՝ իշֆան, ուր, յէփ, վօրֆան և այլն:

Թ վ ի կ ա ր գ ր—Հոգնակիի կազմության մեջ ավանդական արտահայտությունն ունեն էս-մէնֆ, տուն-տուֆ դերանունները ուղիղ և թեք ձևերում (վերջիններիս էլ ոչ լրիվ հարացույցը), մյուս դերանուններն

31 Հ. Սևադյանը այդ ձևերի վ-ն համարում է եւ շաղկապի կրճատում (տե՛ս Քննություն պոլսահայ բարբառի, էջ 105):

իրենց -օնֆ, -էր, -նէր անվանական հոգնակերտներով (սըվօնք, ինչէր, քանինէր) նորակազմութիւններ են:

Որոշ դերանուններ հանդես են գալիս կամ որպէս անհոգնականներ (դրանք հիմնականում ոչ առարկա մատնանշող ցուցական դերանուններ են՝ ասանգ||ըսանգ..., ասշափ||ըսշափ..., ըսդըղէ..., հօռ..., մի խումբ հարցական-հարաբերական, որոշյալ, անորոշ և ժխտական դերանուններ), կամ որպէս անեզականներ, թեև սրանք չունեն հոգնակի ցուցիչներ (դրանք են՝ անմէր, իրար):

Դրաբարի համեմատ մեծ է անհոգնական դերանունների թիվը:

Հ ո լ ո Վ ի կ ա ռ գ ը և հ ո լ ո Վ մ ա ն ա ի պ ե ռ — Ունի երկու տիպի հոլովում՝ զուտ դերանվանական, երբ դերանվան ուղիղ և թեք ձևերը հանդես են գալիս տարարմատներով՝ էս, իմ, ինձ||ինձի||ընձի, իս||զիս, առն, քու, քեզ||քեզի|| քզի, և որոնց հոլովումը չի կատարվում հոլովական վերջավորութիւնների միջոցով, և անվանական, երբ դերանուններն ստանում են գոյականներին հատուկ հոլովակերտներ՝ քանի-քանի, քանիք-քանիք, քանիքս-քանիքս, քանիքդ-քանիքդ, քանիքն-քանիքն, քանիքնք-քանիքնք:

Ի տարբերութիւն դրաբարի, բարբառում չկան ամբողջ հարացուցներով հակադրվող դերանվանական և անվանական հոլովումներ. դրանք առանձնանում են միայն հարացուցների մի մասով, այսինքն՝ դերանունը մի քանի հոլովաձևերում (սովորաբար մինչև հայցականը) ունի դերանվանական հոլովում, իսկ որոշ ձևեր (հատկապէս բացառականը և գործիականը) ստանում են անվանական հոլովակերտներ:

Հոլովման հարացուցում նման հակադրութիւն են հանդես բերում 1-ին և 2-րդ դեմքերի անձնական դերանունները եզ. և հոգ. թվերում, 3-րդ դեմքի անձնական և ցուցական դերանունները եզ. թվում:

Մյուս դերանունների եզ. և հոգ. թվերի հոլովումը կատարվում է անվանական հիմունքներով (անօնֆ, սըվօնֆ, ինչ, քանինէր, իրարու): Այս դեպքում գոյականների նման դերանուններն ունեն չորս հոլովաձև և եզ. թվի սեռական-տրականում ստանում են ի, ու, հոգ. թվում՝ ու, ց հոլովական թեքութիւններ:

Դերանվանական և անվանական հոլովումների սահմանների խախտումը՝ հօգուտ անվանական հոլովման տիպի ընդարձակման, արտահայտութիւն է հոլովման համակարգի միասնականացման և պարզեցման:

Դերանունների ձևաբանական անմիատարրութիւնը երևում է ոչ միայն թվի ու դեմքի, այլև հոլովի կարգում. որոշ դերանուններ հոլովման հարացուցներ չեն կազմում: Դրանք հիմնականում այն դերանուն-

Եւրն են, որոնք չեզոք են նաև թվի և դեմքի կարգերի նկատմամբ: Որոշ դերանուններ էլ ունեն թերի հոլովում, ինչպես ուր-ը, որը ունի միայն բացառական՝ ուրգէ:

Դերանունների, ինչպես նաև անձնանունների և անձ ցույց տվող բառերի գործիական հոլովաձևով կիրառություններ բարբառին բնորոշ չեն:

Դերանունների տեսակները և նրանց հոլովման հարացույցները— Կան դերանունների անձնական, ցուցական, որոշյալ, անորոշ, հարցական-հարաբերական, ժխտական և փոխադարձ տեսակները: Անձներական դերանունների իմաստն արտահայտվում է նկարագրական եղանակով, անվան և ալ>ա(էլ) շաղկապի հարադրությամբ՝ ամէներն ա (ամենքով, ամենն էլ):

Ա ն ձ ն ա կ ա ն դերանուններն են՝ էս, տուն, ան||ըն, ինք-մէք, տուք, անօնք||ընօնք, իրէնք:

Եզ. թվի 1-ին դեմքը ճիշտ նույնն է գրաբարի հետ՝ էս<ես. 2-րդ դեմքի ն-ի հավելումը՝ դու>տուն, բացատրվում է ան դերանվան համաբանությամբ: Սեռականը և տրականը ևս նույնն են գրաբարի հետ. իմ, ինձ և քու, քեզ: Ինձ և քեզ դերանունները հաճախ հանդես են գալիս ի հավելվածով՝ ինձի (նաև քնձի) և քեզի||քրզի, որը անվանական ի հոլովման ազդեցություն է: Բարբառի համար անսովոր հնչյունափոխությամբ (ե/ը) քրզ, քրզի ձևերը չունեն լայն տարածում:

1-ին դեմքի հայցականը բարբառում ունի զիս, իս, ինձ||ինձի||ընձի տարբերակները: Հնագույնը գրաբարի հետ նույնացող զիս ձևն է, որը սակայն ունի քիչ գործածություն: Մյուս երկուսը՝ իս և ինձ||ինձի||ընձի (առաջացած գրական հայերենի ու այլ բարբառների հետ ընդհանրանալու ձգտմամբ) ունեն գործածության հավասար բաշխում:

2-րդ դեմքի եզ. հայցականը գրաբարից տարբերվում է զ նախդրի բացակայությամբ՝ զքեզ>քեզ: Սրա տարբերակներն են՝ քեզի, քրզ, քրզի:

Երկու դեմքերն էլ բացառական հոլովում ունեն երեք տարբերակ՝ ինէ, իզմէ, իմմնէ և քեէնէ, քեզմէ, քումմնէ: Ինէ և քեէնէ ձևերը գրաբարյան յիմէն և ի քեէն ձևերի անմիջական շարունակությունն են. նախ՝ դուրս է մղվել առաջին դեմքի վերջին ն-ն՝ դիտվելով իբրև հոդ<sup>32</sup>, որով դերանվանը տրվել է գոյականների բացառական հոլովի կերպարանք՝ յիմէն>յիմէ: Սրա նմանողությամբ և դարձյալ անվանական հոլովմանը

32 Հ. Անտոյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 74:

նմանվելու ձգտմամբ է է ավելացել ի ֆէն ձևին՝ ի ֆէնէ, որից հետո  
ընկել են յ, ի նախդիրները՝ յիեն>իենէ, ի ֆէնէ>ֆէնէ:

Իմմընէ և ֆումընէ տարբերակներն ունեն անվանական հոլովման  
կառույց՝ սեռականի հիմք+մընէ (ինչպես՝ Արշագիմմընէ, տըղունմընէ):  
—մընէ մասնիկը ամենայն հավանականությամբ կապ ունի գրաբարի մի  
շարք դերանվանական ձևերի բացառական հոլովում հանդես եկող վեր-  
ջավորության հետ՝ յիմմեմնէ, յումմեմնէ, ի սմմնէ, ի դմմնէ, յայսմմնէ,  
յայնմմնէ և այլն<sup>33</sup>: Այդ վերջավորություններից միջին վանկի ձայնա-  
վորի (ա) օրինաչափ հնչյունափոխությամբ առաջացած մընէ-ն քարա-  
ցել է իբրև անկախ ձևույթ և դերանունների բացառական հոլովից սկսել  
է տարածվել նաև անվանական հոլովման համակարգում՝ կայունանա-  
լով անձնանունների և անձ ցույց տվող գոյականների ոլորտում:

Իզմէ և ֆէզմէ ձևերն առաջացել են հետևյալ անցումով: Դարձյալ  
անվանական հոլովման հետ ընդհանրանալու միտումով էս և տուն դե-  
րանուններից բացառական է կազմվել տրականի հիմքից՝ անձնա-  
նիշ բառերի հոլովմանը հատուկ բացառականի —մէ ձևույթի հավելումով՝  
իենձ+մէ: Քանի որ բարբառում ն-ի համար բացառված է երկու բաղա-  
ձայններին նախորդող դիրքը (տվյալ դեպքում ն-ն ձմ-ից առաջ), ուս-  
տի ն-ն ընկել է, իսկ ձ-ն ռնգալիների մոտ, ըստ բարբառում գործող  
օրինաչափության, կորցրել է պայթական բաղադրիչը՝ հանդես գալով  
շփական տարրով՝ իենձմէ>իձմէ>իզմէ:

Երկրորդ դեմքում, պարզապես, տրականի հիմքին ավելացել է  
մէ՝ ֆէզ+մէ:

Էս և տուն դերանունների գործիականը լրիվ հեռացած է գրաբարի  
իեն և ֆն ձևերից և բացառականի հետևողությամբ ունի անվանական  
հոլովման կազմություն, այն է՝ տրականի հիմք+մով. իենձ+մով-իենձ-  
մով>իձմով>իզմով և ֆէզմով:

Հոգնակի թվում ևս 1-ին և 2-րդ դեմքի դերանունները լինելով  
նույնը գրաբարի հետ՝ հանդես են բերում միայն ավանդական և բար-  
բառին հատուկ հնչյունափոխություններ. մեֆ>մէնֆ, դում>տում:  
Դրանք գրաբարի հետ նույնանում են նաև սեռական, տրական և հայ-  
ցական հոլովաձևերում. վերջինում բացակայում է զ նախդիրը. մէր,  
մէզ||մէզի, ծէր, ծէզ||ծէզի:

Բացառական և հատկապես գործիական հոլովները հեռացած են  
գրաբարի ձևերից և հետևում են անվանական հոլովման կազմությանը,

33 Գ. Տեր-Վարդանեան, նշվ. աշխ., էջ 39:

ինչպես այդ տեղի էր ունենում եզ. թվում. բացառականը՝ մէզմէ, մէրմընէ, ծէզմէ, ծէրմընէ, գործիականը՝ մէզմով-ծէզմով:

Բացառականի հոգ. ունի նաև մէնէ, ծէնէ հնագույն ձևեր, որոնք կապվում են գրաբարի ի մէնջ, ի ձէնջ ձևերի հետ, որոնցից մէնէ, ծէնէ-ի առաջացումը նույն ընթացքով է կատարվել, ինչպես յինէն, ի ֆէն ձևերից ինէ, ֆէնէ ձևերն են առաջացել, այսինքն՝ ի մէնջ>ի մէն>ի մէնէ>մէնէ, ի ձէնջ>ի ձէն>ի ձէնէ>ծէնէ:

Յ-րդ դեմքի եզ. թվի համար գործածվում է ցուցական դերանունը՝ այն>ան, որը բարբառում բազմիմաստ է. այն և՛ անձնանիշ է, և՛ իրանիշ: Ան-ը հանդես է գալիս նաև ըն տարբերակով: Հոգնակին ևս շեղված է գրաբարյան ձևից և ունի զուտ անվանական կազմություն. եզակիի հիմքից -օն ֆ հոգնակերտի միջոցով կազմվել է անօնֆ||ընօնֆ և ճըվօնֆ ձևերը: Ընդհանրապես Յ-րդ դեմքում անհայտ է անվանական հոլովման ազդեցությունը. նախ՝ ամբողջ հոգ. թիվն ունի անվանական հոլովում՝ անօնֆ-անօնց-անօսմէ-անօսմով (ինչպես՝ պարօնֆ-պարօնց-պարօսմէ-պարօսմով): Ազդեցությունը որոշակի է նաև հոլովների ձևային դրսևորման մեջ, որի քանակը չորսն է, ի տարբերություն մյուս դերանունների, որոնք ունեն հինգ, երբեմն նաև վեց հոլովական ձևավորում: Այնուհետև, Յ-րդ դեմքի դերանվան հայցականը անձի առման ուղիղ խնդրի կիրառություններում շատ հաճախ նմանվում է ուղղականին՝ ինչպես անունների դեպքում՝ ի տարբերություն մյուս դեմքերի դերանունների: Այսպես՝ ծընօխբ գաղօթին, օ սուրփը իրէնց միճուջաւրին առօխչուրուն դա ու փէնիվանի մը չափ ուժով անէ՛ ան (փոխանակ՝ անօր): Մյուս դեմքերը հիշյալ կիրառություններում կլինեն՝ ուժով անէ իս, ֆէզ, բայց ոչ երբեք՝ ուժով անէ էս, աուն:

Այս նշանակում է, որ անձնական դերանուններից առաջին քայլը դերանվանական հոլովումից դեպի անվանական հոլովում կատարել է Յ-րդ դեմքի դերանունը, որին հետևել են մյուս դեմքի դերանունները որոշ հոլովաձևերում (հատկապես բացառականում և գործիականում):

Ան||ըն դերանվան սեռականն է անօր||ընօր, որը կարելի է բխեցնել գրաբարի այն դերանվան սեռականի երկար ձևից՝ այնօրիկ-ից իկ-ի անկումով: Որպես անվանական հոլովմանը հետևող դերանուն՝ սեռականի ձևն ունի նաև տրականը: Հայցականը ունի ան||ըն և անօր||ընօր գուգաձևերը:

Բացառական հոլովն ունի անգէ||ընգէ, անգէց||ընգէց, անօրմէ||ընօրմէ, անօրմընէ||ընօրմընէ տարբերակները՝ բոլորն էլ հեռացած գրաբարի յայնմ, յայնմանէ ձևերից: Վերոբերյալ տարբերակներից հնագույն-

նը, կարծում ենք, անգէ՛ ձեն է, որը հնարավոր է բխեցնել գրաբարի այն դերանվան այնմիկ ձեւից, մի-ի անկումով՝ այնմիկ>այնկ>անգ, որից և է հոլովակերտի հավելումով՝ անգէ||ընգէ:

Իրենց –մընէ մասնիկով հնագույն հետքեր են պարունակում նաև անօրմընէ||ընօրմընէ ձեւերը՝ կապվելով գրաբարի յայնմանէ-ի վերջավորության հետ: Սակայն ամբողջ կառուցվածքով՝ սեռականի հիմք+մընէ, հիշյալ ձեւերն ավելի ետին շրջանի կազմություններ են:

Անգէց||ընգէց ձեւում ամենայն հավանականությամբ հանդես են գալիս բարբառների արևմտյան և արևելյան խմբակցությունների, ինչպես նաև հայերենի գրական երկու տարբերակների բացառական հոլովի է, ից ցուցիչները միաժամանակ: Այստեղ կատարվել է այն երևույթը, որը բարբառագիտության մեջ անվանված է խառնում (смешивание) և ապա՝ համահարթում (выравнивание):

Անգէ||ընգէ և անգէց||ընգէց ձեւերը հանդես են գալիս հիմնականում իրանիշ իմաստով, իսկ անօրմէ||ընօրմէ և անօրմընէ||ընօրմընէ տարբերակները միայն անձնանիշ կիրառությամբ, որոնք և անձ ցույց տվողների նման ունեն սեռականի հիմք+մէ, մընէ կառույց:

Գործիականը լրիվ հեռացած է գրաբարի այնու, այնուիկ ձեւերից և ունի անվանական հոլովման կազմություն՝ սեռական+մով. անօրմով||ընօրմով:

Ինքն>ինք և իւրեանք>իւրէնք դերանունների սեռական, տրական ձեւերը կապվում են իւր>իւ և իւրեանց>իւրենց ձեւերի հետ: Սրանց բացառականը և գործիականը ևս ունեն անվանական հոլովման կազմություն:

Ինքզինքը դերանունը համապատասխան հոգերի հետ արտահայտում է 1-ին, 2-րդ, 3-րդ դեմքերի անձնական դերանվան իմաստ. ինքզինքը, ինքզինքը, ինքզինքը (ես ինքս, ինքս ինձ, դու ինքդ, ինքդ քեզ, նա ինքը, ինքն իրեն): Հոգնակին է՝ ինքզինքնէրս կամ ինքզինքնիս: Հոլովումը կատարվում է անվանական հոլովման սկզբունքներով, սեռական-տրականում եզ. թվում ստանալով ի, հոգ. թվում՝ ու հոլովակերտը:

Անձնական դերանունների հոլովման հարացույցը

Եզակի թիվ

Ես>էս

դու>տուն

Ուղղ. էս

տուն

Սեռ. իմ

քու

Տրակ. ինձ||ինձի||ընձի

քեզ||քեզի||քրզ||քրզի

|        |                          |                      |
|--------|--------------------------|----------------------|
| Հայց.  | իս, զիս, ինձ  ինձի  ընձի | քէզ  քէզի  քրզ  քրզի |
| Քացառ. | ինէ, իմմընէ, իզմէ        | քէնէ, քումընէ, քէզմէ |
| Գործ.  | իզմով                    | քէզմով               |

|                            |                          |
|----------------------------|--------------------------|
| ան  ըն                     | ինք                      |
| անօր  ընօր                 | իր, իրէն                 |
| անօր  ընօր                 | իրէն                     |
| ան, անօր  ընօր             | ինք, իրէն                |
| անգէ  ընգէ, անգէց  ընգէց   | իրմէն, իրէնմէն, իրէնմընէ |
| անօրմէ  ընօրմէ, անօրմընէ   |                          |
| ընօրմընէ                   |                          |
| անօվ  ընօվ, անօրմօվ  ընօր- | իրմօվ, իրէնմօվ           |
| մօվ                        |                          |

ինքզինքըս (ըստ, ը) — ինքզինքիս(իտ, ին) — ինքզինքէս(էտ, էն) -  
ինքզինքօվըս(ըստ ը)

#### Հ ո գ ն ա կ ի թ ի վ

|                   |                               |                    |
|-------------------|-------------------------------|--------------------|
| մէնք (<մեք)       | տուք (<դուք)                  | անօնք  ընօնք       |
| մէնք              | տուք                          | անօնք  ընօնք       |
| մէր               | ծէր-                          | անօնց  ընօնց       |
| մէզ  մէզի         | ծէզ  ծէզի                     | անօնց  ընօնց       |
| մէզ  մէզի         | ծէզ  ծէզի                     | անօնք  ընօնք       |
|                   |                               | անօնց  ընօնց       |
| մէնէ, մէրմընէ,    | ծէնէ, ծէրմընէ,                | անօսմէ  ընօսմէ     |
| մէզմէ             | ծէզմէ                         | անօսմընէ  ընօսմընէ |
| մէզմօվ            | ծէզմօվ                        | անօսմօվ  ընօսմօվ   |
| իրէնք             | ինքզինքնիս (իտ, ին)           |                    |
| իրէնց             | ինքզինքնուս (ուտ, ուն)        |                    |
| իրէնց             | ինքզինքնուս (ուտ, ուն)        |                    |
| իրէնք, իրէնց      | ինքզինքնիս (իտ, ին)           |                    |
| իրէսմէն, իրէսմընէ | ինքզինքնէս (էտ, էն)           |                    |
| իրէսմօվ           | ինքզինքնօվնիս (օվնիտ, օվնին), |                    |

- Ց ու ջ ա կ ա ն դ ե ր ա ն ու ն ե ր — Գրաբարի այս, այդ այն դե-  
րանուններին բարբառում համապատասխանում են աս||ըս, ատ||ըտ,

ան||ըն, իսկ սա, դա նա ցուցականներին սը, տը, նը ձևերը: Անկախ դերանվանական կիրառություն ունեն միայն աս, աա, ան տարբերակները. Ադ նէ՝ մարթումէն գըվախնա, նէ՝ ա աստուգմէն: Ան էգալ: Մյուս տարբերակները ունեն որոշչային կիրառություն. ըս մարթը, նը մէգը: Ցուցականների հոգնակին է՝ ասօն||ըսօն, սըվօն, ադօն||ըդօն, տըվօն, անօն||ընօն, նըվօն:

Աս||ըս, աա||ըա ձևերը և սրանց հոգնակները հոլովում են ան||ըն, անօն||ընօն ձևերի նման (վերջիններիս հոլովումը տրված է անձնական դերանունների բաժնում): Տալիս ենք մյուս ձևերի հարացույցները.

#### Ե գ ա կ ի ր ի վ

|             |                             |                             |                             |
|-------------|-----------------------------|-----------------------------|-----------------------------|
| Ուղղ.-հայց. | սը                          | տը                          | նը                          |
| Սեռ.-տրակ.  | սըվօր                       | տըվօր                       | նըվօր                       |
| Բացառ.      | սըգէ, սըվօրմէ,<br>սըվօրմընէ | տըգէ, տըվօրմէ,<br>տըվօրմընէ | նըգէ, նըվօրմէ,<br>նըվօրմընէ |
| Գործ.       | սըվօվ                       | տըվօվ                       | նըվօվ                       |

#### Հ ո գ ն ա կ ի ր ի վ

|             |                       |                      |                      |
|-------------|-----------------------|----------------------|----------------------|
| Ուղղ.-հայց. | սըվօնք                | տըվօնք               | նըվօնք               |
| Սեռ.-տրակ.  | սըվօնց                | տըվօնց               | նըվօնց               |
| Բացառ.      | սըվօսմէ,<br>սըվօսմընէ | տըվօսմէ<br>տըվօսմընէ | նըվօսմէ<br>նըվօսմընէ |
| Գործ.       | սըվօսմօվ              | տըվօսմօվ             | նըվօսմօվ             |

Ցուցականների մյուս շարքերն են՝ ասիգա, ադիգա, անիգա, ասանգ, ադանգ, անանգ||ըսանգ, ըդանգ, ընանգ, ասչափ, ատչափ, անչափ||ըսչափ, ըտչափ, ընչափ, ըստին, ըտտին, ընդին, ասֆան, ատֆան, անֆան||ըսֆան, ըտֆան, ընֆան, ասկերայ, ադգէրայ, անգէրայ, ըսդըդէ, ըդդըդէ, ընդըդէ, հօս, հօտ, հօն, հօստէլ, հօտտէլ, հօնդէլ:

Այս դերանուններից հոլովման լրիվ հարացույց ունեն հօստէլ, հօտտէլ, հօնդէլ շարքերը՝ սեռ.-տրակ.՝ հօստէլին, հօտտէլին, հօնդէլին, բացառ., հօստէլէն, հօտտէլէն, հօնդէլէն, գործ. հօստէլօվ, հօտտէլօվ, հօնդէլօվ: Ասչափ... ըսքին... շարքերն ունեն բացառական և գործիական հոլովաձևեր՝ ասչափէն..., ասչափով..., ըստինէն..., ըստինօվ: Ասկերայ... շարքն ունի միայն գործիական հոլովաձև՝ ասկերօվ, ադգէրօվ, անգէրօվ:

Ցուցականների մյուս շարքերը չեզոք են հոլովի կարգի նկատմամբ:

Փ ո խ ա դ ա ր ձ դերանունն է՝ իրառ||իրարու, որի հոլովման գրաբարի դերանվանական տիպը բարբառում փոխարինված է անվանականով.

Սեռ.—Տրակ.-Հայց.

իրար||իրարու

Բացառ.

իրարմէ, իրարումընէ

Հ ա ր ց ա կ ա ն -հ ա ր ա ք ե ր ա կ ա ն դերանուններն են՝ վօվ, վօր, ինչ||իշ, ինչու, քանի, վօրքան, իշչափ, իշքան, ինդօր||ինդօ, իշդրդէ, քանի հեղ, ուրդէղ, ուր, յէփ, յէփօ (երբ որ), վօվօր||վօվ օ (ով որ), ուրգէ, ուսկէ, ուրգէուր, վօր մէգը:

Վօվ-ը չունի հոլովման հարացույց: Նրա թեքված ձևերի իմաստները արտահայտվում են վօր-ի հարացույցի միջոցով. սեռ.-տրակ՝ վօրու(ն), հայց՝ վօրը, բացառ՝ վօրումընէ: Չկա գործիականի հոլովածև:

Ուրդէղ-ը ունի բացառական և գործիական հոլովներ՝ ուրդէղէն, ուրդէղով:

Վօրքան, իշչափ, իշքան դերանունների հոլովված ձևերը գրական լեզվի ազդեցությամբ են:

Հոլովման լրիվ հարացույց ունեն քանի-քանիներ, ինչ-ինչեր և վօր մէգը դերանունները.

#### Ե զ ա կ ի ք ի վ

Ուղղ.-հայց.

քանի

ինչ

վօր մէգը

Սեռ-տրակ.

քանիին

ինչին

վօր մէգին||վօր  
մէգուն

Բացառ.

քանիէն

ինչէն

վօր մէգէն

Գործ.

քանիով

ինչով

վօր մէգով

Հոգ. թիվ՝ քանիներ-քանիներուն-քանիներէն-քանիներով  
ինչեր-ինչերուն-ինչերէն-ինչերով

Հարցական-հարաբերական մյուս դերանունները չեզոք են հոլովի կարգի նկատմամբ:

Ո ր ո շ յ ա լ դերանուններն են՝ անմէր||անմէմբ, անմէ մէգը, անմէն ինչ, անմէն քան, պիթունը, փօլօրը: Սրանք հոլովվում են անվանական հոլովմամբ՝ անմէր և անմէն մէգը պատկանելով ու, մյուսները՝ ի հոլովման:

Անմէր-անմէնուն-անմէնէն-անմէնով

անմէն մէգը-անմէն մէգուն-անմէն մէգէն-անմէն մէգով

փօլօրը-փօլօրին-փօլօրէն-փօլօրով

պիթունը-պիթունին-պիթունէն-պիթունով

Ա ն ո Ր ո շ դ ե ր ա ն ու ն ն ե ր ն ե ն՝ մէգը, մը||մ, ուրուշը, մէ-  
գալը, ասիւնը, անիւնը, ֆըլանը, ֆըստանը, իշ-ֆօր և ֆանի մը: Բացի  
իշ-ֆօր և ֆանի մը դերանուններից, մյուսները հոլովվում են անվանա-  
կան հոլովման սկզբունքներով, մէգը ստանալով սեռական-տրականում  
ու կամ ի (ըստ իրանիշ և անձնանիշ կիրառության), մյուսները՝ ի թե-  
քույթ: Բացի մէգ-ից մյուսները ստանում են հոգնակերտներ և դարձյալ  
կազմում հոլովման հարացույցներ: Մէգալը հոգնակիրում զուգորդվում է  
-օնք և -նէր ձևայինների հետ՝ մէգալօնք և մէգալնէր: Առաջին դեպքում  
հոլովումն իրականացվում է ֆ/ց հերթագայությանմբ՝ մէգալօնց-մէգա-  
լօսմէն -մէգալօսմընէ: Եղակիի դեպքում՝ ի մասնիկով՝ մէգալին, մէգա-  
լէն:

Ժ խ տ ա կ ա ն դ ե ր ա ն ու ն ն ե ր ն ե ն՝ վօշ մէգը, հէշ մէգը, վօ-  
շինշ, հէշ պան: Հոլովվում են մէգ-ով բաղադրվածները՝ նման վօր մէգը  
որոշյալ դերանվան և հէշ պան-ը՝ սեռ.-տրակ.-ում ստանալով ի(ն):

Ս տ ա ց ա կ ա ն դ ե ր ա ն ու ն ն ե ր ն ե ն՝ իմ, ֆու, անօր, իրէն,  
մէր, ծէր, անօնց, իրէնց: Սրանք հոլովվելիս ստանում են համապատաս-  
խան դեմքի հոդ, որին նախորդում է -ին միջամասնիկը՝ իմինըս, ֆու-  
գինէտ:

Ստացականների հոգնակիի կազմությունը, ինչպես նաև հոլովումը  
կատարվում է անվանական հոլովման հիմունքներով: Իմ և ֆու ստացա-  
կանները հոլովվում են -ին միջամասնիկով և առանց դրա.

#### Եզակիի թիվ

|             |              |                           |
|-------------|--------------|---------------------------|
| Ուղղ.-հայց. | իմըս  իմինըս | քուգըտ  քուգինըտ անօրը    |
| Սեռ.-տրակ.  | իմիս  իմինիս | քուգիտ  քուգինիտ անօրինը  |
| Բացառ.      | իմէս  իմինէս | քուգէտ  քուգինէտ անօրինէն |

իրէնը-իրէնինը-իրէնինէն-իրէնինօվ

|         |         |           |           |
|---------|---------|-----------|-----------|
| մէրը    | ծէրը    | անօնցը    | իրէնցը    |
| մէրինը  | ծէրինը  | անօնցինը  | իրէնցինը  |
| մէրինէն | ծէրինէն | անօնցինէն | իրէնցինէն |

#### Հոգնակիի թիվ

|            |              |              |              |
|------------|--------------|--------------|--------------|
| իմիններըս  | քուգիններըտ  | անօրինները   | իրէնինները   |
| իմիններուս | քուգիններուտ | անօրիններուն | իրէնիններուն |
| իմիններէս  | քուգիններէտ  | անօրիններէն  | իրէնիններէն  |

Բայական համակարգը բնութագրվում է եղանակի, ժամանակի, դեմքի, թվի և սեռի քերականական կարգերով: Սրանցից յուրաքանչյուրը իմաստային տեսակետից համընկնում է հայերենի զարգացման բոլոր փուլերում բայ խոսքի մասը բնորոշող հիշյալ քերականական կարգերի արտահայտած իմաստներին:

Կառուցվածքային տեսակետից ևս բարբառը, որպես հայոց լեզվի բաղկացուցիչ մասը, իր բայական համակարգով հիմնականում մնում է ընդհանուր հայերենի<sup>34</sup> կաղապարներում:

### Բայակազմություն

Բայերն ըստ կազմության լինում են համադրական և հարադրական: Հարադիր բայերը խոնարհվում են նույն ձևով, ինչպես հայերենում ընդհանրապես: Զուտ բայական հարադրությունների երկու բաղադրիչներն էլ մասնակցում են խոնարհմանը, իսկ մյուս տիպի հարադրությունների դեպքում խոնարհվում է միայն վերջին բաղադրիչը՝ բայը: Խոնարհմանը չի մասնակցում առաջին բաղադրիչը նաև այն դեպքում, երբ վերջինս փոխառյալ բայ է, որը, փաստորեն, հանդես է գալիս անվանական արժեքով. փաթլամիշ բլլալ-փաթլամիշ կրլլամ-փաթլամիշ էղա և այլն:

Բայական համակարգի քննության համար է՛լ ավելի կարևոր են բայերի համադրական կազմությունները:

Ծթե անորոշ դերբայը դիտենք ելակետային բայաձև, ինչպես սովորաբար արվում է հայ քերականության մեջ, ապա համադրական բայերի կառուցվածքը պետք է բնութագրել ճիմֆ+բայական վերջավորություն կաղապարով:

Բայերի հիմքը, ողջ հայերենի նման, լինում է ածանցավոր և անածանց: Բայածանցները խմբավորվում են հիմքակազմ, կերպանիշ և սեռանիշ տեսակների մեջ:

Հիմքակազմ ածանցներն են՝ (ա, է, ը) և և չ: Առաջինը պատմականորեն հանգում է գրաբարի և, աճ, եճ ածանցներին: Գրաբարի և ածանցով բայերը և-ն պահում են անփոփոխ, աճ և եճ ածանցների ա, ե ձայնավորները համապատասխան հնչյունական օրենքների (միջին վանկի ձայնավորի փոփոխություն) հիման վրա ընկնում կամ հնչյու-

<sup>34</sup> Ընդհանուր հայերեն ասելով հասկանում ենք հայերենի այն համակարգը, որն ընդհանուր է՝ գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար շրջանների համար:

նափոխվում են ը-ի, իսկ երբեմն էլ ան, եմ ածանցները հանդես են գալիս նույնությամբ. թքնուկ-թրֆնէլ, տեսանել-տէսնալ, ագանիւ-նաֆ-նիլ, վախենալ-վախնալ, մօտենալ-մօղէնալ:

(Ա, է, ը)ն-ն կենսունակ ածանց է և բացի գրաբարի հետ ընդհանուր բայերի շերտում հանդես գալուց, զուգորդվում է բազմաթիվ արմատների (հայերեն և փոխառյալ) հետ՝ ստեղծելով նոր բայահիմքեր՝ շառ+ան+ալ-շաղնալ, ռինդ+ան+ալ-ըռնդնալ-ըռդնալ, ղալդ+են+ալ-ղալդէնալ, խիպ+ն+ալ-խըպնալ:

Կիրառության խիստ սահմանափակ ոլորտ ունի չ հիմքածանցը: Կարելի է ասել, որ արևմտյան խմբի բարբառներում այն անհետացման եզրին է: Նախ՝ այդ ածանցով նոր բայահիմքեր չեն ստեղծվում, ինչպես (ա, է, ը) ն ածանցով, երկրորդ՝ գրաբարի չ բայածանցը բարբառում հիմնականում փոխարինված է ն-ով կամ ընկած է<sup>35</sup>. չ-ով ձևերը ներկայացնում են զուգահեռ տարբերակ. թռչել>թռնիլ||թռչիլ, փախել>փախնիլ||փախչիլ, կպչել>կբբնալ, փլչել>փլիլ, ուռչել>ուռիլ:

Այստեղ չեն գործառում գրաբարի -նչ, -աչ, -անչ հիմքածանցները: -նչ ածանցով բայերից կա միայն կոռնչել-ը կօսըվիլ<sup>36</sup> ձևով: Սա պատկանում է -վ||ֆ ածանցով շեղոք սեռի բայերի խմբին:

Ճանաչել>ճանաչանալ>ճանչնալ>ճանչնալ>ճաշնալ բայի -շ(<չ)-ն բարբառում հանդես է գալիս իբրև արմատական հնչյուն և պահվում է անցյալի հիմքից կազմվող ձևերում՝ հակառակ գրաբարի, ուր -չ-ն (կամ -աչ-ը) ածանց է<sup>37</sup> և օրինաչափորեն ընկնում է անցյալի ձևերում. անց. կատ. գրբ.՝ ծանեայ,բրբռ.՝ ճաշծա: Այս բայը բարբառում հանդես է գալիս նոր ածանցով՝ -ն-ով: Ճաշնալ-ի համանման կազմություն ունի ամաշել>ամըշնալ>ամըշծա բայաձևը:

35 Ձ բայածանցի առկայություն-բացակայություն հատկանիշով հայերենի բարբառները հիմնականում բաշխվում են արևելյան և արևմտյան խմբակցությունների միջև: Ուստի հայ բարբառների դասակարգման համար հիշյալ հատկանիշը խիստ էական է, որի հաշվառումը տալիս է նույնպիսի արդյունքներ, ինչպիսիք, ասենք, տալիս են բացառական հոլովի է(ն) և (ի, ու, ա)ց ցուցիչներով տարբերակվածություն, ներգոյական հոլովի առկայություն-բացակայություն և բարբառները մեծ խմբերով բաժանող քիչ թվով այլ մի քանի հատկանիշներ:

36 Կօսըվիլ բայը բարբառում սկզբնաձև է դարձել գրաբարի պատճառականի կոռուսանել ձևից. բարբառում նրա պատճառականն է կօսընցնել, որի մեջ ծագումնաբանորեն առկա է պատճառականի կրկնակի ածանց՝-սըն և -ցըն:

37 Ճանաչել բայում Աճառյանը ածանց է համարում -չ-ն (Արմատական բառարան, հ. 4, էջ 588—589), Ա. Արրահամյանը՝-աչ-ը (Գրաբարի ձևմարկ, Երևան, 1958, էջ 111):

Ի տարբերություն գրաբարի, ուր բազմապատկական կերպանիշ ածանցները թվով սահմանափակ են և գործածությամբ հազվադեպ, բարբառներում խիստ հաճախանում է դրանց կիրառությունը, միաժամանակ հանդես են գալիս մեծ թվով նոր կերպածանցներ: Գրաբարի -տ>դ, -ատ>-ադ||դ, -ոտ>օդ ածանցների հետ միասին բարբառում գործառում են -կօդ, -ոդ||-բդ, -վօր||ավօր<sup>68</sup>, -վբդ, գ, -դգ, -գբդ, -դբդ, -գբվ, բոթկ, -թկ, -լդ||բդ, -շբդ, -կբդ||գբդ, -վբդ||վբդգ, -(ը)նդ կերպածանցները. արֆալդէլ, ուտէսֆօրիլ (ուռեցավորվել), ճաթրոդէլ, ֆէրվրդիլ, շրնթրոգիլ, կարմրեղբգիլ, խազղբդէլ, ծէզգբվիլ, ծէզգբրոդիլ, կրսմրոթկէլ, պրջրլդալ||պրջրդալ, պօռշրդալ, ֆրսկրոդէլ, ֆրսվրոդգէլ, ասխրնդէլ:

Կերպածանցները կենսունակ լինելուց բացի, օժտված են այլ ածանցների հետ զուգորդվելու ունակությամբ: Այդ զուգորդումներում նրանք լինում են առաջին բաղադրիչը. ճըմ-բոթգ-էց-վ-իլ-ճըմրոթգէս-ֆիլ:

Սեռանիշ ածանցներն են՝ -վ||ֆ և -(ա, է, ը, ու)ց||ծ(ըն). (-ֆ և -ծ տարբերակները հանդես են գալիս խուլ շփականների և սուլականների հարևանությամբ):

-վ-ն զրվում է ներգործական սեռի բայերի վրա՝ վերջիններս դարձընելով կրավորական սեռի. Հովը գրփարդէ (շարժում է, տարուբերում է) բարդին (ներգործ. սեռ): Պարդին գրփարդվի հօվէն (կրավորական սեռ):

Անդրադարձություն և փոխադարձություն ցույց տվող բայերում -վ||ֆ -ն արտահայտում է նաև չեզոք սեռի իմաստ: Արամը նէղվէցավ հօրը քրիգը (չեզոք սեռ): Պարանը փրբթֆավ (չեզոք սեռ):

Է և ի լծորդության պարզ և -ն ածանցով ներգործական սեռի բայերի դեպքում -վ||ֆ-ն զրվում է ներկայի (ուղէլ-ուղվիլ, աբրիլ-աբբրվիլ, տէսնալ-տէսնրվիլ), իսկ ա լծորդության և մյուս ածանցներով բայերի դեպքում՝ անցյալի (աղալ-աղասֆիլ, մօղէնալ-մօղէսֆիլ) հիմքի վրա:

-վ||ֆ-ն բայական համակարգում ունի բայականմական, այլև ձևակազմական նշանակություն: Նախ՝ -վ||ֆ ստանալիս բայերի ա, է լծորդ ձայնավորները վերածվում են ի-ի (նէղէլ-նէղվիլ, աղալ-աղասֆիլ), որը

36 -վոր||ավօր-ի բայական ածանց լինելու մասին տե՛ս Ա. Աբրահամյան, Բայր..., էջ 134, է. Աղայան, նշվ. աշխ., էջ 313—314: Երզնկայի բարբառում -վօր||-ավօր ածանցը բայերի մեծ խմբում հիմքակազմ ածանց է, ինչպես արնվօրիլ (տնավորել), պօղվօրիլ (բոխշավորվել), իսկ մի քանի բայերում նաև կերպանիշ՝ ուտէսֆօրիլ (ուռչել մի քանի տեղից):

պահպանվում է խոնարհման ողջ հարացույցում, և ապա՝ անկախ սե-  
ռից -վ-ակազմ բայերի անցյալ կատարչալը ունենում է կրավորաձև  
խոնարհում գրաբարյան իմաստով:

Սեռանիշ-(ա, է, ւ, ու)ց||ծ (ըն) ածանցը բարբառում երևան է  
գալիս գրաբարի ոյց+ան>ուցան ածանցի դիմաց. հասուցանել>հա-  
ծընել, փախուցանել>փախցընել||փախծընել, աշխատեցուցանել>աշ-  
խատծընել||աշխածծընել. բարբառային կազմության օրինակներ՝ ժըմ-  
նէցընել (հասունացնել, լրացնել), ճօխնօխցընել||ճօխնօխծընել, խըլավ-  
ցընել||խլաֆցընել:

Ի տարբերություն գրաբարի, ուր բոլոր բայերի (ածանցավոր և ա-  
նածանց) պատճառականը կազմվում է անցյալի հիմքից՝ ածանցի հա-  
վելումով, բարբառում ածանցի հավելումը կատարվում է բայարմատի  
վրա, որը միայն -ն և -շ ածանցներով բայերի դեպքում է համընկնում  
անցյալի հիմքին (մի շարք բայերի ածանցից առաջ պահպանվում են  
լծորդ ձայնավորները). գրբ.՝ յիշել-յիշեցուցանել, մօտենալ- մօտեցու-  
ցանել, կարդալ-կարդացուցանել, փախչել-փախուցանել, տեսանել-տե-  
սուցանել, բրբռ.՝ հիշէլ-հիշէցընել, մօդէնալ-մօդէցնել, կարթալ-կարթըց-  
նել, փախնիլ-փախցընել, տէսնալ-տէսցընել:

Պատճառական բայերի այդօրինակ կազմությամբ բարբառում,  
գրաբարի համեմատությամբ, ստեղծվել է այդ բայերի ներկայի և անց-  
յալի հիմքերի նոր տիպի հակադրություն. ներկայի հիմք, գրբ.՝ յիշեցու-  
ցան, բրբռ.՝ հիշէցըն, անց. հիմք., գրբ.՝ յիշեցուց, բրբռ., հիշէցուց:

Բարբառում պատճառական ածանցի -(ա, է, ւ)ց||ծ(ըն) տարբե-  
րակով հանդես են գալիս ներկայի, իսկ -(ու)ց տարբերակով՝ անցյալի  
հիմքից կազմվողները. կըլէցընիմ-կըլէցուցի:

Պատճառականների կազմության նշված օրինաչափությունից բար-  
բառում դուրս են մնում մի քանի բայեր, որոնք անորոշում ևս հանդես  
են գալիս անցյալի հիմքով, ինչպես՝ լացցընել, կէցընել:

Պատճառականության իմաստը բացի ածանցումից արտահայտվում  
է նաև ներգործական սեռի բայերի հետ տալ բայի հարադրությամբ.  
ազադէլ դալ, ծախէլ դալ, պէրէլ դալ, սիրէլ դալ և այլն:

Սեռի կազմը: Հայտնի է, որ գրաբարում չկան բայերի ներ-  
գործական, կրավորական և չեզոք սեռերի հակադրությունը հստակորեն  
արտահայտող ձևաբանական ցուցիչներ: Ներգործաձև և կրավորաձև  
խոնարհումները միշտ չեն, որ համընկնում են համապատասխան սեռե-  
րին: Իսկ չեզոք սեռի բայերը, ըստ լծորդությունների, ունեն կամ ներ-  
գործաձև կամ կրավորաձև վերջավորություններ: Հաճախ էլ միևնույն

բայաձևով (դրանք ընդունված է կոչել հասարակ բայեր) արտահայտվում են և՛ կրավորական, և՛ ներգործական սեռերի իմաստներ: Իսկ բայի անդեմ ձևերը ընդհանրապես չունեն սեռի ձևաբանական արտահայտություն: Սեռի իմաստային տարբերակումը գրաբարում հիմնականում կատարվում է շարահյուսական մակարդակում՝ ի դեմս բայիմաստի և նրա խնդրառության:

Ծագրաբարյան շրջանում զգալիորեն պարզեցվեց սեռերի հակադրությունն արտահայտելու ձևաբանական միջոցը՝ հանձին -վ բայածանցի:

Երզնկայի բարբառում ևս վ-ի (ըստ հնչյունական դիրքերի -ֆ) առկայություն-բացակայություն հատկանիշով ստեղծվում է կրավորական և ներգործական սեռերի հակադրություն՝ սկսած հենց անդեմ ձևերից. սիրել-սիրվիլ, ազադել-ազաղվիլ, աղալ-աղասֆիլ:

Սակայն բարբառներում քերականական շատ ձևերի արտահայտություններ, լինելով անցումային օղակներ գրաբարից դեպի աշխարհաբարի համակարգը, ի հայտ են բերում երկու համակարգերի տարրեր: Այսպես, նորագոյացություն կրավորական -վ ցուցիչի հետ բրբռ. կրավորական սեռի արտահայտման համար գործածում է նաև գրաբարյան ձևը՝ խոնարհման վերջավորությունների տարբերակված արտահայտությունը՝ կրավորածե-նեբգործածե խոնարհման վերջավորություններով ստեղծելով կրավորական-ներգործական սեռերի հակադրություն:

Նշված հակադրությունն արտահայտվում է անց. կատարյալ և ըղձ. ապ. և նրանից կազմվող ժամանակաձևերում: Վերջինիս դեպքում իբրև սեռերի տարբերակման հատկանիշ հանդես է գալիս է-ի լծորդ ձայնավորների հակադրությունը՝ նման գրաբարին.

ներգործ. սեռ. ազադէցի, ազադէցիր, ազադէց...

շարժիմ<sup>39</sup>, շարժէս, շարժէ...

կրավոր. սեռ. ազադէցա, ազադէցար, ազադէցաւ...

շարժիմ, շարժիս, շարժի...

Ավելին, որոշ բարբառներ միևնույն քերականական իմաստի արտահայտման համար դրսևորում են թե՛ հին, թե՛ նոր համակարգի ձևերը միա-

---

39 Ի-ն այստեղ ոչ թե կրավորականի ցուցիչ է, այլ խոնարհման համակարգում գործող ընդհանուր օրինաչափության արդյունք, ըստ որի ոնգայիններից առաջ է-ն վերածվում է ի-ի: Առաջացած համանունության պատճառով ներգործական և կրավորական սեռերի հակադրությունն այս դեպքում չեզոքացված է:

ժամանակ, այդպիսով նույն իմաստը մատնանշելով կրկնակի ցուցիչով<sup>40</sup>, Այս երևույթը Երզնկայի բարբառում, ինչպես նաև արևմտյան խմբակցության մի շարք բարբառներում, երևան է գալիս կրավորական սեռի արտահայտության մեջ: Հենց անորոշում ներգործական սեռի է(<ե) լծորդության բայերը կրավորականի վերածվելիս -վ ձևովն են ընդունելու հետ է-ն փոխում են ի-ի, որը տվյալ դեպքում կրավորական սեռն արտահայտելու ձևային նշան է նաև՝ ուղել-ուղվիլ, փառդել-փառդվիլ: Ի լծորդը հիմնականում այդպիսի դեր ունի նաև գրաբարում: Խոնարհման հարացույցում ըղձականում և նրանից կազմվող ձևերում պահպանվում են և՛ -վ-ն, և՛ ի-ն. սիրվիմ, սիրվիս, սիրվի:

Կրավորական սեռը կրկնակի ցուցիչով դրսևորելը ավելի ակնհերե է անցյալ կատարյալ ժամանակում, որտեղ -վ-ի հետ պարտադիր կերպով հանդես են գալիս գրաբարի կրավորաձև վերջավորությունները. սիրվեցա, սիրվեցառ, սիրվեցավ...

Այսպիսով, ներգործական և կրավորական սեռերի հակադրությունը բարբառում արտահայտվում է հետևյալ հատկանիշներով.

ա) -վ բայածանցի առկայություն-բացակայություն՝ լծորդ ձայնավորների հակադրության ուղեկցությամբ՝ ազադել-ազադվիլ,

բ) է-ի լծորդ ձայնավորների հակադրություն՝ ազադել-ազադիլ,

գ) ներգործաձև-կրավորաձև խոնարհում հակադրություն՝ ազադեցի-ազադեցա,

դ) ներգործաձև-կրավորաձև խոնարհում հակադրություն՝ -վ բայածանցի բացակայություն-առկայություն հակադրության ուղեկցությամբ՝ ազադեցի-ազադվեցա:

Ներգործական սեռի բայերի հակադրությունը չեզոքներին ընդհանուր առմամբ արտահայտվում է -վ||ֆ բայածանց ընդունելու-չընդունելու, իսկ կրավորականներինը՝ -վ||ֆ-ի առկայություն-բացակայություն հատկանիշով: Սակայն երկու հակադրություններն էլ չեզոքների համար թույլ հատկանիշներ են, որովհետև հաճախակի են խախտվում սահմանները. որոշ չեզոքներ երբեմն ստանում են -վ||ֆ. Ըստ սովախին Խոսկով հօր չիշերվիռ (Այդ հիմարի խոսքով կարելի չէ հօր իջնել):

Ավելի թույլ է կրավորական և չեզոք սեռի հակադրությունն արտահայտող -վ||ֆ-ի առկայություն-բացակայություն հատկանիշը, քանի

40 Կեսարիայի բարբառում, օրինակ, անորոշ դերբայը գոյականաբար հոլովվելիս հանդես է բերում գրաբարի ոչ>ու հոլովակետը, միաժամանակ ունենալով անվանական տարածված ի-ն՝ կարդալ+ու+ի, որով ստացվում է սեռական-տրականի կրկնակի ցուցիչ (տե՛ս Ս. Անթոնյան, Կեսարիայի բարբառը, Երևան, 1961, էջ 69):

որ այդ ածանցով հանդես են գալիս անդրադարձություն և փոխադարձություն ցույց տվող մի խումբ բայեր, որոնք ըստ սեռային պատկանելության կրավորակերպ չեզոքներ են. տեղավորվիլ, պաղըռվիլ, տաբգըվիլ, հաֆֆիլ, սրֆֆիլ, մեզդեղվիլ, կարֆֆիլ: Այս բայերի հակադրությունը բուն կրավորականներին չեզոքացված է, որովհետև ինչպես անդեմ, այնպես էլ դիմավոր ձևերում նրանք միմյանց հետ հանդես են բերում ձևային բացարձակ նույնություն. խոնարհման ժամանակ երկու խմբում էլ հանդես են գալիս ի լծորդը, -վ ածանցը և -էցա-էցաւ, —էցավ... կրավորաձև վերջավորությունները: Կարֆֆիմ, կարֆֆիս, կարֆֆի, կարֆֆեցա, կարֆֆեցաւ, կարֆֆեցավ... Այս խմբի չեզոքները ներգործականներին հակադրվում են նույն հատկանիշներով, ինչով կրավորականները:

Ընդհանրապես չեզոք սեռի բայերը խոնարհման հարացույցում չեզոքանում են մերթ ներգործական, մերթ կրավորական սեռի բայերի հետ՝ ըստ համապատասխան լծորդությունների հանդես բերելով նույնական վերջավորություններ:

Այդ բոլորից կարելի է եզրակացնել, որ ներգործական-կրավորական-չեզոք սեռերը ձևաբանական մակարդակում հստակորեն չեն հակադրվում միմյանց, որովհետև նրանցից ոչ մեկը չունի ինքնակա և միանշանակ ձևաբանական ցուցիչ: Սեռերի իմաստային տարբերակման ճշգրիտ ոլորտը ի վերջո հանդիսանում է շարահյուսական մակարդակը՝ նման գրաբարին:

## Հիմնականություն

Բայի բոլոր ձևերը կազմվում են ներկայի և անցյալի հիմքերից, ինչպես նաև անորոշ դերբայից:

Ներկայի հիմքը բայի ելակետային ձևի՝ անորոշ դերբայի, հիմքն է: Այն լինում է ածանցավոր և անածանց:

Ներկայի հիմքից են կազմվում հետևյալ ժամանակները և դերբայները. գրաբարի նման՝

ա) բոլոր բայերի (ածանցավոր և անածանց) ըղձ. եղ. ապ. և անց. ապ. (այս ձևը համապատասխանում է գրաբարի սահմ. եղ. ներկա և անց. անկատարին), ինչպես նաև՝ ըղձ. կազմվող սահմ. եղ. ներկա և անկատար, ապ. և անց. ապ. ժամանակները. խօս-իմ, տէսն-ամ, ազադվ-իմ, հասկըցն-իմ, կըխօս-իմ, կըդէսն-ամ, կազադվ-իմ, կըհասկըցն-իմ, պի խօս-իմ, պի դէսն-ամ, պի ազադվ-իմ, պի հասկըցն-իմ:

բ) Արգելական հրամայականը եզ. և հոգ. թվերում՝ մի՛ խօսիւր, մի՛ խօսիք, մի՛ մօղէնար, մի՛ մօղէնաք, մի՛ փախցընէր, մի՛ փախցընէք:

գ) Անորոշ դերբայը. ըսէլ, հարցադիլ, հասնէլ, մօղէնալ, փառովիլ, հօղվըղալ, էրգընցնէլ:

դ) Է, ի լծորդության անածանց, ինչպես նաև դրանց —ն ածանցով բայերի ու պատճառականների ենթակայական դերբայը. պէրօղ, ազադօղ, տէնօղ, իշնօղ, փրցընօղ.

—վ սեռանիշ, դ, ադ, զօդ և մյուս կերպանիշ ածանցներով բայերի դիմավոր և անդեմ ձևերի կազմությունները նման են Է, ի լծորդություններով պարզ բայերի կազմությանը, ուստի վերջիններին մասին ասվածը վերաբերում է նաև հիշյալ ածանցներով բայերին, ինչպես վերը հիշատակած դեպքում՝ խէղդվօղ, նաթըռօղ:

ե) Է, ի լծորդներով անածանց բայերի հարակատար և վաղակատար դերբայները: Սրանք համապատասխանում են գրաբարի անց. դերբային, որը նշված խմբի բայերում հանդես է բերում ներկայի և անցյալի հիմքերից զուգահեռ կազմություններ՝ սիրեալ և սիրեցեալ, իսկ երբեմն էլ միայն անցյալի հիմքից կազմություն՝ նայեցեալ: Բրբո. կայունացրել է միայն ներկայի հիմքից կազմությունները. սիրէր, խօսէր, նաէր, հանէր, գնաւէր—սիրած, խօսած, նաջած, հանած, գնաւած:

զ) Ներկայի հիմքից է կազմվում նաև ժխտման դերբայը, որն իբրև այդպիսին գրաբարում չկար. ուղէր, վազէր, տառնար, հասնիր, մօռնար, մօղէնար, ավըրվէր, չօրցընէր:

Ի տարբերություն գրաբարի՝

ա) անածանց բայերի բուն հրամայականի եզակին. խօսէ, վազէ, ազա՛: Այս ձևերը ուղղագծորեն համապատասխանում են գրաբարի՝ խոսեա՛, վազեա՛, ազա՛ ձևերին (եա > է հնչյունափոխություն), որոնք գրաբարում դիտվում են անցյալի հիմք (անշեշտ դիրք առանց ց-ի)<sup>41</sup>: Բարբառում, սակայն, դրանք անցյալի. հիմք դիտել չի կարելի:

Անցյալի հիմքը ըստ կազմության երկու տեսակ է՝ ցոյական (ց-ածանց) և ոչ ցոյական (արմատական): Բարբառը չունի գրաբարի ի թույլ բաղադրիչով անցյալի հիմք: Այդպիսին ունեցող բայերը հիմնականում հանդես են գալիս ոչ ցոյական, մասամբ միայն՝ ցոյական հիմքով. գրբ.՝ բոի, փախի, բրբ.՝ բրո, փախ, բայց՝ գրբ.՝ զարթի, բրբո.՝ աթթընց: Զարթնուլ բայը բարբառում դառնալով ա լծորդության ածանցավոր բայ՝ բարբառում օրինաչափորեն ունի ցոյական հիմք:

41 Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևնարկ, էջ 165—166:

Անցյալում ոչ ցոյական հիմք ունեն. գրաբարի նման՝

ա) է, ի լծորդության ն-ածանց բայերը՝ հասնել-հաս, մէռնիլ-մէռ, հաֆնիլ-հաֆ:

Գրաբարի հիշյալ լծորդություններով մի շարք բայեր բարբառում թեև փոխել են լծորդությունը՝ վերածվելով ա-ի, պահպանել են, սակայն, անցյալի ոչ ցոյական հիմքը. տեսանել>տեսնալ-տէռ, մտանել>մըդնալ-մըդ, գտանել>կըդնալ-կըդ, անկանիլ>ինալ-ինգ: Ինալ-ի անորոշում ընկած կ-ն անցյալի հիմքում և նրանից կազմվող ձևերում վերականգնվում է: Իշանել>իշնալ>ինչա կատարյալի ձևում առկա ն-ն ոչ թե բայածանցի արժեքով հանդես եկող ձևույթ է (գրափոխված), այլ հավելյալ հնչյուն, որը բացատրվում է հնչյունական այն օրինաչափությամբ, ըստ որի շնչեղ խուլերից առաջ ավելանում են ռնգայիններ (հմմտ. կանաչ>կանանչ):

Հարցանել>հարցընէլ, ցուցանել>ցուցնէլ բայերը գրաբարում օրինաչափորեն ունեն ոչ ցոյական հիմք՝ հարց, ցոյց (անշեշտ դիրքում՝ ցուց): Բարբառում դրանք ձևով նման լինելով պատճառականներին՝ վերջիններիս համաբանությամբ ունեն ցոյական հիմք՝ հարցուց, ցուցց:

Գրաբարում ու լծորդության բայերը անցյալում ունեն ոչ ցոյական հիմք: Բարբառում այդ բայերը բաշխվելով այլ լծորդությունների վրա՝ ըստ լծորդությունների ու կազմության (ածանցավոր կամ անածանց) ունենում են ոչ ցոյական կամ ցոյական հիմք: Այսպես, առնուլ>առնէլ-առ, թքնուլ>թըքնէլ>թըք, կլնուլ>կըլէլ-կըլէց:

Ու լծորդությամբ հանդես եկող միակ բայը՝ թողուլ, անցյալում ունի ցոյական հիմք՝ թողուց:

Անցյալի ցոյական հիմքը ստեղծվում է հնչյունական հերթագայությունների միջոցով.

ա) ինչպես գրաբարում, անորոշից լ/ց հերթագայությամբ ստեղծվում է է, ի, ա լծորդություններով անածանց բայերի անց. հիմքը<sup>42</sup>. ի լծորդությունը այս դեպքում դառնում է է. բալէլ-բալէց, նախլ-նալէց, վազէլ-վազէց, սիրել-սիրէց, մընալ-մընաց, խաղալ-խաղաց||խախց:

Այդ խմբի մի քանի բայեր շեղվում են ընդհանուր օրինաչափությունից՝ անցյալում հանդես բերելով ոչ ցոյական հիմք. ըսէլ-ըս(ի),

42 Ե, ի լծորդություններով բայերի գրաբարի անցյալի հիմքի շեղված դիրքի -եաց, անշեշտ դիրքի -եց-ի փոխարեն բարբառում միշտ հանդես է գալիս -էց. գրբ.՝ գրեցի, գրեագ, բրբռ.՝ կըրէցի, կըրէց:

ներստել-ներստ, պէրէլ-պէր, ածէլ-ած: Բացի ասել բայից, մյուսները նույնպիսի հիմք են դրսևորում նաև գրաբարում:

Է, ի լծորդություններով մի շարք բայեր, որոնք գրաբարում հանդես են գալիս ածանցավոր, իսկ բարբառում անածանց ձևով, անց. հիմքում մերթ նմանվում են գրաբարյան ձևին (ոչ ցոյական), մերթ էլ անց. հիմքը ստեղծվում է բարբառի անածանց ձևի օրինաչափությամբ (ցոյական). գրբ.՝ սկսանել-սկիս||սկս, օծանել-օծ, բրբռ.՝ ըսկըսիլ-ըսկըս, բայց՝ օծէլ-օծէց: Այստեղ, ըստ երևութիւն, դեր է խաղում բայերի սեռային պատկանելութիւնը: Դիտելի է, որ ներգործականները հանդես են բերում ցոյական, իսկ շեղոքները՝ ոչ ցոյական հիմքեր: Կրավորականների համար հիմքերի հակադրութիւնները էական դեր չունեն, դրանք ավելի շատ թելադրում են դիմաթվային վերջավորութիւնների հակադրութիւններ:

Սպանանել > ըսպաննէլ բայում թեև առկա է գրաբարի -ան-ին համապատասխանող -ն ածանցը, բայց վերջինս չի գիտակցվում իբրև ածանց, որի պատճառով էլ այդ բայի անց. հիմքը ոչ ածանցավորների նման ցոյական է՝ ըսպաննէց, հակառակ գրաբարի սպան ոչ ցոյական հիմքի:

Ջարկանել > զարգէլ բայը անց. հիմքում ունի ոչ ցոյական և ցոյական զուգահեռ տարբերակներ՝ զարգ և զարգէց, առաջինը իբրև կազմութիւն գրաբարյան, երկրորդը՝ բարբառային ձևից:

բ) Բայահիմքից ն/ց հերթագայութեամբ է ստեղծվում ա լծորդութեան ածանցավոր բայերի անցյալի հիմքը՝ նման գրաբարին. մօռնալ-մօռց, կօղնալ-կօխց, մօղէնալ-մօղէց, մէզնալ-մէծց||մէծծ (վերականգնելովում է նախկին ծ-ն): Նույն հերթագայութիւնն է առկա նաև պանալ-պաց, կէնալ-կէց, լնուլ-իլէնալ-լէց ձևերում:

գ) Ռն/րց հերթագայութիւն է տեղի ունենում պառնալ, տառնալ թայերում՝ պարց, տարց: Վերջինս երբեմն հանդես է գալիս նաև ոչ ցոյական հիմքով՝ տառ:

դ) Ա, է, ր)ց||ծ(ըն) ածանցով բայերի անց. հիմքը ստեղծվում է բայահիմքից ըն/ուց հերթագայութեամբ՝ հակառակ գրաբարի ուցան/ուց հերթագայութեան. գրբ.՝ փախուցանել-փախուց (շեշտված դիրքում՝ փախոյց), զարմացուցանել-զարմացուց, մօռնցուցանել-մոռէցուց, բրբռ.՝ փախցընէլ-փախցուց, զարմացընէլ-զարմացուց, մօղէցընէլ-մօղէցուց:

Հերթագայական տարբեր տիպերով, սակայն, առկա է պատճառականների անց. կատարյալի նույնաձևութիւն գրաբարում և բարբառում: Կասկածից դուրս է, որ բարբառի անցյալի ձևերը ուղղակիորեն առաջա-

ցիւ են գրաբարի նույն ձևերից: Անց. հիմքում առկա երկու ց-երից առաջինը հիմքածանց է, երկրորդը՝ պատճառականի, որը բարբառում հանդես է գալիս իր նախնական տեսքով՝ ու ձայնավորի հետ զուգորդված, ինչպես՝ հրաժմուցի, անցուցի, վախցուցի:

Բարբառի ձևերի կազմության համաբանությունամբ են ստեղծված -ն և -շ ածանցներով բայերի անց. հիմքերը՝ տէսցուցի, փախցուցի, հասցուցի՝ գրաբարի տեսուցի, փախուցի, հասուցի կանոնաչէր ձևերի փոխարեն: Բարբառի ձևերի առաջին ց-ն կապ չունի ո՛չ անց. հիմքի, ո՛չ էլ պատճառական ածանցի հետ:

ե) Անց. հիմքի ն/ր հերթագայություն է առկա տանել-տառ, անել-առ, տընել-տըռ բայերում: Հերթագայության տիպով և նրա մեջ բաշխվող օրինակներով բարբառը համընկնում է գրաբարին:

զ) Օ/վը- գրաբարի մի քանի բայերի դիմաց (տալ-տուայ, լսել-լուայ) հերթագայական նշված տիպով բարբառում հանդես է գալիս միայն տալ բայը՝ տըվ(ի):

Անց. հիմքից կազմվում են այն ժամանակաձևերը և դերբայները, որոնք այդ հիմքից են կազմվում նաև գրաբարում: Դրանք են՝

ա) բուրբ բայերի անց. կատարյալ ժամանակը. հաճէցի, վախցա, տէսա, ախցա, թրոցուցի, օլըվէցա, հրմըռդդէցի.

բ) բուն հրամ. հոգ., իսկ ածանցավոր բայերի նաև եզ.՝ վազէցէ՛ք, մընացէ՛ք, կըռէցէ՛ք, տըվէ՛ք, ա՛ռ-առէ՛ք, տէ՛ս-տէսէ՛ք, մըդի՛ր-մըդէ՛ք, խըմցո՛ւր-խըմցուցէ՛ք: Պատճառականի եզ. հրամ. տեղի է ունենում անցյալի հիմքի ց/ր հերթագայություն. ծիֆցուց-ծիֆցո՛ւր.

զ) (ա, է, ը)ն, չ և (ա, է, ու, ը) ց||ծ (ըն) ածանցներով բայերի հարակատարը և վաղակատարը. փախած, թրոած, տէսած, ծառվըցած, կիտցած, անցուցած, հրաժմուցած-փախէր, թըռէր, տէսէր, ծառվըցէր, կիտցէր, անցուցէր, հրաժմուցէր:

Բարբառային կազմության և փոխառյալ հիմքերով բայերն ըստ կազմության (ածանցավոր և անածանց) և լծորդությունների անցյալի հիմքում բաշխվում են համապատասխան տիպերի (ցոյական և ոչ ցոյական) միջև:

Ներկայի և անցյալի հիմքերում տարահիմքերով հանդես եկող բայերը քննվում են «Անկանոն բայեր» բաժնում:

Անորոշ դերբայը իբրև հիմք հանդես է գալիս ընթացակցական դերբայի մեջ: Անորոշին ավելանում է -էն. ի լծորդության բայերի ի-ն այս դեպքում փոխվում է է-ի. ուղէլ-ուղէլէն, ննիլ-ննիլէն, խընդալ-խընդալէն. Հացը դաշտին մէջ էրգար մընալէն ձաղգէր է:

## Անդեմ ձևեր

Բայի անդեմ ձևերը ունեն հետևյալ շարքերը.

անորոշ—լրսել, խազնել, խօսիլ, հաֆնիլ, մընալ, հասկընալ  
վաղակատար—լրսէր, խաձէր, խօսէր, հաֆէր, մընացէր, հասկըցէր  
հարակատար—լրսած, խաձած, խօսած, հաֆած, մընացած, հաս-  
կըցած

ենթակայական—լրսող, խազնող, խօսող, հաֆնող, մընացող,  
հասկըցող

ժխտման—լրսէր, խազնէր, խօսիր, հաֆնիր, մընար, հասկընար  
ընթացակցական—լրսէլէն, խազնէլէն, խօսէլէն, հաֆնէլէն, մընա-  
լէն, հասկընալէն:

Գրաբարի համեմատությամբ բացակայում է ապ. դերբայը, իսկ նորակազմություն են հարակատար, ժխտման և ընթացակցական դերբայները:

Վերոբերյալ շարքերից բուն դերբայներ են՝ անորոշը, ենթակայակա-  
նը, ընթացակցականը, կիրառության ոլորտների մեծ մասով նաև հարակատարը, իսկ կախյալ<sup>43</sup> դերբայներ են վաղակատարը, ժխտմա-  
նը, մասամբ միայն հարակատարը:

Ա ն ո Ր Ո Ղ դ ե Ր Բ ա յ : Դասական շրջանի անորոշ դերբայի ե,ա,ու լծորդությունների դիմաց<sup>44</sup> բարբառի անորոշն բնի է, ի, ա: Գրաբարի խոնարհման հարացույցում հանդես եկող ի խոնարհիչը բարբառում առկա է նաև անորոշում: Այսպես՝ գրբ.՝ խօսել-խօսիմ, նայել-նայիմ, բրբռ.՝ խօսիլ-խօսիս, նաիլ-նաիս<sup>45</sup>: Հաճախ անորոշում ի-ով են հանդես գալիս գրաբարի նաև ե խոնարհման բայերը. ասնիլ, հասնիլ հադնիլ: Ընդհանրապես է, ի լծորդությունների բաշխման ոլորտները խիստ անջրպետված չեն և հաճախ մեկը փոխարինվում է մյուսով: Անորոշում հակումը մեծ է դեպի ի լծորդությունը:

Բարբառային կազմության և փոխառյալ հիմքերով բայերի անո-  
րոշում լծորդ ձայնավորները հանդես են գալիս ըստ սեռային պատկա-  
նելության. ներգործական սեռի բայերը հանդես են գալիս է (խըզդէլ,  
ծագողէլ), չեզոք սեռի բայերը՝ ի և ա լծորդություններով (կարմըղգիլ,

<sup>43</sup> Ըստ եղանակային ձևերի մասնակցության դերբայների այդպիսի (բուն և կախ-  
յալ) խմբավորում է կատարել Ս. Աբրահամյանը (նշվ. աշխ., էջ 154):

<sup>44</sup> Նկատի չենք առնում ո լծորդությունը, որով հանդես էր գալիս միայն գոլ բայը:

<sup>45</sup> Բերված է բարբառի 2-րդ դեմքը, որովհետև թե՛ ե և թե՛ ի լծորդությունների դեպ-  
քում ղնգայիններից առաջ բարբառն ունի ի:

թրբրոդալ). Ըստ այսմ էլ դրանք բաշխվում են համապատասխան խոնարհման տիպերի միջև:

Բարբառը չունի ու լծորդությամբ բայեր, եթե չհաշվենք թողու միակ բայը, որը գոյություն ունի մի շարք բարբառներում:

Գրաբարի նկատմամբ մի շարք բայեր անորոշ ձևում տարբերություններ են երևան հանում բայահիմքի կառուցվածքի տեսակետից:

ա) գրաբարի ածանցավոր ձևի դիմաց առկա է պարզ հիմք. զարկանել > գարգել || գարնել, սկսանել > ըսկըսիլ, անկանել > ինալ, լուանալ > վըլալ:

բ) Հակառակը՝ պարզ հիմքի դիմաց բարբառն ունի ածանցավոր ձև. պառավել > պառվընալ, կարել > կըրնալ, քնել > քընանալ, գիտել > կիդնալ, կալ > կէնալ, կարօտել > կարօդնալ, իշխել > իշխընալ:

Անորոշ դերբայը, ինչպես գրաբարում, չի մասնակցում բայի եղանակային ձևերի կազմությանը: Այն շարահյուսական մակարդակում հանդես գալով գոյականաբար հոլովվում է՝ սեռական-տրականում ստանալով ու(ն) հոլովակերտը. ի լծորդը թեքված ձևերում դառնում է է. խօսիլ-խօսելուն-խօսելէն-խօսելով:

Անորոշ դերբայի շարահյուսական իրացումներն են՝ ենթակա, հատկացուցիչ, խնդիր, պարագա, վերադիր. Մարթու էդէվանց խօրաթելը չիդադ բան շէ (ենթակա): Տիքրանը դունը ձըքէլուն բէս ախպարը գըրընգօխ կընաց էդէվէն (ժամանակի պարագա): Կրագին քօվ էրգար մընալաւն էրէսը գարմըրդգէցավ (պատճառի պարագա): Հանդիբօղին գըբօթէ բան մը ըսէլու համար (նպատակի պարագա): Քալէլօվ դէվօ գէդ գացինք (ձևի պարագա):

Վ ա դ ա կ ա տ ա ր դ ե ր բ ա յ: Գրաբարի անցյալ դերբայի -եալ վերջավորությունը համապատասխանում է -էր, որը բաղադրվելով բայահիմքերին՝ կազմում է վաղակատարի իմաստ արտահայտող դերբայաձև:

Վաղակատար դերբայը չունի անկախ կիրառություն. նա միշտ հանդես է գալիս օժանդակ բայի ներկա և անցյալ ձևերի հետ հարադրված՝ կազմելով սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակներ. տէսէր իմ, նըստէր իմ, հասկըցէր իմ:

Հ ա ր ա կ ա տ ա ր դ ե ր բ ա յ: Կազմվում է -ած վերջավորությամբ, որը ըստ լծորդությունների և բայերի կազմության (ածանցավոր և անածանց) դրվում է ներկայի կամ անցյալի հիմքի վրա:

Հարակատար դերբայի մասնակցությունը բայի եղանակային ձևերի կազմությանը ունի յուրահատկություն. այս դերբայով և օժանդակ բա-

յի ներկա և անց. ժամանակների հարադրութեամբ ձևավորված ժամ. ազատորեն արտահայտում է արդի հայերենի վաղակատար ժամ. իմաստ, ինչպես՝ Հրոհրուբնին աշխար բրոնած էր (Նրանց բրբիջը աշխարհ էր բռնել): Ծիդիս էդեվը ուռ մը էլած է (Վզիս հուկը ուռուցք է ելել):

Եթե հիշյալ բայածեր չի արտահայտում վաղակատար ժամ. իմաստ, ապա այն ավելի ճիշտ վիճակային, քան ժամանակային հարաբերություն է մատնանշում. Հավգիթը ջաթըռոյած է: (Ձուն կոտրված է): Սաղ է, քի մէռած (Ողջ է, թե մեռած): Սաթիգը որդցած է (Սաթիկը գեղեցկացած է):

Ավելին, հարակատար դերբայը իր շարահյուսական կիրառութեամբ ավելի հաճախ հանդես է գալիս որպես որոշիչ, քան օժանդակ բայի հարադրութեամբ՝ որպես ստորոգյալ. ժըմնած (հասունացած) դըղա, հավնած ախշիկ, տարգած հավգիթ:

Որ հարակատար ձևն ունի հիմնականում անվանական արժեք, քան կախյալ դերբայական, երևում է նրա ժխտական կիրառություններում: Հակառակ եղանակային ձևերին մասնակցող դերբայների (վաղակատար, ժխտման), որոնք ժխտական ձևերի եզ. 3-րդ դեմքում հարադրվում են օժանդակ բայի շի||ջը ձևերի հետ, հարակատարը նույն պարագայում հանդես է գալիս չէ տարբերակի հետ, ինչպես դա տեղի է ունենում անվանական ստորոգյալների դեպքում. չի մէռէր, չի մէռնիր, բայց՝ չէ մէռած:

Հարակատար դերբայը փոխանուն կիրառութեամբ ստանում է հոդ, ի(ն) հոլովակերտ և հոգնակերտներ՝ շարահյուսական մակարդակում դառնալով նախադասության զանազան անդամներ. Անցածը մօռցուգ գըլլա (ենթակա): էգած ճամփուդ մադաղ ըլլամ (որոշիչ): Թօղ, օ մէնք ա գիտցազնիս անինք (ուղիղ խնդիր): Մարթը սաղը սօլը (աջը ձախը) չի նաիր, հասածին գուդա ձէքի գօբալօվ (հանգման խնդիր): Մէգէն օտկի էլավ ու հէրսօդած հէռացավ (ձեռն պարագա): Չար ասխի դագ ձընած է (ստորոգյալ):

Ե ն ք ա կ ա յ ա կ ա ն դ ե ր ք ա յ : Վերջավորությունն է -օղ, որը ըստ լծորդությունների և բայերի կազմության դրվում է ներկայի կամ անց. հիմքի վրա, ինչպես՝ խըմօղ, ծէձօղ, ուզօղ, հասնօղ, սօրվօղ, հասկըցնօղ, բայց՝ կարբըցօղ, ախցօղ, մընացօղ, հասկըցօղ, հօղվըդացօղ, կիտցօղ:

Մուտալ և գուտալ բայերը, հակառակ ա լծորդության բայերին հատուկ օրինաչափության, վաղակատար են կազմում ներկայի հիմքից՝ մուտօղ, կուտօղ. առաջինը գալիս է դեռևս գրաբարյան շրջանից, երկրորդն առաջացել է մուտալ բայի համաբանությամբ՝ նրա հետ անբաժան գործածվելու պատճառով:

Ենթակայական դերբայը չի մասնակցում բայի եղանակային ձևերի կազմությանը: Շարահյուսական մակարդակում նրա իրացումներն են՝ ենթակա, որոշիչ, հատկացուցիչ, խնդիր, վերագիր: Ախշիզ չի ձեռնարկում գրգռվել (ենթակա): Չուղօղին մալը ուղօղին հալալ (հատկացուցիչ և հանգման խնդիր): Էփ ու թափ կիտցօղ գին է (որոշիչ):

Ժխտման դերբայ: Բոլոր բայերի համար կազմվում է անորոշ ձևից՝ բառավերջի վր հերթագայությամբ. վազէլ-վազէր, խօսիլ-խօսիր, փախնիլ-փախնիր, տէսնալ-տէսնար, աղալ-աղար:

Գրաբարում բայական այս ձևը հանդես է գալիս հրամայականի արգելական տարբերակի եզ. թվում՝ մի՛ հասաներ, մի՛ խօսիր, մի՛ վազեր, մի՛ աղար: Բարբառը պահպանելով այդ բայաձևի նշված կիրառությունը, միաժամանակ ընդարձակել է նրա գործառության ոլորտը՝ այդ բայաձևի և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ կազմելով սահմ. ներկա և անկատար ժամանակների ժխտման հարացույցները: Քանի որ նշված բայաձևը բոլոր դեմքերի համար հանդես է գալիս անփոփոխ, ուստի այն ձեռք է բերել դերբայի արժեք:

Է լծորդով պարզ բայերի վաղակատար և ժխտման դերբայների միջև առաջանում է համանունություն (լըսէ՛ր և՛ վաղակատար է, և՛ ժխտման), որը, սակայն, խոսքային մակարդակում շփոթի տեղիք չի տալիս:

Ը ն թ ա ց ա կ ց ա կ ա ն դ ե ր ք ա յ: Այս դերբայն ստեղծվում է անորոշից -էն վերջավորության հավելումով և ձևով նույնանալով բացառական հոլովաձևի հետ, վերջինիցս տարբերվում է իմաստային յուրահատկությամբ: Նրանով արտահայտվում է հիմնական գործողությանը հարակից գործողություն կատարելու իմաստ. Ուղէլէն գրքալէր: Ձևա-իմաստային ինքնուրույնության պատճառով հիշյալ բայաձևերը ստացել են անկախ դերբայի արժեք<sup>46</sup>: Նախադասության մեջ ընթացակցական դերբայը լինում է ձևի պարագա:

Բացի կանոնավոր ու օրինաչափ գործածություն ունեցող նշված դերբայներից, բարբառում հանդիպում են -ուկ-ով վերջավորվող դեր-

46 Տե՛ս է. Աղայան, Մեղրու բարբառը, էջ 196: Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 262—266:

բայներ՝ կայնուկ, մօռցուկ, քննուկ, պառզուկ: Սահմանափակ գործածության պատճառով այդ դերբայաձևը բարբառում որակ չի կազմում, և նրա առկայությունը բացատրվում է սոսկ այլ բարբառների ազդեցությամբ՝ ժողովրդական բանահյուսության միջոցով, որից և թափանցել է առօրյա խոսակցական որոշ դարձվածքների մեջ. Անցածը մօռցուկ ըլլա: Ճագարագիրը չագդին վերա գրուից է: Ըս պուրուգը գօռուից է (կոտրված է):

Փոխանցումներ լծորդությունների միջև: Բարբառի բայերը միշտ չէ, որ լծորդություններով համընկնում են գրաբարի համապատասխան բայերի հետ: Ու լծորդության բոլոր բայերը, բացի թողուլ > քողուլ բայից, բաշխված են տարբեր լծորդությունների միջև. առնուլ > առնել, երդնուլ > էրթրենալ, զարթնուլ > արթրենալ, զբոսնուլ > րսպոսնիլ, կրնուլ > կրլլել, լնուլ > լեցնել, արգելուլ > արգիլել, թքնուլ > քրքնել: Այստեղ առկա են լծորդությունների ու/ա, ու/ի, ու/է փոխանցումներ:

Զգալի թիվ են կազմում նաև լծորդությունների ե/ա փոխանցմամբ բայերը. իշանել > իշնալ, մտանել > մրտնալ, տեսանել > տեսնալ, ելանել > էլալ, ամաշել > ամբշնալ, ճանաշել > ճաշնալ, իշխել > իշխրնալ:

Հայտնի է, որ գրաբարում խոնարհման հարացույցում ի խոնարհչուով հանդես եկող բայերը անորոշում ունեցել են և լծորդություն: Բարբառում այս խմբի բայերը ի-ն պահպանում են նաև անորոշում, որով առաջացել է ե/ի փոխանցումը. խօսել > խօսիլ, նայել > նաիլ, թռչել > քրռչիլ, փախչել > փախչիլ | փախնիլ: Անորոշում ի-ով են հանդես գալիս նաև գրաբարի և խոնարհման հասնել, հատանել բայերը՝ հասնիլ, հաղնիլ:

Հիմնականում անփոփոխ է ա լծորդությունը:

### Դիմավոր ձևեր

Դեմքի և թվի կարգերը: Ողջ հայերենի նման Երզնկայի բարբառում ևս բայի դեմքի (1-ին, 2-րդ, 3-րդ) և թվի (եզակի, հոգնակի) իմաստներն արտահայտվում են միևնույն դիմաթվանիշ ցուցիչների միջոցով: Դրանց մեջ ընդհանուր ձևով առկա է նաև ժամանակի կարգը:

Գրաբարի համեմատությամբ օժանդակ բայը կրել է հետևյալ փոփոխությունները. նախ՝ այստեղ բացակայում է օժանդակ բայի ապ. ժամանակաձևը (ինչպես ետգրաբարյան շրջանի հայերենի բոլոր դրսևվորումներում), իսկ ներկա և անց. ժամանակաձևերի համապատասխանությունները ունեն հետևյալ պատկերը.

# Ն ե Ր Կ ա

## գրաբար

|    |     |
|----|-----|
| եմ | եմք |
| ես | էք  |
| է  | են  |

## բարբառ

|    |     |
|----|-----|
| իմ | ինք |
| էս | էք  |
| է  | ին  |

## Ա ն ց յ ա լ

|     |     |
|-----|-----|
| էի  | էաք |
| էիր | էիք |
| էր  | էին |

|     |      |
|-----|------|
| էի  | էանք |
| էիր | էիք  |
| էր  | էին  |

Ներկա ժամ. եզ. թվի 1-ին դեմքի և հոգն. թվի 1-ին և 3-րդ դեմքերի ե>ի փոփոխությունը, որ հատուկ է շատ բարբառների, բացատրվում է ե-ի դիրքով, իբրև ռեզյաններից առաջ կատարված հնչունափոխություն<sup>47</sup>: Հոգ. 1-ին դեմքի մ-ի դիմաց առկա ն-ն մեծ դերանվան առնմանությամբ է<sup>48</sup>: Վերջինիս համաբանությամբ է մեկնվում անց. ժամ. էանք ձևում առկա ն-ն<sup>49</sup>:

Օժանդակ բայի վերջավորությունները համընկնում են դիմային վերջավորությունների հետ: Վերջիններս համապատասխան լծորդ ձայնավորների հետ հանդես են գալիս համադրական ձևերում և կատարում են նույն դիմաթվանիշ ցուցիչի դերը, ինչպես ի լծորդության դեպքում՝ իմ, իս, ի, իմք, իք, ին (ներստիմ, ներստիս, ներստի...), ա լծորդության դեպքում՝ ամ, աս, ա, անք, աք, ան (հազամ, հազաս, հազա...):

Անցյալի ձևերում է և ի լծորդության բայերի վերջավորությունները նույնն են՝ էի, էիր, էր, էանք, էիք, էին. ա լծորդության բայերը, գրաբարի նման, հանդես են գալիս իրենց լծորդ ձայնավորով՝ աի, աիր, առ, ալանք, աիք, աին (աղաի, աղաիր, աղառ, աղայանք, աղաիք, աղաին):

Գրաբարի համեմատությամբ բարբառի դիմաթվանիշ ցուցիչները արտահայտում են հետևյալ հակադրությունները.

## գրաբար

- 1- ին դ. մ/մք, Օ/ք
- 2-րդ դ. ս/չք, ր/ք, եր/ք, ր/չք
- 3-րդ դ. յ/ն, յր/ն, Օ/ն, Վ/ն

## բարբառ

- մ/նք, Օ/նք
- ս/ք, ր/ք
- Օ/ն, ր/ն, վ/ն

47 Հ. Անադյան, Լիակատար քերականություն, հ. 4, գ. 2:

48 նույն տեղում:

49 նույն տեղում:

Գրաբարի եզ. և հոգ. թվերի 2-րդ և 3-րդ դեմքերում առկա յ-ն, որը հանդես է գալիս այն օրենքի համաձայն, ըստ որի գրաբարում վանկը չէր կարող ավարտվել ձայնավորով, բարբառում ընկել է, որով և պարզեցվել են դիմաթվանիշ հակադրությունները:

Հակառակ գրաբարի, ուր բազմարժեք էր ֆ-ն (ինքնուրույնաբար այն հոգ. թվի և՛ 1-ին, և՛ 2-րդ դեմքի ցուցիչ է), բարբառում այդպիսի արժեք ունի ր-ն (այն եզ. թվի և՛ 2-րդ, և՛ 3-րդ դեմքի ցուցիչ է)<sup>50</sup>:

Մյուս դեպքերում գրաբարի և բարբառի դիմաթվանիշ ցուցիչները համընկնում են:

Հրամ. եզ. դիմաթվային (միայն 2-րդ դեմք) հակադրության գրաբարի տիպերը՝ Օ/է'ֆ, ե'ա/ե'ֆ, ա'/է'ֆ, ր'/ֆ, ո'/ֆ<sup>51</sup> (ինչպես թո՛ղ-թո՛ղէ՛ք, սիրե՛ա-սիրեցէ՛ք, աղա՛-աղացէ՛ք, մի՛ գրեր-մի՛ գրէք, հասո՛-հասուցէ՛ք) բարբառում պահպանված են, միայն ե'ա/է'ֆ-ի փոխարեն առկա է է'է'ֆ, ինչպես՝ սիրէ-սիրեցէ՛ֆ:

Ո'/է'ֆ հակադրությունը, որը գրաբարում ուներ համակարգային արժեք, քանի որ նրանով ստեղծվում էր պատճառական բայերի հրամայականի դիմաթվային հակադրություն, բարբառում գործում է միայն գալ> կալ բայում՝ էգօ-էգէ՛ֆ: Իսկ պատճառականների համար ստեղծված է նոր հակադրություն՝ ո'ւր/է'ֆ. փախցո՛ւր/փախցուցէ՛ֆ:

Ժ ա մ ա ն ա կ ի կ ա ր գ ր: Միայն անց. ժամանակն է, որ ունի ինքնուրույն ձևաբանական արտահայտություն, որով և ստեղծվում է անցյալայնություն-ոչ անցյալայնություն<sup>52</sup> իմաստային հակադրություն: Անցյալայնությունը մասնավորվում է անց. անկատար, անցյալի ապառնի, անցյալի վաղակատար և անցյալ կատարյալ ժամանակաձևերում: Առաջին երեքի անցյալի ցուցիչները նույնն են բոլոր տիպի բայերի համար՝ լըսէ-ի, խօսէ-ի, աղա-ի, պաֆնէ-ի, թրոնէ-ի, մօղէնա-ի..., իսկ ա լ ծ ո ղ ո ղ ո լ թ յ ա ն պ ա ղ, է լ ծ ո ղ ո ղ թ յ ա ն պ ա ղ և ա ծ ա ն ց ա լ ո ղ, բազմապատկական ածանցով ներգործական սեռի և պատճառական ածանցով բայե-

50 Գրաբարում ր-ն, բացի անկախ դիմաթվանիշ վերջավորություն լինելուց, հանդես է գալիս նաև յ-ի և ե-ի հետ զուգորդումներով, ե-ն այս դեպքում չունի լծորդի արժեք (հմմտ. գրել, աղալ-անց. կատ. գրեցեր, աղացեր):

51 Բացառում ենք հրամայականի կրավորաձև խոնարհման ալլալլ ցուցիչները, ինչպես՝ ի'ր/ի'ֆ, Օ/ա'յֆ, առո'ւֆ, ի'ր/ա'յֆ, առո'ւֆ, ի'ր/խայֆ, եռո'ւֆ, ջի'ր/ջի'ֆ, որոնցում դիմաթվային հակադրությունը արտահայտվում է միայն ր/ֆ վերջավորություններով, իսկ մյուս ցուցիչները կրավորականի իմաստակիրներ են:

52 Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 260:

րի անցյալ կատարյալի ցուցիչները թեև հիմնականում համընկնում են առաջինների հետ՝ աղաց-ի, լրսէց-ի, պափ-ի, ախտօղէց-ի, հասկը-ցուց-ի, բայց ծագումնաբանորեն դրանք նույնը չեն, այլ միմյանց հետ կաղմում են համանուններ։ Ի լծորդության, (ա, է, ը)ն, չ և վ ածանցներով բայերի անց. կատարյալը հանդես է բերում այլ ցուցիչներ՝ խօսէց-ա, տէս-ա, քրո-ա, շարժվէց-ա... (ա, առ, ավ, անգ, ափ, ան)։

Գրաբարի համեմատությամբ անց. ժամ. ձևաբանական ցուցիչները բարբառում ունեն հետևյալ արտահայտությունը.

| գրաբար                     | բարբառ                    |
|----------------------------|---------------------------|
| -ի -աք (խօսէի խօսէաք)      | -ի -անք (խօսէի խօսէանք)   |
| -իր -իք (խօսէիր խօսէիք)    | -իր -իք (խօսէիր խօսէիք)   |
| -յր -ին (խօսէր խօսէին)     | -ր -ին (խօսէր խօսէին)     |
| -ի -աք (մնացի մնացաք)      | -ի -ինք (մընացի մընացինք) |
| -եր էք, իք (մնացեր մնացէք) | -իր -իք (մընացիր մընացիք) |
| Ø-ին (մնաց մնացին)         | Ø-ին (մընաց մընացին)      |
| -այ -աք (փախայ փախաք)      | -ա -անք (փախա փախանք)     |
| -ար -այք (փախար փախայք)    | -ար -աք (փախար փախաք)     |
| -աւ -ան (փախաւ փախան)      | -ազ-ան (փախավ փախան)      |

Ինչպես երևում է, անց. ցուցիչները գրաբարում և բարբառում հիմնականում նույնն են։ Դրանք են՝ ի, ա, ր, լ > վ, որոնք պայմանականորեն կարելի է առանձնացնել դեմքի և թվի ցուցիչներից իբրև զուտ անցյալի ցուցիչներ։

Անց. կատարյալի եզ. 2-րդ դեմքի -եռ-ի դիմաց բարբառում առկա -իր-ը և հոգ. 1-ին դեմքի -ա-ի դիմաց գոյություն ունեցող -ի-ն պետք է բացատրել մյուս դեմքերի -ի-ի համաբանությամբ, որով, ինչպես նաև հոգ. 2-րդ դեմքի -էք, -իք զուգահեռ ձևերի դիմաց միայն -իք ձևի գործածությամբ, բարբառում միասնականացել է այդ ժամանակի ձևաբանական արտահայտությունը։

Գրաբարի և լծորդության ածանցավոր բայերի ներգործածել խոնարհման եզ. 3-րդ դեմքի արմատական հիմքի, այսինքն՝ ժամանակադիմաթվանիշ Ø ցուցչի դիմաց բարբառը հանդես է բերում -ավ վերջավորություն՝ խած-խածավ, զարկ-զարկավ, էչ-ինչավ, հմուտ-մըղավ, էհաս-հասավ։

Ոչ անցյալայնության եզրի ներկա ժամանակը հայերենի ոչ մի դրսևորումում չունի ձևաբանական հատուկ ցուցիչ։ Նրա իմաստն ար-

տահայտվում է դիմաթվային վերջավորությունների միջոցով: Այսպես, մ-ն, ինչպես գրաբարում, այնպես էլ բարբառում և՛ 1-ին դեմքի, և՛ եզ. թվի, և՛ ներկա ժամ. իմաստակիր է: Սակայն բարբառում դիմաթվային վերջավորությունները միշտ չեն, որ բավարար են ներկա ժամանակի իմաստի արտահայտման համար: Հենց բուն ներկայի համար կիրառվում է կը նախամասնիկը, որը թեև առաջացել է որպես եղանականիշ<sup>53</sup>, բայց հենց դրանով է բնութագրվում ներկա ժամանակը:

Ոչ անցյալայնության եզրի մյուս ժամանակը՝ ապառնին, գրաբարում հանդես է գալիս 1-ին ապ. և 2-րդ ապ. տարբերակներով: Սրանք իրենց -ից և -այց, -ցէս, -ցէ, -ջուս, -ջիւս, -ցեն (իսկ ավելի անկախ՝ -ց և -ջ) ձևաբանական ցուցիչներով հտգրաբարյան շրջանում զուրս են մնում համակարգային գործառումից: Ապ. ժամ. իմաստի արտահայտման համար ստեղծվում են նոր միջոցներ, որոնք հայերենի հետագա դրսևորումներում չեն բնութագրվում զուտ ձևաբանական արժեքով: Երզնկայի բարբառում ապառնիության իմաստը արտահայտվում է պիդի||պիա||պի||պ նախամասնիկով, որը միաժամանակ եղանականիշ է:

Հրամ. եղ. ժամանակաձևը, որն իր բնույթով և՛ ներկա է, և՛ ապառնի, իր այդ կարգի արտահայտման ինքնուրույն ցուցիչ չունի. դիմաթվանիշ վերջավորությունները միաժամանակ ժամանակի իմաստակիրներ են:

Եղ ա ն ա կ ի կ ա ր գ ր: Բարբառում, ինչպես գրաբարում, խոնարհումը կատարվում է երեք եղանակով՝ սահմանական, ըղձական (գրբ.՝ ստորադասական) և հրամայական: Սրանց ձևաբանական հակադրությունը, ի տարբերություն գրաբարի, ուր այն արտահայտվում է վերջավորությունների տարբերությունների միջոցով, բարբառում հիմնականում բնութագրվում է նախամասնիկների առկայություն-բացակայություն հատկանիշով:

Կը և պի նախամասնիկներով, որոնցից առաջինը կազմում է ներկա և անկատար, իսկ երկրորդը՝ ապ. և անց. ապ. ժամանակաձևեր, սահմ. հակադրվում է ըղձ. և հրամ. եղանակներին: Խոնարհման վերլուծական ձևերի առկայություն-բացակայություն հատկանիշը ևս բնութագրական է եղանակների հակադրության համար: Ըստ որում, ըղձ. և հրամ. այդպիսի ձևերի բացակայությամբ հակադրվում են սահմանականին, որի վաղակատար ներկա և անց., հարակատար ներկա և անց.

53 Տե՛ս 2. Անադան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, էջ 483:

ձևերը ունեն խոնարհման վերլուծական կառույց: Սահմանականի միակ պարզ ձևը՝ անցյալ կատարյալը, ըղձականին և հրամայականին, ինչպես նաև վերջիններս իրար հակադրվում են վերջավորությունների տարբերություններով:

Սահմ. եղ. կը-ով և պի-ով ձևերին հատուկ է բազմիմաստություն. կը-ով ձևերը, բացի ներկայի իմաստից, արտահայտում են նաև սահմ. և պայմ. եղանակների ապառնիի իմաստ: Պի-ով ձևերը, սահմ. ապառնիից զատ, երկրորդաբար արտահայտում են հարկադրական եղ. իմաստ:

### Խոնարհում

Բարբառի բայական համակարգին բնորոշ է խոնարհման համադրական տիպը՝ նման գրաբարին: Միայն վաղակատար և հարակատար ժամանակներն են, որ ունեն խոնարհման վերլուծական տիպ: Մի քանի համադրական ձևեր ուղեկցվում են նախամասնիկներով: Այդպիսիք են սահմ. եղ. ներկա և անկատար, ապ. և անց. ապ. ժամանակները: Առաջինները հանդես են գալիս կը||կ||կու, երկրորդները՝ պիտ||պի||պ նախամասնիկներով: Ինչպես արդեն ասվել է, կը||կ||կու-ով ձևերը երկրորդաբար արտահայտում են նույն եղանակի ապառնիի և պայմանական եղանակի ապառնիի իմաստներ, իսկ պիտ||պի||պ ձևերը՝ նաև հարկադրական եղ. ժամանակաձևերի իմաստներ: Այս իմաստների արտահայտումը հիմնականում պայմանավորված է շարահյուսական գործոններով, որի պատճառով էլ չենք տալիս կը-ով և պի-ով ձևերի պայմանական և հարկադրական եղանակների ձևաբանական հարացույցներ:

Բարբառում խոնարհումն իրականացվում է երեք խոնարհիչով՝ է, ի, ա: Դրանց հանդես գալու պայմանները հիմնականում բացատրվում են պատմական գործոնով. գրաբարում այս կամ այն խոնարհիչով հանդես եկող բայը նույն խոնարհիչն է ստանում նաև բարբառում. վազես, վազէ>վազես, վազէ, նստիս, նստի>նրստիս, նրստի, աղաս, աղայ>աղաս, աղա (իհարկե, այստեղ պետք է նկատի ունենալ լծորդությունների փոփոխությունների պատճառով առաջացած խոնարհիչների փոփոխությունը, ինչպես՝ իջանել>իջնալ): Սակայն նորակազմ բայերը (բարբառային և փոխառյալ հիմքերով) է, ի, ա խոնարհիչներից յուրաքանչյուրի հետ զուգորդվում են ըստ սեռային պատկանելության:

Գրաբարի ներգործած և կրավորած խոնարհման վերջավորությունները բարբառում բաշխված են հետևյալ կերպ.

ա) է>է խոնարհման պարզ բայերը, անկախ սեռային պատկանե-

լուծյունից, ստանում են ներգործածակ վերջավորություններ՝ սիրէցի, վազէցի:

բ) Ի>ի խոնարհման պարզ բայերը ստանում են կրավորածակ վերջավորություններ՝ առանց կրավորական իմաստի՝ նաւէցա, ընթունէցա:

գ) Ա>ա խոնարհման պարզ բայերը հանդես են գալիս ներգործածակ վերջավորություններով՝ հագացի, խընդացի:

դ) Բոլոր ածանցավոր բայերը ստանում են կրավորածակ կամ խառը խոնարհման վերջավորություններ՝ հասա..., մըղա..., հասկըցա... խաձի, խաձիւր, խաձավ:

ե) -վ ածանցով բայերը անկախ սեռային պատկանելությունից (կրավորական, թե չեզոք) ստանում են կրավորածակ վերջավորություններ՝ թաղվէցան, կըզգըվէցան:

զ) Պատճառական ածանցով բայերը հանդես են գալիս ներգործածակ վերջավորություններով՝ քըռցուցի, սօրվէցուցի:

է) է, ի, ա խոնարհման պարզ բայերը հրամայականի եզակի թվում զուգորդվում են ներգործածակ վերջավորություններին՝ վազէ, խօսէ, մընա՛, իսկ ածանցավոր բայերը՝ կրավորածակ վերջավորություններին՝ առանց կրավորական իմաստ հաղորդելու՝ կըղի՛ր, հասի՛ր, քըռի՛ր, կօխցի՛ր:

ը) Հրամայականի հոգ. թվում առկա է միայն գրաբարի ներգործածակ վերջավորությունը՝ վազէցէ՛ք, խօսէցէ՛ք, մընացէ՛ք, կըղէ՛ք, քըռէ՛ք, հասէ՛ք, կօխցէ՛ք:

թ) Հրամայականի արգելական տարբերակում է, ա խոնարհման բայերը ունեն ներգործածակ վերջավորություններ, իսկ ի խոնարհման բայերը՝ կրավորածակ վերջավորություններ առանց կրավորական իմաստի՝ մի՛ վազէր, մի՛ վազէք, մի՛ մօղէնար, մի՛ մօղէնաք, մի՛ նըստիր, մի՛ նըստիք:

ժ) Մի խումբ բայեր, գրաբարի նման, ստանում են և՛ ներգործածակ, և՛ կրավորածակ վերջավորություններ՝ համապատասխան սեռային իմաստների հաղորդումով: Դրանք են՝

| ներգործածակ վերջ. |          | կրավորածակ վերջ. |
|-------------------|----------|------------------|
| ներգ. սեռ         |          | կրավ. սեռ        |
| ազադէլ-ազադիլ     | ազադէցի  | ազադէցա          |
| շարժէլ-շարժիլ     | շարժէցի  | շարժէցա          |
| կըլօրէլ-կըլօրիլ   | կըլօրէցի | կըլօրէցա         |
| կօռէլ-կօռիլ       | կօռէցի   | կօռէցա           |

|                 |          |          |
|-----------------|----------|----------|
| Ժրոէլ-ծրոիլ     | ծրոէցի   | ծրոէցա   |
| ծրնէլ-ծրնիլ     | ծրնէցի   | ծրնէցա   |
| օլըրէլ-օլըրիլ   | օլըրէցի  | օլըրէցա  |
| մըրօդէլ-մըրօդիլ | մըրօդէցի | մըրօդէցա |

Բարբառում խոնարհման ելակետային ձև է ըղձականը, որը ձևով համընկնում է գրաբարի սահմ. ներկային և անկատարին: Ըղձականի ձևերից համապատասխան մասնիկների հավելումով կազմվում են սահմ. եղ. ներկա և անկատար, ապառնի և անցյալի ապառնի ժամանակ-ները:

Դրական խոնարհմանը հակադրվող ժխտականը բարբառում ձևաբանորեն արտահայտվում է չի/չ և մի/մ նախամասնիկներով: Առաջինը հանդես է գալիս գրաբարի ոչ-ի և չի/չ-ի փոխարեն և ունի նախադաս կիրառություն. վերլուծական ձևերում օժանդակ բայը շարահասությամբ դառնում է նախադաս, որի վրա և դրվում է չի/չ-ն. չի խօսիմ, չիմ խօսիւ: Զի ստանում են բաղաձայնով, չ՝ ձայնավորով սկսվող բայաձևերը՝ չի ճրստիմ, չըսիմ:

Ապ. ժամանակի ժխտականում, ուր պիղի-ն սովորաբար հանդես է գալիս պի տարբերակով, չի/չ-ն դրվում է պի մասնիկի և բայի միջև. պի չի խօսիմ, պի չէթամ:

Սահմ. եղ. ներկայի և անկատարի ժխտականը կազմվում է ոչ թե դրական ձևից չի/չ-ի հավելումով, ինչպես այդ կատարվում է մյուս ժամանակների դեպքում, այլ ժխտման դերբայի և օժանդակ բայի ժխտման ձևերի հարադրումից՝ չիմ սիւրէր, չիմ խօսիւր, չիմ մօղէնար: Այս ժխտականները, սահմ. ներկայի և անկատարի դրական ձևերի նման, բազմիմաստ են: Բացի նշված ժամանակներից, դրանք արտահայտում են նաև պայմանական եղանակի ապառնիի և անցյալի ապառնիի ժխտական իմաստներ:

Մի/մ-ն, որը գրաբարի նույնիմաստ մասնիկն է, հանդես է գալիս հրամայական եղանակի արգելականի տարբերակում: Մի են ստանում թե՛ ձայնավորով, և թե՛ բաղաձայնով սկսվող բայաձևերը, իսկ մ՝ միայն ձայնավորով սկսվողները. մի՛ էթար, մէ՛թար, մի՛ խաղար:

Ստորև ներկայացնում ենք է, ի, ա լծորդություններով անածանց և ածանցավոր բայերի դրական և ժխտական խոնարհումների հարացույցները:

է լծորդության բայեր

անաժանց բայ

խըմէլ

ածանցավոր բայ

խազնէլ (<խաժանեւլ)

Դերբայներ

|               |         |          |
|---------------|---------|----------|
| անորոշ՝       | խըմէլ   | խազնէլ   |
| վաղակատար՝    | խըմէր   | խաձէր    |
| հարակատար՝    | խըմած   | խաձած    |
| ենթակայական՝  | խըմօղ   | խազնօղ   |
| ժխտման՝       | խըմէր   | խազնէր   |
| ընթացակցական՝ | խըմէլէն | խազնէլէն |

Հղձական եղանակ

ապառնի

| եզակի | հոգնակի | եզակի  | հոգնակի |
|-------|---------|--------|---------|
| խըմիմ | խըմինք  | խազնիմ | խազնինք |
| խըմէս | խըմէք   | խազնէս | խազնէք  |
| խըմէ՛ | խըմին   | խազնէ՛ | խազնին  |

անցյալի ապառնի

|        |         |         |          |
|--------|---------|---------|----------|
| խըմէի  | խըմէանք | խազնէի  | խազնէանք |
| խըմէիր | խըմէիք  | խազնէիր | խազնէիք  |
| խըմէր  | խըմէին  | խազնէր  | խազնէին  |

Սահմանական եղանակ

ներկա

|         |          |          |           |
|---------|----------|----------|-----------|
| կըխըմիմ | կըխըմինք | կըխազնիմ | կըխազնինք |
| կըխըմէս | կըխըմէք  | կըխազնէս | կըխազնէք  |
| կըխըմէ՛ | կըխըմին  | կըխազնէ՛ | կըխազնին  |

անցյալի անկատար

|          |           |           |            |
|----------|-----------|-----------|------------|
| կըխըմէի  | կըխըմէանք | կըխազնէի  | կըխազնէանք |
| կըխըմէիր | կըխըմէիք  | կըխազնէիր | կըխազնէիք  |
| կըխըմէր  | կըխըմէին  | կըխազնէր  | կըխազնէին  |

ապառնի

|          |           |           |            |
|----------|-----------|-----------|------------|
| պի խըմիմ | պի խըմինք | պի խազնիմ | պի խազնինք |
| պի խըմէս | պի խըմէք  | պի խազնէս | պի խազնէք  |
| պի խըմէ՛ | պի խըմին  | պի խազնէ՛ | պի խազնին  |

### անցյալի ապառնի

|           |            |            |             |
|-----------|------------|------------|-------------|
| պի խըմէի  | պի խըմէանք | պի խազնէի  | պի խազնէանք |
| պի խըմէիր | պի խըմէիք  | պի խազնէիր | պի խազնէիք  |
| պի խըմէր  | պի խըմէին  | պի խազնէր  | պի խազնէին  |

### վաղակատար

|          |           |          |           |
|----------|-----------|----------|-----------|
| խըմէր իմ | խըմէր ինք | խաձէր իմ | խաձէր ինք |
| խըմէր էս | խըմէր էք  | խաձէր էս | խաձէր էք  |
| խըմէր է  | խըմէր ին  | խաձէր է  | խաձէր ին  |

### անցյալի վաղակատար

|           |            |           |            |
|-----------|------------|-----------|------------|
| խըմէր էի  | խըմէր էանք | խաձէր էի  | խաձէր էանք |
| խըմէր էիր | խըմէր էիք  | խաձէր էիր | խաձէր էիք  |
| խըմէր էր  | խըմէր էին  | խաձէր էր  | խաձէր էին  |

### հարակատար

|          |           |          |           |
|----------|-----------|----------|-----------|
| խըմած իմ | խըմած ինք | խաձած իմ | խաձած ինք |
| խըմած էս | խըմած էք  | խաձած էս | խաձած էք  |
| խըմած է  | խըմած ին  | խաձած է  | խաձած ին  |

### անցյալի հարակատար

|           |            |           |            |
|-----------|------------|-----------|------------|
| խըմած էի  | խըմած էանք | խաձած էի  | խաձած էանք |
| խըմած էիր | խըմած էիք  | խաձած էիր | խաձած էիք  |
| խըմած էր  | խըմած էին  | խաձած էր  | խաձած էին  |

### անցյալ կատարյալ

|         |          |       |        |
|---------|----------|-------|--------|
| խըմէցի  | խըմէցինք | խաձի  | խաձինք |
| խըմէցիր | խըմէցիք  | խաձիր | խաձիք  |
| խըմէց   | խըմէցին  | խաձավ | խաձին  |

### Հրամայական եղանակ

|      |          |
|------|----------|
| խըմէ | խըմէցէ՛ք |
| խա՛ծ | խաձէ՛ք   |

Այսպես են խոնարհվում պարզ բայերից՝ լըսէլ, նէղէլ, ծախսէլ, կօ-  
ռէլ, քալէլ, խօրաթէլ, ծէձէլ, պըռնէլ, հառնէլ, կըլլէլ, վնոէլ, կըռէլ, պըր-  
թէլ, կօնձէլ, փաղէլ, անըձէլ, հանէլ, պըլլէլ, շըբգէլ, կօրձել, ծըթէլ, վաղեւ,

մօրթէլ, հաստադէլ, ծագգէլ, ճըմըռթկէլ, քըշէլ, մարէլ, աղաղէլ (ներ-  
գործական սեռի իմաստով), թալլէլ, ըսպաննէլ, կօվէլ, ծըռէլ, փըռէլ,  
սիրէլ, կանչէլ, թաղէլ, կարէլ, կըզգէլ, փրնդռէլ, չափէլ, իստկէլ, համօզէլ  
և այլն, ածանցավորներինց՝ առնէլ, պաքնէլ, թըքնէլ, զաննէլ||զանրգէլ:

### Ի լծորդության բայեր

անածանց  
ննիլ (<նայել)

ածանցավոր  
հասնիլ (<հասնել)

### Դերբայներ

|               |               |
|---------------|---------------|
| անորոշ՝       | ննիլ, հասնիլ  |
| վաղակատար՝    | ննէր, հասէր   |
| հարակատար՝    | ննյած, հասած  |
| ենթակայական՝  | ննյօղ, հասնօղ |
| ժխտման՝       | ննիր, հասնիր  |
| ընթացակցական՝ | ննէլէն        |

### Ըղձական եղանակ

#### ապառնի

|      |       |        |         |
|------|-------|--------|---------|
| ննիմ | ննինք | հասնիմ | հասնինք |
| ննիս | ննիք  | հասնիս | հասնիք  |
| ննի  | ննին  | հասնի  | հասնին  |

#### անցյալի ապառնի

|       |        |         |          |
|-------|--------|---------|----------|
| ննէի  | ննէանք | հասնէի  | հասնէանք |
| ննէիր | ննէիք  | հասնէիր | հասնէիք  |
| ննէր  | ննէին  | հասնէր  | հասնէին  |

### Մահմանական եղանակ

#### ներկա

|        |         |          |           |
|--------|---------|----------|-----------|
| կըննիմ | կըննինք | կըհասնիմ | կըհասնինք |
| կըննիս | կըննիք  | կըհասնիս | կըհասնիք  |
| կըննի  | կըննին  | կըհասնի  | կըհասնին  |

#### անցյալի անկատար

|         |          |           |            |
|---------|----------|-----------|------------|
| կըննէի  | կըննէանք | կըհասնէի  | կըհասնէանք |
| կըննէիր | կըննէիք  | կըհասնէիր | կըհասնէիք  |
| կըննէր  | կըննէին  | կըհասնէր  | կըհասնէին  |

### ապառնի

|         |          |           |            |
|---------|----------|-----------|------------|
| պի ննիմ | պի ննինք | պի հասնիմ | պի հասնինք |
| պի ննիս | պի ննիք  | պի հասնիս | պի հասնիք  |
| պի ննի  | պի ննին  | պի հասնի  | պի հասնին  |

### անցյալի ապառնի

|          |           |            |             |
|----------|-----------|------------|-------------|
| պի ննէի  | պի ննէանք | պի հասնէի  | պի հասնէանք |
| պի ննէիր | պի ննէիք  | պի հասնէիր | պի հասնէիք  |
| պի ննէր  | պի ննէին  | պի հասնէր  | պի հասնէին  |

### վաղակատար

|         |          |          |           |
|---------|----------|----------|-----------|
| ննէր իմ | ննէր ինք | հասէր իմ | հասէր ինք |
| ննէր էս | ննէր էք  | հասէր էս | հասէր էք  |
| ննէր է  | ննէր ին  | հասէր է  | հասէր ին  |

### անցյալի վաղակատար

|          |           |           |            |
|----------|-----------|-----------|------------|
| ննէր էի  | ննէր էանք | հասէր էի  | հասէր էանք |
| ննէր էիր | ննէր էիք  | հասէր էիր | հասէր էիք  |
| ննէր էր  | ննէր էին  | հասէր էր  | հասէր էին  |

### հարակատար

|          |           |          |           |
|----------|-----------|----------|-----------|
| ննյաձ իմ | ննյաձ ինք | հասաձ իմ | հասաձ ինք |
| ննյաձ էս | ննյաձ էք  | հասաձ էս | հասաձ էք  |
| ննյաձ է  | ննյաձ ին  | հասաձ է  | հասաձ ին  |

### անցյալի հարակատար

|           |            |           |            |
|-----------|------------|-----------|------------|
| ննյաձ էի  | ննյաձ էանք | հասաձ էի  | հասաձ էանք |
| ննյաձ էիր | ննյաձ էիք  | հասաձ էիր | հասաձ էիք  |
| ննյաձ էր  | ննյաձ էին  | հասաձ էր  | հասաձ էին  |

### անցյալ կատարյալ

|        |         |       |        |
|--------|---------|-------|--------|
| ննէցա  | ննէցանք | հասա  | հասանք |
| ննէցար | ննէցաք  | հասար | հասաք  |
| ննէցալ | ննէցան  | հասար | հասան  |

## Հրամայական եղանակ

նախ—նախէջէ՛ք

հասի՛ր—հասէ՛ք

Այսպես են խոնարհւում և դերբայների այսպիսի կազմութուն ունեն պարզ բայերից՝ խօսիլ, ծըռիլ, ծընիլ, պանիլ, տադիլ, պըշկիլ, ազադիլ, կըռվիլ, օկնիլ (հոգնել), աբրիլ, հարցագիլ, հավնիլ, մըշիլ, տէղնիլ, սէվագնիլ, կըլօրիլ, հանդըբիլ, գըղվիլ, շուլլըվիլ (մագլցել), կըռիլ (կրավորական իմաստով), խափանիլ, քըրդնիլ, պակսիլ, շօթիլ, և այլն. ածանցավոր բայերից՝ չ, վ, ալօր ածանցներով բայերը՝ թըռչիլ, փախչիլ, փըլչիլ, համօզվիլ, նէղվիլ, պաժնըվիլ, փըռվիլ, կըղզըվիլ, կոշվիլ (փոխադրվել), ուռէսֆօրիլ, պօխշավօրվիլ և այլն, և ածանցով բայերից՝ մէռնիլ, հաղնիլ, պուսնիլ, հաքնիլ, ասնիլ և այն բոլոր ածանցավոր ու անածանց բայերը, որոնք ունեն կրավորական և շեղոք սեռի իմաստ. կարմըրդգիլ, պաղըշկիլ, ճըլդօրիլ (կազդուրվել), մարմըրիլ, պաքֆըդիլ, սըքֆիլ, հաքֆիլ և այլն:

## Ա. լծորդության բայեր

անածանց բայ  
վըլալ (լվանալ)

ածանցավոր բայ  
մօղէնալ

### Դերբայներ

անորոշ՝ վըլալ, մօղէնալ  
վաղակատար՝ վըլացէր, մօղէցէր  
հարակատար՝ վըլացած, մօղէցած  
ենթակայական՝ վըլացօղ, մօղէցօղ  
ժխտման՝ վըլար, մօղէնար  
ընթացակցական՝ վըլալէն

## Ըղծական եղանակ

### ապառնի

|       |        |         |          |
|-------|--------|---------|----------|
| վըլամ | վըլանք | մօղէնամ | մօղէնանք |
| վըլաս | վըլաք  | մօղէնաս | մօղէնաք  |
| վըլա  | վըլան  | մօղէնա  | մօղէնան  |

### անցյալի ապառնի

|        |          |          |            |
